



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 130 2022

ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գևորգ Բաղդասարյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դոցենտ (գլխավոր խմբագիր)

Արմեն Մարուխյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան ԵՊՀ պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Հովհաննես Սյրեփանյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Դավիթ Մելքոնյան իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Արթուր Չախոյան ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.) ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Գլխավոր խմբագրի հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-640
Էլ. հասցե՝ ashot@yessayan.am
orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

Հանձնված է արտադրության՝ 25.07.2022թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 6.75 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

© Համակարգչային շարվածքը, ոճը, տառաձևերը և էջադրումը՝ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Геворг Исраелян Проблемы предупреждения латентности траффинга 3

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արթուր Ղամբարյան Իրավունքի իրականացման սահմանափակումը՝ որպես քրեադատավարական սանկցիա (գիտագործնական մեկնաբանություններ) 7

Գայանե Մելիքյան Հանձնման ինստիտուտի պատմական զարգացումը և հիմնական սկզբունքները 21

Մարիամ Բաղդասարյան Առանձին դաժանության դրսևորումը վկայող այլ հանգամանքները որպես սպանության օբյեկտիվ կողմի հատկանիշ 28

Նոննա Մանուկյան Համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագրի էությունը, ինչպես նաև տեղը քրեական և քրեադատավարական օրենսդրության մեջ 40

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գայանե Մարուքյան Ֆրանչայզինգի պայմանագրի էությունը 44

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Նորիկ Շահնազարյան Ժամանակակից սահմանադրության հասկացությունը և առանձնահատկությունները 47

Նորայր Ստեփանյան Արդարադատության գաղափարների դոկտրինալ հիմնավորումը 52

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գառնիկ Սաֆարյան, Հայկ Շահբազյան Օբյեկտիվ իրավունքի և սուբյեկտիվ իրավունքի ընկալման և դրանց փոխհարաբերակցության շուրջ 57

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Арсен Кахкцян Теория военного права в системе образования Республики Армении 61

ՄԱՔՍԱՑԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սյուզաննա Վարդանյան «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների փոխադրման դեպքում փոխադրողի և առաքողի (էքսպեդիտորի) պարտականությունները 67

ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts 73

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները 88

ГЕВОРГ ИСРАЕЛЯН

Советник ректора Академии юстиции,
преподаватель Международного университета Евразия,
кандидат юридических наук, доцент

ПРОБЛЕМЫ ПРЕДУПРЕЖДЕНИЯ ЛАТЕНТНОСТИ ТРАФФИКИНГА

1. Введение

Траффикинг относится к тем преступлениям, которые характеризуются высокой латентностью¹. Следовательно, необходимо особое внимание уделять исследованию причин и последствий латентности траффикинга, что позволит разработать меры профилактического воздействия на латентность данного негативного явления и обеспечить ее результативное предупреждение.

Актуальность данного исследования обусловлено тем, что проблема предупреждения латентности траффикинга мало изучена.

Цель данного исследования – формулировка предложений по разработке мер, направленных на предупреждения латентности траффикинга.

Исходя из иерархии причин латентности траффикинга, предлагаем меры по предупреждению латентности траффикинга разделить на следующие виды:

- общие меры, направленные на предупреждение латентности траффикинга;
- меры, направленные на предупреждение естественной латентности траффикинга;
- меры, направленные на предупреждение искусственной латентности траффикинга.

2. Основное исследование

2.1. Общие меры, направленные на предупреждение латентности траффикинга

Как отмечает П.А. Кривенцов, общие меры, направленные на предупреждение латентности включают в себя:

- 1) Повышение общего уровня правосознания

всего населения, включая сотрудников правоохранительных органов, с использованием организационных, просветительских и управленческих мер, которые будут способствовать процессам формирования гражданского общества и повышению уровня социальной активности населения. Правосознание должно стать важнейшим регулятором общественных отношений, ведь на основе правовых установок и ценностных ориентаций, сопоставления своего поведения с правовыми нормами осуществляется регулятивная функция правосознания, возникает побуждение к правомерному или противоправному поведению. Одна из задач права в том, чтобы сформировать в сознании человека уважение к правопорядку, правоохранительным органам, правосудию, потребность обращения к ним за защитой своих прав, отказ от использования противозаконных, в т.ч. силовых средств разрешения конфликтов. Это должно стимулировать граждан при наличии у них информации о совершенном преступлении, передать ее в правоохранительные органы. Важно отметить, что правосознание отнюдь не сводится к верному знанию права, можно знать право, однако при этом быть правовым нигилистом. Каждое лицо должно желать исполнения закона, так как закон создан для защиты прав и свобод всех граждан. Отношение к праву должно формироваться не как к набору правил поведения, а как к благу для каждого, требующему защиты. Несообщение о преступлении должно оцениваться как аморальное, антиобщественное по-

¹ См.: Тюруканова Е.В. Торговля людьми в Российской Федерации. Обзор и анализ текущей ситуации по борьбе. М., 2006 // https://www.un.org/ru/rights/trafficking/human_trafficking_russia.pdf, Орелан А. Противодействие торговле людьми из Украины: выявление, возвращение и оказание помощи пострадавшим // https://www.icmpd.org/file/download/48145/file/Policy%20Brief_%20Countering%20Human%20Trafficking_%20Identifying_%20Returning%20and%20Assisting%20Victims%20from%20Ukraine%20RUS.pdf (последний визит: 20.04.2022).

ведение, ведь в этом случае правовые нормы не могут регулировать общественные отношения. Это приводит к росту латентности, самодетерминации траффикинга;

2) Построение правовой идеологии, в которой соблюдение прав и свобод человека, а также их защита должна быть высшей ценностью. Правовая идеология – это систематизированное научное выражение правовых взглядов, принципов, требований общества, классов, различных групп и слоев населения. Правовая идеология это некий ориентир, к которому следует стремиться. Надо отметить, что без достаточно высокого уровня правосознания никакая правовая идеология не будет действенной, если нет идеологии – рост правосознания существенно ограничен. Правосознание и идеология не могут существовать опосредованно;

3) Создание и развитие социального контроля со стороны общества за своими членами, социальными группами, государственными органами. Социальный контроль – это процесс, при помощи которого общество, социальные единицы определяют правильны ли их действия или решения, нуждаются ли они в коррекции. Применение социального контроля может положительно сказаться на правосознании и моральном состоянии общества, в котором несообщение о преступлении будет осуждаться общественностью (что непосредственно повлияет на естественную латентность). Социальный контроль включает систему методов, с помощью которых индивид согласовывает свое поведение с социальными требованиями и ожиданиями окружающих, а общество оценивает и регулирует различные сферы своей жизнедеятельности. Видится правильным распространение социального контроля и на органы правопорядка с целью контроля за законностью и обоснованностью решений должностных лиц в процессе рассмотрения заявлений и иных сообщений о преступлениях. Это в перспективе может существенно снизить искусственную латентность преступности, в частности траффикинга;

4) Искоренение убежденности в безнаказанности правонарушителей. Следует отметить, что данная проблема непосредственно влияет на уровень правосознания и правовой культуры населения. При этом требуется взаимодействие с представителями СМИ, которые нередко сами и формируют такое мнение, искажая конкретные факты, характеризующие деятельность правоохранительных органов, манипулируя соответствующей информацией ради «сенсационных заявлений» и собственного рейтинга².

2.2 Меры предупреждения естественной латентности траффикинга

В данном направлении, прежде всего, следует отметить необходимость стимулирования граждан взаимодействовать с правоохранительными органами в сфере противодействия преступности. Возникает вопрос, как стимулировать (побудить) граждан обращаться в правоохранительные органы, если они стали свидетелями или потерпевшими от преступлений. В этих целях, прежде всего, необходимо устранить такую причину не обращения граждан в правоохранительные органы, как боязнь мести со стороны преступника или его семьи, родственников, друзей. Для эффективного воздействия на латентность траффикинга должен быть разработан правовой акт по следующим направлениям:

- следует провести масштабную кампанию по информированию граждан о существовании и развитии программы защиты потерпевших и свидетелей, предусмотренной соответствующим законодательством;
- для успешного создания и функционирования программы по защите свидетелей и жертв преступлений требуется серьезная профессиональная подготовка сотрудников правоохранительных органов;
- содействие жертвам и свидетелям должно содержать не только материальную, но и психологическую помощь, моральную поддержку³.

² См.: Кривенцов П.А. Латентная преступность в России; криминологическое исследование. Дисс. ...канд. юрид. наук. М., 2014. С. 128-130.

³ Там же.

Минимизация естественной латентности преступности может быть связана и с нейтрализация такого фактора, как необращение граждан в правоохранительные органы по разным причинам. В этих целях необходимо развернуть целенаправленную правовую пропаганду с использованием возможностей различных медиа⁴. Формирование социально-политической активности, чувства ответственности граждан за состояние криминологической ситуации в стране предполагает убеждение их в необходимости своевременного сообщения в компетентные государственные органы обо всех совершенных и готовящихся преступлениях. У граждан под воздействием такой пропаганды должно формироваться убеждение в том, что сокрытие информации о преступлениях против их интересов и интересов других людей, общества, государства объективно способствует формированию у преступников стойкой антисоциальной направленности и уверенности в возможности продолжения их преступной деятельности, что чревато многими негативными, в том числе и тяжкими последствиями. Так, это ведет к усилению самодетерминации, эскалации траффинга. В этих целях необходимо общее повышение уровня правосознания и правовой культуры населения, укрепление авторитета правоохранительных органов (для искоренения тотального неверия в их возможности раскрытия преступлений, особенно малозначительных), обеспечение их взаимодействия с населением. Особенно значимо информирование граждан о мерах противодействия конкретным проявлениям траффинга. Полиция, школа, различные муниципальные образования и коммерческие предприятия должны участвовать в повышении уровня правосознания, сотрудничать между собой в целях выявления и сдерживания преступлений. Для решения этого вопроса необходима система мер, в которой будут задействованы как сами граждане, так и сотрудники правоохранительных органов. При этом следует

иметь в виду, что любая пропаганда в медиа, без реальной активизации борьбы с преступностью, лишь ухудшит отношение граждан к правоохранительным органам. Следовательно, должны сочетаться меры по повышению эффективности деятельности правоохранительных органов и информированию населения о ней. В результате этого дистанция между полицией и населением должна сократиться. Наряду с этим необходима серьезная просветительская деятельность со стороны правоохранительных органов, которая способствовала бы повышению уровня правовой грамотности граждан, позволяющей дать правильную правовую оценку преступным посягательствам на их права. Такая деятельность могла бы осуществляться через пресс-центры правоохранительных органов по связям с общественностью, а также путем распространения интернет и печатной продукции по правовой тематике, проведения встреч и бесед в трудовых коллективах, учебных заведениях. При таком подходе возможен и иной положительный эффект, заключающийся в более глубоком и полном осмыслении сотрудниками правоохранительных органов потребностей и проблем общества, решение которых способствовало бы и предупреждению латентности траффинга⁵.

Таким образом, основные направления предупреждения естественной латентности связаны:

- 1) с развитием и совершенствованием специального института помощи свидетелям и потерпевшим от преступлений, разработкой условий и методов их информирования о возможности получения правовой, медицинской, материальной, социальной и психологической помощи, что может положительно повлиять на снижение латентности преступности;
- 2) с обеспечением необходимого сотрудничества граждан с правоохранительными органами, например материальное поощрение граждан за сообщение о важной для расследования

⁴ См.: Իսրայելյան Գ., Մկրտիչյան Ա., Մեդիայի դերը Հայաստանի Հանրապետությունում բնական լատենտային հանցավորության կանխարգելման կազմակերպման գործում // Բանբեր Արդարադատության ակադեմիայի, № 3 (1), 2020. Շ. 58-62.

⁵ См.: Кривенцов П.А., указ. соч., С. 133-135, Իսրայելյան Գ.Վ., Քրեաբանություն: Ընդհանուր դրույթներ: Ոստանական ձեռնարկ /Գ.Վ. Իսրայելյան. – Եր.: Հեղ. հրատ., 2020. Շ. 133-135.

информации. С этой целью гражданам должны быть предоставлены широкие возможности обращаться за помощью к работнику полиции (близость полицейских постов, удобство транспортного сообщения и связи);

3) с совершенствованием механизма взаимодействия с лицами, заявляющими о преступлениях;

4) с осуществлением деятельности, направленной на повышение доверия граждан к правоохранительным органам, усилением их социальной и правовой защиты⁶.

Профилактическое воздействие будут иметь так же:

1) совершенствование законодательства и в частности, внесением в нормативно-правовые акты норм, обязывающих граждан сообщать в правоохранительные органы о преступлениях, например, предусмотреть административную ответственность за несообщение о преступлении;

2) использование телефонов доверия для передачи информации о совершенных преступлениях, что позволит сообщать о преступлении лицам, желающим избежать огласки события преступления;

3) проведение регулярных обзоров виктимизации населения с помощью социологических опросов и разработка на этой основе специальных планов дальнейшей работы правоохранительных органов⁷.

2.3. Меры предупреждения искусственной латентности траффинга

К мерам предупреждения искусственной латентности траффинга можно отнести:

1) решение проблемы перегрузки работой сотрудников правоохранительных органов, которые просто не в состоянии надлежащим об-

разом проверять все сообщения о преступлениях;

2) обеспечение достаточной материальной и технической базой сотрудников правоохранительных органов;

3) предупреждение случаев по указанию руководства правоохранительных органов о необходимости сокращения числа регистрируемых преступлений;

4) исключение оценки качества правоохранительной деятельности по раскрываемости;

5) обеспечение высокой профессиональной подготовки сотрудников правоохранительных органов;

6) предупреждение халатного отношение сотрудников правоохранительных органов к своей работе, вызванное ленью, либо другими обстоятельствами;

7) предупреждение коррупционных мотивов сокрытия преступлений среди сотрудников правоохранительных органов;

8) предупреждение пассивности правоохранительных органов в обнаружении подготавливаемых и совершенных преступлений⁸ и т.д.

3. Заключение

Таким образом, для разработки мер профилактического воздействия на латентность траффинга и обеспечения результативного предупреждения латентности данного негативно-опасного явления следует разграничивать общие меры предупреждения латентности траффинга, меры предупреждения естественной латентности траффинга и меры предупреждения искусственной латентности траффинга. В случае реализации мер, указанных в данной статье, представится возможным обеспечения предупреждение латентности траффинга.



⁶ См.: Кривенцов П.А., указ. соч. С. 136-137.

⁷ Там же.

⁸ См.: Իսրայելյան Գ.Վ., Հարությունյան Ա.Ս., Լատենտային հանցավորության կանխարգելման արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Մենագրություն /Գ.Վ. Իսրայելյան, Ա.Ս. Հարությունյան. – Եր.: Հեղ. հրատ., 2021. Ս. 48-49, 72-74.

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԶՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՍԱՆԿՑԻԱ (ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

Ընդհանուր դրույթներ: ՀՀ քր. դատ. օր-ի 143-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավունքի իրականացման սահմանափակումը վարույթի մասնակցի կամ վկայի՝ որոշակի իրավունքների, սույն օրենսգրքով սահմանված պարբերաբար չարաշահման դեպքում համապատասխան որոշմամբ դրանց իրականացման համար ժամանակային կամ քանակական պայմանների սահմանումն է:

Այս դատավարական սանկցիան կարող է կիրառվել միայն հետևյալ իրավունքները պարբերաբար չարաշահելու դեպքում. 1) միջնորդություն հարուցելը. 2) բացարկ հայտները. 3) վարույթի նյութերին կցելու և հետազոտելու համար ապացույցներ ներկայացնելը. 4) վարույթի նյութերին ծանոթանալը և դրանցից ցանկացած տեղեկություն դուրս գրելը. 5) բացման խոսքով, եզրափակիչ ելույթով կամ եզրափակիչ հայտարարությամբ հանդես գալը. 6) պաշտպանից հրաժարվելը, 7) պաշտպանի լիազորությունները դադարեցնելը:

Իրավունքի իրականացման սահմանափակումը կարող է կիրառվել նաև վարույթային գործողությանը նույն անձի մի քանի պաշտպանի, լիազոր ներկայացուցչի կամ փաստաբանի ներկայանալու դեպքում: Այդ դեպքում իրավունքի իրականացման սահմանափակումը դրսևորվում է տվյալ վարույթային գործողությանը մասնակցելու հնարավորություն տալով ոչ բոլոր պաշտպաններին, լիազոր ներկայացուցիչներին կամ փաստաբաններին:

Գիտագործնական մեկնաբանություններ

1. Դատավարական այս սանկցիան կոչված է ապահովելու ոչ իրավաչափ վարքագծի անթույլատրելիության (իրավունքի չարաշահման արգելքի) սկզբունքը, ըստ որի՝ արգելվում է իրավունքների չարաշահումը, որը վնաս է հասցնում այլ անձանց կամ արդարադատության շահերին (ՀՀ քր. դատ. օր-ի 29-րդ հոդվածի 2-րդ մաս): Համատեսական առումով՝ իրավունքի չարաշահումը իրավական վարքագծի ինքնուրույն տեսակ է, որի դեպքում անձն օգտագործում է իր սուբյեկտիվ իրավունքը ի վնաս այլ անձանց, հասարակության և պետության շահերի¹: Դատավարական սուբյեկտիվ իրավունքների իրականացման սահմանափակման (այսուհետ՝ դատավարական իրավունքների սահմանափակման) միջոցի (սանկցիայի) կիրառման փաստական հիմքը դատավարական իրավունքների չարաշահումն է:

1.1. Դատավարական իրավունքի չարաշահումն առկա է, եթե վարույթի մասնակիցն իրավունքն իրականացնում է ոչ թե այդ իրավունքի նպատակին համապատասխան, այլ անձանց կամ արդարադատության շահերին վնաս հասցնելու նպատակով: ՀՀ քր. դատ. օր-ի 141-րդ հոդվածի 1-ին մասում խոսվում է նաև վարույթի բնականոն ընթացքը խոչընդոտելու մասին, որը ՀՀ քր. դատ. օր-ի 29-րդ հոդվածի 2-րդ մասում օգտագործվող՝ արդարադատության շահերին վնասող արարքի մասնավոր դրսևորումներից է:

1.2. Դատավարական իրավունքի սահմանափակումը իրավաչափ է, եթե իրավունքի չա-

¹ Պետության և իրավունքի տեսություն: Հեղ. խումբ: Գիտ. խմբ՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան. 3-րդ լրամշակված հրատ. Եր.: 2018, Մուրադյան Մ. Դատավարական իրավունքի չարաշահման հիմնախնդիրը քրեադատավարական օրենսդրության բարեփոխումների լույսի ներքո: Օրենքի պատվար, 2019, № 07, էջեր 36-57:

րաշահումը կատարվել է պարբերաբար: Իրավունքի չարաշահման պարբերականությունը վերաբերում է միևնույն դատավարական իրավունքի ոչ իրավաչափ իրականացմանը: Օրինակ՝ վարույթի մասնակիցը պարբերաբար չարաշահում է միջնորդություն հարուցելու իրավունքը (նույն կամ նմանաբնույթ հիմնավորումներով մի քանի անգամ ներկայացնում է միջնորդություն): Կոնկրետ իրավունքի չարաշահման պարբերականության պայմանը բացակայում է, եթե վարույթի մասնակիցը չարաշահել է, օրինակ, միջնորդություն հարուցելու իրավունքը, այնուհետև՝ չարաշահում է բացարկ հայտնելու իրավունքը²:

Սույն հոդվածի հմաստով «պարբերաբար» եզրույթի ընկալումը կախված է կոնկրետ դատավարական իրավունքի էությունից և դրա սահմանափակման պայմաններից:

1.2.1. Եթե դատավարական իրավունքի էությունն այնպիսին է, որ դրա սահմանափակումը ենթադրում է քանակական պայմանների սահմանում, ապա չարաշահման պարբերականությունը նշանակում է, որ վարույթի մասնակիցը երկու և ավելի անգամ կոնկրետ իրավունքները իրականացարել է այլ անձանց օրինական շահերը կամ վարույթի բնականոն ընթացքը խաթարելու նպատակով: Օրինակ՝ պաշտպանից հրաժարվելու իրավունքը երկու և ավելի անգամ չարաշահելը՝ վարույթի բնականոն ընթացքը խաթարելու նպատակով:

1.2.2. Եթե դատավարական իրավունքի

էությունն այնպիսին է, որ դրա սահմանափակումը ենթադրում է ժամանակային պայմանների սահմանում, ապա չարաշահման պարբերականությունը նշանակում է, որ վարույթի մասնակիցը, այլ անձանց օրինական շահերը կամ վարույթի բնականոն ընթացքը խաթարելու նպատակով, իր իրավունքն իրականացնում է տևական կերպով: Օրինակ՝ վարույթի մասնակիցը եզրափակիչ ելույթով հանդես գալու իրավունքը, վարույթի բնականոն ընթացքը խաթարելու նպատակով, իրականացնում է տևականորեն (վարույթին չառնչվող հանգամանքներ ներկայացնելով): Այս դեպքում պարբերականությունն առավել ցայտուն է դառնում, եթե վարույթն իրականացնող մարմինն ընդհատում է եզրափակիչ ելույթով հանդես գալը, սակայն անձն այդ իրավունքի իրականացումը **շարունակում է** չարաշահման ձևով:

1.2.3. Իրավունքի չարաշահման պարբերականությունը որոշելը բարդություն չի ներկայացնում, երբ նմանաբնույթ արարքները մի քանի անգամ կատարում է (պարբերաբար չարաշահում է) միևնույն մասնակիցը, սակայն հարցը բարդանում է, երբ վարույթին մասնակցում են մի քանի մեղադրյալներ, պաշտպաններ (լիազոր ներկայացուցիչներ) և նրանք միևնույն դատավարական իրավունքը ոչ իրավաչափ նպատակով (իրավունքի նպատակին հակառակ) օգտագործում են առանձին-առանձին: Այս իրավիճակում պետք է պարզել, թե արդյոք հնարավոր է մի քանի մասնակցի (խմբի)

² Պարբերականության տեսանկյունից իրավունքի չարաշահման առարկայի (սուբյեկտիվ իրավունքների) հարցի վերաբերյալ առկա է թյուրըմբռնում: Առանձին իրավաբաններ կարծում են, որ իրավունքի չարաշահման պարբերականությունն առկա է նաև տարբեր իրավունքների չարաշահման դեպքում, օրինակ՝ վարույթի մասնակիցը մի դեպքում չարաշահում է միջնորդություն հարուցելու իրավունքը, այնուհետև՝ բացման խոսքով հանդես գալու իրավունքը: Նման մեկնաբանությունը վտանգավոր է ոչ միայն մարդու իրավունքների սահմանափակման սահմանադրական կարգավորումների և ՀՀ քր. դատ. օր-ի 143-րդ հոդվածի 4-րդ մասի տեսանկյուններից, այլև կարող է գործնականում առաջացնել այն հարցը, թե պարբերաբար տարաբնույթ իրավունքները չարաշահելու դեպքում վարույթն իրականացնող մարմինը ո՞ր իրավունքը պետք է սահմանափակի:

Դոկտրինում այս հարցի վերաբերյալ դեռևս հստակ պատասխան տրված չէ: Օրինակ՝ որոշ դատավարագետներ նշում են. «Իրավունքների իրականացման սահմանափակում դատավարական սանկցիան կարող է կիրառվել վարույթի մասնակցի կամ վկայի նկատմամբ որոշակի իրավունքների պարբերաբար չարաշահման դեպքում (օրինակ՝ մեղադրյալի կողմից վարույթի նյութերին ոչ ողջամիտ տևողությամբ ծանոթանալը կամ վկայի կողմից մեկ տասնյակից ավելի փաստաբաններով հարցաքննության ներկայանալը)»: Դուկասյան Հ., Հարությունյան Ա. Դատավարական սանկցիաների կիրառման առանձնահատկություններն ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի // Պետություն և իրավունք, 2016, № 2 (72), էջ 132: Այս դատողությունը քննարկվող հարցում որոշակիություն չի մտցնում: Կարելի է արդյոք ենթադրել, որ «կամ» շաղկապ գործածելով՝ հեղինակները նկատի են ունեցել, որ պարբերաբար կարող է չարաշահվել միևնույն իրավունքը՝ կամ նյութերին ոչ ողջամիտ տևողությամբ ծանոթանալու իրավունքը, կամ հարցաքննությանը մեկ տասնյակից ավելի փաստաբաններով ներկայանալու իրավունքը: Ընդ որում՝ մի քանի փաստաբաններով հարցաքննությանը ներկայանալու իրավունքի չարաշահման դեպքում օրենսդիրը ողջամտորեն պարբերականություն չէր կարող պահանջել:

կողմից իրավունքը պարբերաբար չարաշահելու: Օրինակ՝ մեղադրյալը ունի մի քանի փաստաբան, և նրանք նույն կամ նման փաստաբաններ և իրավական որակմամբ (նմանաբնույթ) միջնորդություններ հարուցում են առանձին-առանձին: Այսպես՝ «Ա» փաստաբանը հարուցում է միջնորդություն, վարույթն իրականացնող մարմինն այն մերժում է, որից հետո նմանաբնույթ միջնորդություն է հարուցում «Բ» փաստաբանը:

Որպեսզի վարույթն իրականացնող մարմինը «Ա» և «Բ» փաստաբանների նկատմամբ կիրառի քննարկվող սանկցիան, պետք է կատարի հետևյալ գործողությունները:

Նախ՝ ցանկալի է, որ վարույթն իրականացնող մարմինը, մասնակիցների ընդհանուր իրավունքները և պարտականություններն պարզաբանելիս, նաև հայտնի, որ որևէ միջնորդությունը լուծելուց հետո այլ մասնակցի կողմից նմանաբնույթ միջնորդություն ներկայացնելը կարող է որակվել իրավունքի չարաշահում և հանգեցնել իրավունքների սահմանափակմանը (մինչդատական վարույթում դա հնարավոր է գրավոր պարզաբանման ձևով, իսկ դատական վարույթում՝ նաև բանավոր):

Երկրորդ՝ կոնկրետ դեպքում «Ա» փաստաբանի կողմից միջնորդություն ներկայացնելուց հետո, վարույթն իրականացնող մարմինը պետք է պարզի միջնորդության վերաբերյալ մյուս մասնակիցների դիրքորոշումը, թե արդյոք նրանք միանում են ներկայացված միջնորդությանը (սա գործնականում հնարավոր է առավելապես դատական վարույթի ընթացքում, իսկ մինչդատական վարույթի ընթացքում՝ վարության գործողություններին մի քանի մասնավոր անձի մասնակցության դեպքում):

Երրորդ՝ եթե այնուամենայնիվ «Բ» փաստաբանը կրկին ներկայացնի նմանաբնույթ միջնորդությունը, ապա վարույթն իրականացնող մարմինը պետք է պարզի, թե արդյոք փաստաբանները գործում են միասնական դիրքորոշմամբ, արդյոք վարույթի մյուս մասնակիցները միացել են «Ա» փաստաբանի միջնորդությանը, հետևապես՝ նրանց արարքներում արդյոք առկա է պարբերականություն: Բանն այն է, որ «Ա» և «Բ» փաստաբանների կողմից առանձին-առանձին միջնորդություններ հարուցելը ինքնին իրավաչափ արարք է (պարբերակա-

նությունը բացակայում է): Ուստի, փաստաբանների՝ առանձին-առանձին կատարած արարքները կարող են որակվել միևնույն իրավունքի **պարբերաբար** չարաշահում, եթե վարույթն իրականացնող մարմինը հիմնավորի, որ նրանք իրավունքը չարաշահելիս գործել են որպես խումբ, այսինքն՝ գործել են միասնական դիրքորոշմամբ (միասնական տակտիկայով և քայլերի փոխհամաձայնեցմամբ):

Ճիշտ է՝ պոզիտիվ իրավական տեսանկյունից պաշտպանները չունեն փոխհամաձայնեցված գործելու կամ միասնական տակտիկայով հանդես գալու ընդհանուր պարտականություն, սակայն դատավարական իրավունքները միասնական դիրքորոշմամբ պարբերաբար չարաշահելու հանգամանքը կարող է ապացուցվել կոնկրետ գործի փաստական տվյալներով: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վարույթն իրականացնող մարմինը հարցադրումներով կամ այլ փաստական տվյալներ ձեռք բերելով պետք է պարզի, թե «Ա» փաստաբանի միջնորդությունը մերժելուց հետո «Բ» փաստաբանը ինչ հարցով է և հիմնավորմամբ է ցանկանում միջնորդություն հարուցել, արդյոք նա տեղյակ է, որ «Ա» փաստաբանը նույն հարցով նախկինում հարուցել է նման միջնորդություն, որը մերժվել է: Օրինակ՝ եթե «Բ» փաստաբանը մասնակցել է դատական նիստին կամ վարության գործողությանը, որի ընթացքում «Ա» փաստաբանը ներկայացրել է միջնորդություն, կամ եթե «Բ» փաստաբանը միացել է «Ա» փաստաբանի միջնորդությանը, ապա ինքնին պարզ է, որ նա տեղյակ է միջնորդություն հարուցելու մասին: Վարույթն իրականացնող մարմինը «Ա» և «Բ» փաստաբանների՝ միջնորդություն հարուցելու իրավունքի չարաշահման հարցում ունեցած դիրքորոշումների միասնականությունը պարզելու համար նույն տրամաբանությամբ հարցադրումներ պետք է կատարի նաև «Ա» փաստաբանին:

Եթե փաստական տվյալներից ակնհայտ է, որ վարույթի մասնավոր մասնակիցները միասնական դիրքորոշմամբ ցանկանում են պարբերաբար չարաշահել միջնորդություն հարուցելու իրավունքը (տարբեր մասնակիցներ հետապնդում են նմանաբնույթ միջնորդություններ պարբերաբար ներկայացնելու ոչ իրավաչափ նպատակ), ապա «Բ» փաստաբանի կող-

մից երկրորդ անգամ հարուցված միջնորդությունը լսելուց հետո վարույթն իրականացնող մարմինը որոշում է կայացնում այն առանց քննության թողնելու մասին (ՀՀ քր. դատ. օր-ի 154-րդ հոդվածի 7-րդ մաս), այնուհետև՝ որոշում է վարույթի մասնակիցների կողմից այդ փուլում նմանաբնույթ միջնորդություն ներկայացնելու իրավունքը սահմանափակելու մասին:

Այս մոտեցումն առաջին հայացքից կարող է խորթ թվալ, եթե այն դիտարկվի «իրավախախտում-իրավաբանական պատասխանատվություն» շղթայի լույսի ներքո: Բանն այն է, որ անձը կարող է ենթարկվել իրավաբանական պատասխանատվության, եթե նա կատարել է կոնկրետ իրավախախտում, մինչդեռ վերը նկարագրված իրավիճակում վարույթի մյուս մասնակիցները, որոնց՝ նմանաբնույթ միջնորդություն ներկայացնելու իրավունքը սահմանափակվել է, միջնորդություն հարուցելու ուղղությամբ անմիջական գործողություններ չեն կատարել, ուստի տարօրինակ կարող է թվալ, թե ինչո՞ւ է նրանց նկատմամբ սանկցիա կիրառվում:

Իրականում կոնկրետ արարք չկատարած մասնակիցների՝ նմանաբնույթ հարցով միջնորդություն ներկայացնելու իրավունքի սահմանափակումը հակաիրավական կամ հակաօրինական չէ ստորև նշված պատճառաբանությամբ:

Նախ՝ իրավունքի չարաշահումը և իրավունքի սահմանափակումը դասական իմաստով իրավախախտում և իրավաբանական պատասխանատվություն չեն, ուստի այս պարագայում «իրավախախտում-իրավաբանական պատասխանատվություն» շղթայի տրամաբանությունը չի գործում: Հոգեբանական տիրույթում այս մտահոգությունը կվերանա, եթե վարույթն իրականացնող մարմինն իրավունքը սահմանափակելու մասին որոշման մեջ չօգտագործի «սանկցիա կիրառել» ձևակերպումը (անկախ նրանից, որ օրենսդիրն իրավունքի իրականացման սահմանափակումը որակել է որպես դատավարական սանկցիա):

Երկրորդ՝ «Բ» փաստաբանի ներկայացրած երկրորդ միջնորդությունը մերժելուց հետո վարույթի մյուս մասնակիցների՝ նմանաբնույթ հարցով կրկին միջնորդություն ներկայացնելու իրավունքի իրականացման սահմանափակումն արդարացվում է նրանց միասնա-

կան դիրքորոշումները կոնկրետ տվյալներով հիմնավորելու հանգամանքով, իրավունքը սահմանափակելու հեռանկարային (պրոսպեկտիվ) ուղղվածությամբ և կանխարգելիչ բնույթով, ինչպես նաև՝ իրավունքի իրականացումը սահմանափակելու մասին նորմերի նպատակաբանական մեկնաբանմամբ: Օրենսդիրը, ներգործության այս միջոցը նախատեսելով, հետապնդել է հետևյալ նպատակը. եթե վարույթի կոնկրետ փուլում և վարույթի մասնակիցների գիտությանը որևէ հարց քննարկվել և վարույթն իրականացնող մարմնի կողմից լուծվել է (միջնորդության լուծումը հետաձգվել է), ապա այդ փուլում այլ սուբյեկտի կողմից նմանաբնույթ հարց կրկին չպետք է բարձրացվի:

Եթե վերը նշված մեկնաբանման հիման վրա ձևավորվի դատական պրակտիկա, ապա ՀՀ բարձր դատարանները կարող են ընդունել միևնույն անձին ներկայացնող փաստաբանների կողմից դատավարական իրավունքները միասնական դիրքորոշմամբ չարաշահելու մասին իրավական կանխավարկած (ենթադրություն): Օրինակ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը կարող է ձևավորել հերքելի իրավական կանխավարկած այն մասին, որ միևնույն անձի շահերը ներկայացնող փաստաբանները (միևնույն կողմում հանդես եկող և նույնաբնույթ շահեր հետապնդող անձինք) դատավարական իրավունքների չարաշահման հարցում ունեն միասնական դիրքորոշում, այսինքն՝ ենթադրվում է, որ փաստաբանները, դատավարական իրավունքը չարաշահելիս, գործում են փոխհամաձայնեցված, քանի դեռ փաստաբանը չի ապացուցել, որ մյուս փաստաբանի արարքներն իրեն չէին կարող վերագրվել (կանխավարկածի հերքում):

Եթե, այնուամենայնիվ, վարույթի մի քանի մասնակցի դիրքորոշման միասնականությունը հնարավոր չէ ապացուցել, ապա վարույթի տարբեր մասնակիցների ներկայացրած նմանաբնույթ միջնորդությունները լսելուց հետո դրանք պետք է թողնել առանց քննության (ՀՀ քր. դատ. օր-ի 154-րդ հոդվածի 7-րդ մաս):

1.3. Իրավունքի իրականացման սահմանափակման դեպքում վարույթն իրականացնող մարմինը պատճառաբանված որոշմամբ սահմանում է այդ իրավունքների իրականացման համար ժամանակային կամ քանակական պայ-

մանները: Ժամանակային պայմանի օրինակ է, երբ վարույթի նյութերին ծանոթանալու իրավունքը չարաշահելուց հետո սահմանվում է վարույթի նյութերին ծանոթանալու վերջին օրը կամ եզրափակիչ ելույթով հանդես գալու առավելագույն ժամկետ: Քանակական պայմանի օրինակ է, երբ միջնորդություն հարուցելու իրավունքը երկրորդ անգամ չարաշահելուց հետո սահմանվում է նմանաբնույթ միջնորդություն ներկայացնելու արգելք:

Իրավունքի իրականացման ժամանակային կամ քանակական պայմաններից դուրս, «իրավունքների» իրականացմանը նմանվող փաստացի ցանկացած վարքագիծը համարվում է դատավարական խախտում: Վարույթն իրականացնող անձի կողմից իրավունքի սահմանափակման միջոցը կիրառելուց հետո, եթե վարույթի մասնակիցն այնուամենայնիվ խախտում է իրավունքի սահմանափակման ժամանակային կամ քանակական պայմանները, ապա դա, որպես իրավախախտում, պետք է առաջացնի նեգատիվ և պոզիտիվ հետևանքներ:

Նեգատիվ հետևանքն այն է, որ օրինակ, իրավունքի սահմանափակման քանակական պայմանի խախտմամբ միջնորդություն ներկայացնելը, խախտում թույլ տված անձի ակնկալած դատավարական և փաստական հետևանքներ չպետք է առաջացնի: Այս պարագայում ձևավորվում է իրավական ֆիկցիա, ըստ որի՝ իրավունքի սահմանափակման քանակական պայմանի խախտմամբ ներկայացված միջնորդությունը, որն իրականում գոյություն ունի, պետք է համարել **իրավաբանորեն** գոյություն չունեցող, իսկ գոյություն չունեցող միջնորդությունը քննարկման առարկա չի կարող դառնալ, դրա վերաբերյալ որևէ որոշում չի կարող կայացվել, բանավոր արված միջնորդությունը չի կարող արձանագրվել դատավարական փաստաթղթերում, միջնորդության հեղինակին որևէ կերպ չի կարող պատասխան ուղարկվել (չշփոթել՝ միջնորդությունն առանց քննության թողնելու հետ, որի դեպքում կայացվում է որոշում):

Պոզիտիվ հետևանքները երկուսն են: Նախ՝ վարույթն իրականացնող մարմինն այն պահից, երբ կգիտակցի, որ վարույթի մասնակիցը խախտում է իրավունքի սահմանափակման քանակական պայմանը, օրինակ՝ կրկին փորձում է ներկայացնել նույնաբնույթ միջնորդություն,

ապա պետք է արգելի (խափանի) վարույթի մասնակցին շարունակելու այդ գործողությունը: Երկրորդ՝ վարույթն իրականացնող մարմինը վարույթի մասնակցի վարքագիծը պետք է որակի որպես դատավարական խախտում (չշփոթել իրավունքի չարաշահման հետ) և միջոցներ ձեռնարկի դատավարական պատասխանատվության խիստ միջոցներ կիրառելու ուղղությամբ: Օրինակ՝ մինչդատական վարույթի ընթացքում, եթե փաստաբանը, որի նմանաբնույթ միջնորդություն ներկայացնելու իրավունքը սահմանափակվել է, երրորդ անգամ նմանաբնույթ միջնորդություն է ներկայացնում, ապա վարույթն իրականացնող մարմինը նրան նկատողություն է տալիս՝ հրահանգելով պահպանել իրավունքի սահմանափակման քանակական պայմանը (<< քր. դատ. օր-ի 142-րդ հոդված): Եթե վարույթին մասնակցող փաստաբանը (լիազոր ներկայացուցիչը կամ օրինական ներկայացուցիչը) շարունակում է չարամտորեն չկատարել իր պարտականությունը, այսինքն՝ ևս մեկ անգամ խախտում է իրավունքի սահմանափակման քանակական պայմանը (երեք անգամ դատավարական սանկցիայի ենթարկվելուց հետո), ապա կարող է հեռացվել վարույթից (<< քր. դատ. օր-ի 147-րդ հոդված): Դատական վարույթի ընթացքում նկատողությունից հետո, եթե մասնակիցը շարունակում է իրավախախտումը, ապա դատարանը, համաչափության սկզբունքը պահպանելով, կարող է տվյալ մասնակցին հեռացնել դատական նիստի դահլիճից (<< քր. դատ. օր-ի 144-րդ հոդված) կամ նրա նկատմամբ նշանակել դատական տուգանք (<< քր. դատ. օր-ի 146-րդ հոդված):

1.4. Իրավունքի սահմանափակումը կարող է կիրառվել վարույթի մասնակիցների և վկայի նկատմամբ:

1.4.1. «Վարույթի մասնակից» եզրույթի օրենսդրական բնորոշումը տրված չէ, ուստի այս հոդվածի իմաստով դրա ներքո պետք է հասկանալ նախ՝ վարույթի մասնավոր մասնակիցներին՝ մեղադրյալ, նրա օրինական ներկայացուցիչ, պաշտպան, տուժող, գույքային պատասխանող, տուժողի և գույքային պատասխանողի օրինական ներկայացուցիչ և լիազոր ներկայացուցիչ: Բանն այն է, որ սույն հոդվածում խոսք է գնում դատավարական սուբյեկ-

տիվ իրավունքների չարաշահման մասին, իսկ այդ իրավունքների կրողներն առաջին հերթին վարույթի մասնավոր մասնակիցներն են:

1.4.2. Վարույթի հանրային մասնակիցները մինչդատական վարույթի ընթացքում սուբյեկտիվ իրավունքների կրողներ չեն, նրանք օժտված են հանրային իրավական լիազորություններով, ուստի այդ կարգավիճակով չեն կարող համարվել դատավարական սուբյեկտիվ իրավունքի չարաշահման սուբյեկտ: Միակ բացառությունը դատական վարույթներն են, երբ հանրային մասնակիցները հանրային իրավական լիազորություններով օժտված անձանցից վերածվում են դատավարության կողմի: Օրինակ՝ ՀՀ քր. դատ. օր-ի 39-րդ հոդվածի (դատախազի լիազորությունները դատական վարույթի ընթացքում) վերտառության մեջ թեև գործածվում է «լիազորություն» հասկացությունը, սակայն նույն հոդվածի 1-ին մասում իրավացիորեն օգտագործվում է «իրավունք» եզրույթը, այսպես՝ դատական վարույթի ընթացքում դատախազն իրավունք ունի՝ 1) հայտնելու բացարկներ. 2) հարուցելու միջնորդություններ և այլն:

Դատական վարույթին մասնակցող քննիչը կամ դատախազը (հանրային մեղադրողը) հանդես են գալիս մեղադրանքի կողմում և մրցակցության սկզբունքի ուժով օժտված են պաշտպանության կողմի հետ հավասար դատավարական իրավունքներով: Դատական վարույթի ընթացքում, եթե քննիչը կամ դատախազը (հանրային մեղադրողը) պարբերաբար չարաշահում են մեկնաբանվող հոդվածում նշված դատավարական իրավունքները, ապա նրանք համարվում են այս վարքագծի սուբյեկտ, և նրանց նկատմամբ դատարանը կարող է կիրառել քննարկվող սանկցիան:

Իրավունքների չարաշահումը և իրավունքների սահմանափակումը պետք է տարբերել այն իրավիճակներից, երբ քննիչը օրենքով լիազորված է դատախազին ներկայացնել միջնորդություններ, սակայն դա իրականացնում է ոչ պատշաճ կերպով: Այսպես՝ քննիչը մինչդատական վարույթի ընթացքում հարկադրանքի միջոցներ կիրառելու (...) միջնորդություն է ներկայացնում դատարան կամ քրեական հետապնդում հարուցելու (...) միջնորդություն է ներկայացնում հսկող դատախազին (ՀՀ քր. դատ.

օր-ի 41-րդ հոդվածի 1-ին մաս): Թեև ՀՀ քր. դատ. օր-ի 41-րդ հոդվածի 1-ին մասում խոսվում է միջնորդություն ներկայացնելու մասին, սակայն այս դեպքում միջնորդություն ներկայացնելը ոչ թե քննիչի դատավարական սուբյեկտիվ իրավունքն է, այլ հանրային մասնակցի լիազորություն: Եթե քննիչն այդ լիազորությունն իրականացնում է ոչ պատշաճ կերպով (օրինակ՝ քրեական հետապնդում հարուցելու միջնորդությունը դատախազի կողմից մերժվելու դեպքում, քննիչը հաջորդ օրը նույն միջնորդություն է կրկին ներկայացնում դատախազին), ապա այն չի կարող որակվել որպես դատավարական իրավունքների չարաշահում և չի կարող համարվել մեկնաբանվող սանկցիայի կիրառման հիմք: Քննիչն այս դեպքում դատավարական սուբյեկտիվ իրավունքների (միջնորդություն հարուցելու իրավունքի) կրող չէ:

1.4.3. Օրենսդիրը վարույթին օժանդակող անձանցից սույն ոչ իրավաչափ արարքի սուբյեկտ է համարել միայն վկային, ուստի վարույթին օժանդակող մյուս անձինք՝ փորձագետը, թարգմանիչը, հոգեբանը, ընթերական, դատական նիստի քարտուղարը քննարկվող սանկցիայի տեսանկյունից իրավունքների չարաշահման սուբյեկտ չեն:

ՀՀ քր. դատ. օր-ի 58-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է վկայի իրավունքների ոչ սպառիչ ցանկը, որտեղ ՀՀ քր. դատ. օր-ի 143-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված դատավարական իրավունքներից որևէ մեկը տառացի ձևակերպմամբ նախատեսված չէ: Միայն ՀՀ քր. դատ. օր-ի 58-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում ամրագրված՝ վկայի մասնակցությամբ կատարված ապացուցողական և վարույթային այլ գործողության արձանագրությանը ծանոթանալու իրավունքն է, որն իր բնույթով նույնանում է մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում նշված՝ վարույթի նյութերին ծանոթանալու իրավունքի հետ:

Նկատի ունենալով, որ ՀՀ քր. դատ. օր-ի 58-րդ հոդվածի 1-ին մասում վկայի իրավունքները սպառիչ չեն, ուստի վկայի՝ սահմանափակման ենթակա իրավունքների ցանկի մեջ մտնող կամ համանման իրավունքները կարող են զետեղված լինել օրենսգրքի այլ հոդվածներում: Օրենսգրքի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ վկան հարցաքննության

ընթացքում կարող է վարույթի նյութերին կցելու և հետազոտելու համար ապացույցներ ներկայացնել: Վկայի այս հնարավորությունը՝ որպես դատավարական իրավունք, ուղղակի (էքսպլիցիտ) ձևակերպված չէ, այն դուրս է բերվում ՀՀ քր. դատ. օր-ի 233-րդ հոդվածի 3-րդ մասից, որի համաձայն՝ եթե առարկան կամ փաստաթուղթը ներկայացվում է այլ քննչական գործողության ընթացքում, ապա տեղեկությունները մտցվում են համապատասխան քննչական գործողության արձանագրության մեջ, իսկ տվյալ առարկան կամ փաստաթուղթը կցվում է այդ քննչական գործողության արձանագրությանը: Այսպիսով՝ վկայի նկատմամբ քննարկվող դատավարական սանկցիան կարող է կիրառվել, եթե նա չարաշահում է՝ 1) իր մասնակցությամբ կատարված ապացուցողական և վարույթային այլ գործողության արձանագրությանը ծանոթանալու իրավունքը: 2) հարցաքննության ընթացքում վարույթի նյութերին կցելու և հետազոտելու համար ապացույցներ ներկայացնելու իրավունքը:

Օրենքով նախատեսված չէ վկայի՝ փաստաբանից հրաժարվելու (լիազորությունները դադարեցնելու) իրավունք, սակայն նման հնարավորություն ակնհայտորեն ենթադրվում է: Վկայի՝ փաստաբանից հրաժարվելու իրավունքը (հնարավորությունը) նման է մեղադրյալի՝ պաշտպանից հրաժարվելու իրավունքին, սակայն ՀՀ քր. դատ. օր-ի 143-րդ հոդվածը օրենքի անալոգիայի կարգով չի կարող կիրառվել վկայի՝ փաստաբանից հրաժարվելու իրավունքի չարաշահման դեպքում, քանի որ մարդու իրավունքները սահմանափակող նորմն անալոգիայի կարգով չի կարող կիրառվել («Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մաս):

Մեկնաբանվող հոդվածի 3-րդ մասը հատուկ սահմանում է վկայի՝ մի քանի փաստաբանով վարույթային գործողություններին մասնակցելու իրավունքի սահմանափակման դեպքը (այս մասին հաջորդիվ):

2. Մեկնաբանվող հոդվածում սպառիչ ներկայացված է սահմանափակման ենթակա դատավարական իրավունքների ցանկը: Իրավունքի իրականացման սահմանափակումը չի կարող կիրառվել այդ ցանկում չնախատեսված իրավունքների դեպքում:

2.1. Սահմանափակման ենթակա դատավարական իրավունքները, կախված սահմանափակող պայմաններից, կարող են բաժանվել երեք խմբի.

1) դատավարական իրավունքներ, որոնք ենթակա են քանակական պայմանով սահմանափակման՝ վարույթի նյութերին կցելու և հետազոտելու համար ապացույցներ ներկայացնելու, պաշտպանից հրաժարվելու, պաշտպանի լիազորությունները դադարեցնելու, մի քանի փաստաբանի հետ ներկայանալու իրավունքները.

2) դատավարական իրավունքներ, որոնք ենթակա են ժամանակային պայմանով սահմանափակման՝ վարույթի նյութերին ծանոթանալու և դրանցից ցանկացած տեղեկություն դուրս գրելու, բացման խոսքով, եզրափակիչ ելույթով կամ եզրափակիչ հայտարարությամբ հանդես գալու իրավունքները.

3) դատավարական իրավունքներ, որոնք ենթակա են և՛ ժամանակային, և՛ քանակական պայմանով սահմանափակման՝ միջնորդություն հարուցելու և բացարկ հայտնելու իրավունքները:

Մեկնաբանվող հոդվածում գործածվում են միջնորդություն «հարուցել» ձևակերպումը, որը կարող է ընկալվել միայն որպես քանակական չափման ենթակա ակտ (միջնորդությունը ծագեցնելու ակտ), որից էլ կարող է տպավորություն ստեղծվել, որ այս իրավունքի սահմանափակումը հնարավոր է միայն քանակական պայման սահմանելով: Մինչդեռ միջնորդություն հարուցելը ոչ միայն քանակական, այլ նաև ժամանակային (տևողությամբ) չափման ենթակա ակտ է: Օրենսդրության համակարգային վերլուծությունից պարզ է դառնում, որ միջնորդություն «հարուցել» եզրույթին զուգահեռ օգտագործվում է նաև միջնորդություն «ներկայացնել» եզրույթը (օրինակ՝ ՀՀ քր. դատ. օր-ի 207-րդ, 272-րդ հոդվածներ), ուստի կարելի է եզրակացնել, որ միջնորդություն հարուցելը և ներկայացնելը օգտագործվում են նույն իմաստով: Միջնորդություն ներկայացնելն անկասկած ոչ միայն եզակի ակտ է, այլ նաև՝ որոշակի ժամակահատվածում կատարվող գործընթաց:

Այսպիսով՝ միջնորդություն (բացարկ) հարուցելու (հայտնելու) քանակական չափանիշն արտահայտում է միջնորդությունը (բացարկը)

առաջ բերելու (ծագեցնելու) սկզբնական ակտի քանակը, իսկ միջնորդության հարուցելու (բացարկ հայտնելու) ժամանակային չափանիշն արտահայտում է այն ներկայացնելու տևողությունը:

2.2. *Միջնորդություն հարուցելու և բացարկ հայտնելու իրավունքների սահմանափակումը:* Միջնորդություն հարուցելու իրավունքի չարաշահում է համարվում դատավարության նույն փուլում (վարույթն իրականացնող նույն մարմնի առջև) պարբերաբար նմանաբնույթ միջնորդություններ հարուցելը (1) կամ նույն անձին նման փաստարկմամբ երկու և ավելի անգամ բացարկ հայտնելը (2) կամ միջնորդությունը (բացարկը) ոչ իրավաչափ նպատակով տևականորեն ներկայացնելը (3):

2.2.1. Վարույթի նույն փուլում կամ վարույթն իրականացնող նույն մարմնի առջև առանց նոր էական փաստարկներ բերելու կրկին միջնորդություն հարուցելը կարող է առաջացնել տարբեր բացասական հետևանքներ: Օրինակ՝ վարույթն իրականացնող մարմինը կարող է որոշում կայացնել միջնորդությունն առանց քննության թողնելու մասին և միջնորդություն հարուցելու իրավունքը սահմանափակելու մասին (դատավարական սանկցիա)³: Միջնորդություն հարուցելու իրավունքը չարաշահելու դեպքում թե՛ դր հետևանքը պետք է ընտրել, կախված է կոնկրետ գործի հանգամանք-

ներից: Եթե, օրինակ, վարույթի մասնակիցը հարուցում է երկրորդ նմանաբնույթ միջնորդությունը, ապա վարույթն իրականացնող մարմինը պետք է նախ՝ որոշում կայացնի այն առանց քննության թողնելու մասին, իսկ եթե հիմքեր ունի ենթադրելու, որ վարույթի մասնակիցը կարող է շարունակել իրավունքի չարաշահումը, ապա կարող է կիրառել նաև քննարկվող դատավարական սանկցիան: Ինչպես նշվեց, վարույթն իրականացնող մարմինը պետք է կիրառի միջնորդությունն առանց քննության թողնելու մասին դրույթը, եթե վարույթի մի քանի մասնակցի՝ իրավունքը չարաշահելու դիրքորոշման միասնականությունը հնարավոր չէ ապացուցել:

2.2.1.-a) Միջնորդություն հարուցելու իրավունքի սահմանափակումը պետք է տարբերել միջնորդությունն առանց քննության թողնելուց: Միջնորդություն հարուցելու իրավունքը սահմանափակելուց հետո, նմանաբնույթ միջնորդություն հարուցելու դեպքում, վարույթն իրականացնող մարմինը պետք է արգելի (խափանի) բանավոր միջնորդության ներկայացնելու գործընթացի շարունակությունը, իսկ միջնորդություն հարուցելը դատավարական և փաստական հետևանքներ չպետք է առաջացնի, մինչդեռ, միջնորդությունն առանց քննության թողնելու դեպքում վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է յուրաքանչյուր անգամ

³ ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/0184/11/14 գործով 28.08.2015թ. որոշմամբ ընդլայնել է իրավունքի չարաշահմամբ ներկայացված միջնորդությունն ըստ էության չքննարկելու և դրա վերաբերյալ որոշումներ չկայացնելու դեպքերը: ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ իրավասու պետական մարմնի կամ պաշտոնատար անձի՝ համապատասխան միջնորդությունը լուծելու, այսինքն՝ այն ըստ էության քննության առնելու և մերժելու կամ բավարարելու մասին պատճառաբանված որոշում կայացնելու պարտականությունը ծագում է, եթե միջնորդությունը վերաբերում է կոնկրետ քրեական գործին, ներկայացվել է քրեադատավարական օրենքով սահմանված կարգի պահպանմամբ, այն ներկայացնելու իրավասություն ունեցող անձի կողմից, այդ միջնորդությունը քննության առնելու լիազորություն ունեցող պետական մարմնին և (կամ) պաշտոնատար անձին: (...) Դատավարության մասնակիցը պետք է ներկայացնի այնպիսի միջնորդություն (խնդրանք), որի բավարարման հնարավորությունը նախատեսված է ՀՀ օրենսդրությամբ: Վերոնշյալ պահանջի խախտմամբ ակնհայտ անօրինական միջնորդություն ներկայացնելու դեպքում անձը վարույթն իրականացնող մարմնից չի կարող ողջամտորեն ակնկալել այն մերժելու կամ բավարարելու վերաբերյալ պատճառաբանված որոշում:

Նշված գործով՝ պաշտպանը միջնորդությամբ ՀՀ գլխավոր դատախազին խնդրել է ցուցում տալ հսկող դատախազին՝ իր որոշումը վերացնելու վերաբերյալ: ՀՀ գլխավոր դատախազն այս միջնորդությունն ըստ էության չէր քննարկել և դրա վերաբերյալ որոշում չէր կայացրել: Հսկող դատախազը պաշտպանին տեղեկացրել էր, որ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի որոշումը վերացնելու ցուցում տալու և դատախազի կայացրած որոշումն իր իսկ կողմից վերացնելու դատավարական կարգ օրենսդրությամբ նախատեսված չէ: ՀՀ վճռաբեկ դատարանը դատախազության այս վարքագիծը համարել է իրավաչափ, քանի որ պաշտպանը ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված միջնորդությամբ խնդրել էր կատարել այնպիսի գործողություն, որը չէր բխում ՀՀ գլխավոր դատախազի՝ որպես վերադաս դատախազի լիազորություններից և նախատեսված չէր օրենքով: Հետևաբար վարույթն իրականացնող մարմինը, հաշվի առնելով, որ պաշտպանը միջնորդել էր կատարել օրենքով չնախատեսված գործողություն, որն ակնհայտորեն դուրս էր միջնորդության հասցեատիրոջ լիազորությունների շրջանակից, իրավացիորեն, գրությամբ համապատասխան պարզաբանում էր տվել միջնորդություն ներկայացրած անձին:

լսել և քննարկել այդ միջնորդությունը, որից հետո միայն որոշում կայացնել այն առանց քննության թողնելու մասին: Այս տեսանկյունից միջնորդություն հարուցելու իրավունքի սահմանափակումը ներգործության առավել արդյունավետ միջոց է:

2.2.1.-b) Միջնորդություն հարուցելու իրավունքի սահմանափակումը ունի գործողության ժամանակային (փուլային) և սուբյեկտային սահմաններ: Այս սանկցիայի գործողության ժամանակային սահմանը նշանակում է, որ այն գործում է քրեական դատավարության տվյալ փուլի ընթացքում, օրինակ՝ նախաքննության ընթացքում միջնորդություն հարուցելու իրավունքի սահմանափակումը գործում է միայն այդ փուլի ընթացքում: Երբ անցում է կատարվում դատավարության հաջորդ փուլին, ապա այս սանկցիայի գործողությունը փաստացի դադարում է (առանց դատավարական որոշումներ կայացնելու): Քննարկվող սանկցիայի գործողության սուբյեկտային սահմանը նշանակում է, որ այն գործում է միայն նույն վարույթի իրականացնող մարմնի մասնակցության դեպքում: Եթե դատավարության կոնկրետ փուլում փոխվում է վարույթի իրականացնող մարմինը, ապա միջնորդություն հարուցելու իրավունքի սահմանափակման գործողությունը փաստացի դադարում է: Նման մեկնաբանությամբ ապահովվում է ՀՀ քր. դատ. օր-ի 143-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված այն արգելքը, ըստ որի՝ սույն դատավարական սանկցիայի կիրառումը չպետք է բացառի համապատասխան իրավունքի բուն իրացումը:

2.2.2. Նույն անձին նույն փաստարկմամբ բացարկ կարող է հայտնվել միայն մեկ անգամ (ՀՀ քր. դատ. օր-ի 64-րդ հոդվածի 4-րդ մաս): Բացարկ հայտնելու իրավունքը ոչ բարեխիղճ եղանակով է իրականացվում ոչ միայն այն դեպքում, երբ նույն անձին նույն փաստարկմամբ մի քանի անգամ բացարկ է հայտնվում (իրավունքի չարաշահում), այլ նաև այն դեպքում, երբ վարույթի մասնավոր մասնակիցը, տվյալ պահին տիրապետելով անձին բացարկ հայտնելու մի քանի հիմքի, դրանք ներկայացնում է ոչ թե միասնական, այլ առանձին-առանձին բացարկներ հայտնելու ձևով: Նման վարքագիծը կհամարվի անբարեխիղճ, եթե դրանով հետապնդվում են ոչ իրավաչափ նպա-

տակներ, օրինակ՝ վարույթի ընթացքը ձգձգելու, դատավորին յուրաքանչյուր անգամ առանձին սենյակ հեռանալ ստիպելու, բացարկի վերաբերյալ առանձին փաստաթղթի ձևով դատավարական որոշում կայացնելու համար (ՀՀ քր. դատ. օր-ի 270-րդ հոդվածի 3-րդ մաս): Այնուամենայնիվ՝ պոզիտիվ իրավունքի տեսանկյունից նման վարքագիծը չի կարող որակվել որպես իրավունքի չարաշահում և համարվել բացարկ հայտնելու իրավունքի սահմանափակման հիմք: Նման վարքագիծը կարող է դիտարկվել առավելագույնս էստոպելի (estoppel) կանոնի ձևավորման լույսի ներքո:

2.3. *Վարույթի նյութերին կցելու և հետազոտելու համար ապացույցներ ներկայացնելը:* Քննիչը պարտավոր է վարույթի նյութերին կցել վարույթի մասնավոր մասնակիցների ներկայացրած առարկաները կամ փաստաթղթերը (ՀՀ քր. դատ. օր-ի 233-րդ հոդվածի 1-ին մաս): Վարույթի նյութերին կցելու և հետազոտելու համար առարկաներ և փաստաթղթեր (ապացույցներ) ներկայացնելու իրավունքը չարաշահվում է, եթե անձը, գիտակցելով առարկաները (փաստաթղթերը) վարույթին կցելու՝ վարույթի իրականացնող մարմնի պարտականությունը, կրկին ներկայացնում է նախկինում տրամադրած առարկայի լուսապատճենը կամ փաստաթղթի պատճենը, կամ պարբերաբար ներկայացնում է վարույթի հետ ակնհայտորեն առնչություն չունեցող առարկաներ (օրինակ՝ սպանության հոդվածով մեղադրանքի քննության ժամանակ ներկայացնում է ձու կամ աղբ), վարույթի իրականացնող մարմնի համար ստեղծելով արձանագրություն կազմելու, այդ առարկաները կրկին զննելու կամ դրանց վերաբերելիության հետ կապված որոշումներ կայացնելու պարտականություն (ՀՀ քր. դատ. օր-ի 94-րդ հոդվածի 2-րդ մաս):

Ապացույց ներկայացնելու իրավունքը սահմանափակելուց և դրա իրականացման համար քանակական պայման սահմանելուց հետո, առարկայի լուսապատճենը կամ փաստաթղթի պատճենը, ակնհայտորեն չվերաբերող առարկաներ կրկին ներկայացնելը դատավարական և փաստական հետևանքներ չի առաջացնում:

2.3 *Վարույթի նյութերին ծանոթանալը և դրանցից ցանկացած տեղեկություն դուրս գրելը:* Վարույթի նյութերին ծանոթանալու համար

վարույթի մասնակիցներին տրամադրվում է ողջամիտ ժամկետ (<< քր. դատ. օր-ի 200-րդ հոդվածի 6-րդ կետ): Քննիչի կողմից ի սկզբանե վարույթի նյութերին ծանոթանալու ժամկետ սահմանելը դատավարական սանկցիա չէ, քանի որ վարույթի մասնակիցը դեռևս որևէ հակահրավական վարքագիծ չի դրսևորել: Սակայն եթե վարույթի մասնակիցը սահմանված ժամկետում պարբերաբար չի ներկայանում գործի նյութերին ծանոթանալու կամ այլ կերպ ձգձգում է այդ գործընթացը, ապա դա պետք է դիտել որպես իրավունքի չարաշահում, և որոշում կայացնել նյութերին ծանոթանալու իրավունքը սահմանափակելու և նյութերին ծանոթանալու ժամանակային պայման (ծանոթանալու վերջին օր) սահմանելու մասին: Վարույթի նյութերին ծանոթանալու՝ սահմանված ժամանակային պայմանները խախտելու դեպքում, քննիչը պետք է համարի, որ անձը ոչ իրավաչափ արարքով հրաժարվել է գործի նյութերին ծանոթանալու իր իրավունքից (կորցրել է այդ իրավունքը), որից հետո պետք է շարունակի վարույթի հետագա ընթացքը⁴:

Վարույթի նյութերից տեղեկություն դուրս գրելու իրավունքը չարաշահվում է, եթե վարույթն իրականացնող մարմինը մասնակցին տրամադրել է բոլոր նյութերը, սակայն նա, առանց ողջամիտ հիմնավորումների, կրկին պահանջում է ապահովել վարույթի նյութերից տեղեկություններ դուրս գրելու իրավունքը: Քրեական վարույթի նյութերի թվայնացման պարագայում այս իրավունքի չարաշահման ռիսկերը նվազում են:

2.4. *Բացման խոսքով, եզրափակիչ ելույթով կամ եզրափակիչ հայտարարությամբ հանդես գալը:* Բացման խոսքով, եզրափակիչ ելույթով կամ եզրափակիչ հայտարարությամբ հանդես գալու իրավունքների չարաշահում է համարվում, եթե այս իրավունքների կրողները իրենց խոսքում շոշափում են վարույթին չառնչվող հանգամանքներ, վկայակոչում են չհետազոտված կամ անթույլատրելի ճանաչված ապացույցներ:

2.4.1. Եզրափակիչ ելույթում կամ հայտարարությունում վարույթին չառնչվող հանգամանքներ շոշափելու, չհետազոտված կամ անթույլատրելի ճանաչված ապացույցներ վկայակոչելու դեպքում դատարանը նախ՝ ընդհատում է եզրափակիչ ելույթները կամ հայտարարությունները, իսկ իրավունքի չարաշահումը շարունակելու դեպքում՝ որոշում է կայացնում իրավունքը սահմանափակելու մասին (դատավարական սանկցիա):

Նախագահողն իրավասու է ընդհատելու ելույթ ունեցող անձին, եթե նա անդրադառնում է վարույթին չառնչվող հանգամանքների կամ չհետազոտված կամ անթույլատրելի ճանաչված ապացույցների (<< քր. դատ. օր-ի 337-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասեր): Եզրափակիչ հայտարարությամբ հանդես է գալիս մեղադրյալը: Նախագահողն իրավասու է մեղադրյալին ընդհատել, եթե նա շոշափում է վարույթին ակնհայտորեն չառնչվող հանգամանքներ (<< քր. դատ. օր-ի 339-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր): Հիմք ընդունելով «ընդհատել» բառի լեզվաբանական իմաստը⁵ կարելի է նշել, որ եզրափակիչ ելույթը կամ հայտարարությունն ընդհատելուց հետո մասնակցին թույլատրվում է շարունակել այդ իրավունքի պատշաճ իրականացումը: Եթե եզրափակիչ ելույթը կամ հայտարարությունն ընդհատելուց հետո, վարույթի մասնակիցը կրկին շարունակում է չարաշահել այս իրավունքները, ապա առկա է իրավունքի չարաշահման պարբերականություն, որից հետո դատարանը որոշում է կայացնում իրավունքը սահմանափակելու և դրանց իրականացման համար ժամանակային պայման սահմանելու մասին: Այս կառուցակարգը հնարավորություն է տալիս ապահովելու եզրափակիչ ելույթով կամ հայտարարությամբ հանդես գալու իրավունքների սահմանափակման համար անհրաժեշտ՝ իրավունքի չարաշահման պարբերականության պայմանը:

Մեղադրյալի եզրափակիչ ելույթի իրավունքը սահմանափակելիս պետք է նկատի ունենալ, որ եթե անձամբ իր պաշտպանությունն ի-

⁴ Այս մասին տե՛ս Гамбарян А. С. Отказ от права и вопросы уголовно-процессуального вмешательства. М.: 2018.
⁵ Ընդհատել նշանակում է՝ որևէ չավարտված գործողություն ընդմիջել կամ դադարեցնել՝ նորից վերսկսելու համար: Տե՛ս Աղայան Է. Արդի հայերենի բացատրական բառարան: Եր., 1976, էջ 402, ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան: Հրայր Աճառյանի Անվան Լեզվի Ինստիտուտ: Եր., 1972, էջ 98:

րականացրած մեղադրյալին հնարավորություն չի տրվել հանդես գալու եզրափակիչ ելույթով, ապա դա դատական ակտն անվերապահ բեկանման հիմք է (ՀՀ քր. դատ. օր-ի 376-րդ հոդվածի 1-ին մաս):

2.4.2. Ի տարբերություն եզրափակիչ ելույթով կամ հայտարարությամբ հանդես գալու դեպքի՝ բացման խոսքն ընդհատելու հնարավորություն օրենքով ուղղակիորեն նախատեսված չէ (ՀՀ քր. դատ. օր-ի 324-րդ հոդված): Բացման խոսքով հանդես գալու իրավունքի չարաշահման պարբերականության պայմանի ապահովման նպատակով դատարանը պետք է կիրառի ՀՀ քր. դատ. օր-ի 142-րդ հոդվածով նախատեսված՝ նկատողություն սանկցիան⁶: Այսպես՝ եթե վարույթի մասնակիցը բացման խոսքում շոշափում է վարույթին (մեղադրանքին) չառնչվող հանգամանքներ, ապա դատարանը նրան նկատողություն է հայտնում՝ հրահանգելով դրսևորել պատշաճ վարքագիծ և բացման խոսքում չշոշափել մեղադրանքի հետ առնչություն չունեցող հանգամանքներ: Նկատողություն հայտնելուց հետո, եթե վարույթի մասնակիցը կրկին շարունակում է չարաշահել այս իրավունքները, ապա առկա է իրավունքի չարաշահման պարբերականություն, որից հետո դատարանը որոշում է կայացնում այս իրավունքը սահմանափակելու և դրա իրականացման համար ժամանակային պայման սահմանելու մասին:

2.4.3. Եզրափակիչ ելույթով հանդես գալու իրավունքի իրականացման սահմանափակումը նույնպես ունի գործողության ժամանակային (փուլային) և սուբյեկտային սահմաններ:

2.5 *Պաշտպանից հրաժարվելը կամ պաշտպանի լիազորությունները դադարեցնելը*: Պաշտպանից հրաժարվելը մեղադրյալի հայտարարությունն է՝ իր պաշտպանությունն առանց որևէ պաշտպանի օգնության (անձամբ) իրականացնելու վերաբերյալ (ՀՀ քր. դատ. օր-ի 47-րդ հոդվածի 1-ին մաս), մինչդեռ պաշտպանի լիազորությունները դադարեցվում են պաշտպանին փոխարինելու նպատակով (ՀՀ քր. դատ. օր-ի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ի կետ):

Օրենսդիրը պաշտպանից հրաժարվելը՝ որպես իրավունքի չարաշահում որակելու համար նախատեսել է լրացուցիչ պահանջ. պաշտպանից հրաժարվելու իրավունքի չարաշահումը ոչ միայն պետք է լինի պարբերաբար, այլ նաև ակնհայտ (ՀՀ քր. դատ. օր-ի 47-րդ հոդվածի 4-րդ մաս): Պաշտպանից հրաժարվելու իրավունքի չարաշահման ակնհայտությունը կարող է որոշվել պաշտպանից հրաժարվելու և նոր պաշտպան հրավիրելու միջև ընկած ժամանակի տևողությամբ, այդ ընթացքում գործի հանգամանքների այնպիսի փոփոխությունների բացակայությամբ, որը կարող է արդարացնել պաշտպանից հրաժարվելուց հետո նոր պաշտպանի հրավիրելը, ինչպես նաև պաշտպանից հրաժարվելու պարբերականությունից: Օրինակ՝ եթե մեղադրյալը հրաժարվում է պաշտպանից, այսինքն՝ կամք է հայտնում իր պաշտպանությունն առանց պաշտպանի օգնության իրականացնելու և հաջորդ օրը պահանջում է ներգրավել նոր պաշտպան և կրկին հրաժարվում է այդ պաշտպանից, ապա ակնհայտ է, որ նա նպատակ ունի ոչ թե իրացնելու իր՝ պաշտպանից հրաժարվելու իրավունքը, այլ՝ խոչընդոտելու քննությանը:

Պաշտպանից հրաժարվելու իրավունքի չարաշահումը և պաշտպանից հրաժարված մեղադրյալի՝ նոր պաշտպան ներգրավելու պահանջի իրավունքը (ՀՀ քր. դատ. օր-ի 47-րդ հոդվածի 3-րդ մաս) տարբերելու համար կարևոր է գնահատել նաև պաշտպանից հրաժարվելուց հետո գործի հանգամանքների փոփոխությունը, որը կարող է արդարացնել նոր պաշտպանի պահանջելը (հրավիրելը):

Պաշտպանից հրաժարվելու իրավունքի չարաշահման ակնհայտության մասին կարող է վկայել նաև պաշտպանից հրաժարվելու պարբերականությունը, օրինակ՝ իրավունքի չարաշահման պարբերականությունը կարող է վկայել դրա ակնհայտության մասին, եթե մեղադրյալը պաշտպանից հրաժարվել է երեք և ավելի անգամ:

Նոր պաշտպանից հրաժարվելու մեղադրյալի կամարտահայտությունը պարտադիր չէ

⁶ Այս մեկնաբանությունը ՀՀ քր. դատ. օր-ի 141-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորման տեսանկյունից կարող է խոցելի թվալ, քանի որ նշված նորմի համաձայն՝ իրավունքները չարաշահելու դեպքում կարող է կիրառվել միայն իրավունքի իրականացման սահմանափակում դատավարական սանկցիան:

վարույթն իրականացնող մարմնի համար, եթե մեղադրյալն ակնհայտ չարաշահում է պաշտպանից հրաժարվելու իր իրավունքը: Այդ դեպքում վարույթն իրականացնող մարմինը որոշմամբ չի ընդունում պաշտպանից հրաժարվելը (ՀՀ քր. դատ. օր-ի 47-րդ հոդվածի 4-րդ մաս): Պաշտպանից պարբերաբար հրաժարվելու դեպքում վարույթն իրականացնող մարմինը, ղեկավարվելով մեկնաբանվող հոդվածով և ՀՀ քր. դատ. օր-ի 47-րդ հոդվածի 4-րդ մասով, որոշում է չընդունել պաշտպանից հրաժարվելը և սահմանափակել պաշտպանից հրաժարվելու իրավունքը:

3. *Մի քանի պաշտպանի, լիազոր ներկայացուցչի կամ փաստաբանի հետ ներկայանալը:* Պոզիտիվ իրավունքում մի քանի պաշտպան կամ լիազոր ներկայացուցիչ ունենալն ամրագրված է որպես դատավարական իրավունք: Այսպես՝ նույն մեղադրյալը կարող է ունենալ մեկից ավելի պաշտպաններ (ՀՀ քր. դատ. օր-ի 45-րդ հոդվածի 7-րդ մաս), տուժողը, գույքային պատասխանողը կարող են ունենալ մի քանի լիազոր ներկայացուցիչ (ՀՀ քր. դատ. օր-ի 54-րդ հոդվածի 2-րդ մաս, 56-րդ հոդվածի 3-րդ մաս): Վկայի՝ մի քանի փաստաբան ունենալու իրավունքն օրենքում ուղիղ ամրագրված չէ, սակայն այն բխում է մեկնաբանվող նորմից: Այսպիսով՝ մի քանի պաշտպան, լիազոր ներկայացուցիչ կամ փաստաբան (այսուհետ՝ փաստաբան) ունենալու իրավունքի կրողներն են՝ մեղադրյալը, տուժողը, գույքային պատասխանողը և վկան:

Մեկնաբանվող հոդվածի 3-րդ մասում նախատեսված սանկցիայի կիրառման փաստական հիմքը՝ իրավունքի չարաշահումը, յուրափաստույթն է. դատավարական այս իրավունքի կրողը, նկատի ունենալով վարույթային գործողության կատարման վայրի (օրինակ՝ քննիչի աշխատասենյակի) պայմանների սահմանափակումները, այդ գործողության կատարմանը հրավիրում է ոչ ողջամիտ քանակի փաստաբաններ՝ ցանկանալով խոչընդոտել վարույթային գործողության կատարմանը կամ ստեղծել այդ գործողության կատարման անհնարինության վիճակ: Այլ կարեպ ասած՝ այս իրավունքի չարաշահումն առկա է, երբ իրավունքի կրողը մի քանի փաստաբան ունենալու իրավունքը օգտագործում է ոչ թե այդ իրավունքի

բուն նպատակին համապատասխան, այլ որպես հասարակական միջոցառում, կամ վարույթային գործողության տևողությունը արհեստականորեն երկարացնելու, վարույթային գործողության ընթացքում կոնֆլիկտոգեն իրավիճակներ ստեղծելու նպատակով:

Մի քանի փաստաբանի հետ ներկայանալու իրավունքը սահմանափակվում է վարույթային գործողությանը մասնակիցների քանակական պայման սահմանելու եղանակով: Այսինքն՝ իրավունքի սահմանափակումը դրսևորվում է նրանով, որ ոչ բոլոր փաստաբաններին է հնարավորություն տրվում մասնակցելու տվյալ վարույթային գործողությանը: Ընդ որում, մեղադրյալին, տուժողին, գույքային պատասխանողին ոչ թե արգելվում է վարույթին ներգրավել մի քանի պաշտպան, լիազոր ներկայացուցիչ, այլ սահմանափակում է կոնկրետ վարույթային գործողություններին մասնակցող փաստաբանների քանակը:

Այս սանկցիան կիրառելիս, վարույթն իրականացնող մարմինը սահմանում է վարույթային գործողություններին մասնակցող փաստաբանների առավելագույն (թույլատրելի) քանակը, սակայն չի կարող սահմանել, թե վարույթային գործողությանը կոնկրետ ո՞ր փաստաբանները կարող են մասնակցել:

Մեկնաբանվող դրույթում նախատեսված է հատուկ նորմ, որն ընդհանուր նորմի համեմատությամբ պարունակում է նաև բացառություն: Ընդհանուր նորմից բացառություն պետք է համարել այն, որ այս դեպքում իրավունքի չարաշահման պարբերականություն չի պահանջվում, քանի որ եթե վարույթն իրականացնող մարմինը պարտավոր լինի առաջին անգամ հնարավորություն տալ բոլոր փաստաբաններին մասնակցելու վարույթային գործողությանը և միայն երկրորդ անգամ արարքը կրկնելու (պարբերականության) դեպքում կիրառի այս սանկցիան, ապա դրանով իսկ ի սկզբանե կարժեգրվվի քննարկվող ներգործության միջոցը: Օրինակ՝ մեղադրյալը, որը վարույթին մասնակցելու համար հրավիրել է 10 պաշտպան, պահանջում է, որպեսզի նրանք բոլորը մասնակցեն քննիչի աշխատասենյակում կատարվող առերեսմանը: Այս փաստից ի սկզբանե պարզ է, որ սահմանափակ տարածքում 10 պաշտպանի մասնակցության պահան-

ջի նպատակը ոչ թե իրավաբանական օգնություն ստանալն է, այլ հարցաքննության բնականոն ընթացքը խոչընդոտելն է կամ այդ գործողությունը կատարելու անհնարինության պայմաններ ստեղծելը: Այդ իրավիճակում վարույթն իրականացնող մարմինն ունի բավարար հիմքեր ի սկզբանե նման վարքագիծը գնահատելու որպես իրավունքի չարաշահում և սահմանափակելու վարութային գործողությանը մասնակցող անձանց քանակը:

Անհրաժեշտ է քննարկել ՀՀ քր. դատ. օր-ի 143-րդ հոդվածի 3-րդ մասի և 45-րդ հոդվածի 7-րդ մասի հարաբերակցությունը: Վերջին հոդվածի համաձայն՝ վարույթային գործողությանը մեղադրյալի բոլոր պաշտպանների մասնակցությունը պարտադիր չէ: Վարույթային գործողությունը, որին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, չի կարող անօրինական ճանաչվել, եթե համապատասխան մեղադրյալի ոչ բոլոր պաշտպաններն են մասնակցել տվյալ գործողությանը: ՀՀ քր. դատ. օր-ի 45-րդ հոդվածի 7-րդ մասը և մեկնաբանվող նորմը կարող են կիրառվել իրարից ինքնավար: Օրինակ՝ մի քանի պաշտպաններից մեկի բացակայության պայմաններում կատարված վարույթային գործողությունը ՀՀ քր. դատ. օր-ի 45-րդ հոդվածի ուժով չի կարող անօրինական ճանաչվել, անկախ նրանից՝ այդ դեպքում դատավարական սանկցիա կիրառվել է, թե՛ ոչ:

Անհրաժեշտ է քննարկել նաև ՀՀ քր. դատ. օր-ի 143-րդ հոդվածի 3-րդ մասի և 54-րդ հոդվածի 2-րդ մասի հարաբերակցությունը: Վերջին հոդվածում սահմանված է, որ վարույթն իրականացնող մարմինն իրավասու է սահմանափակելու վարութային գործողությանը կամ դատական նիստին միաժամանակ մասնակցող տուժողի լիազոր ներկայացուցիչների թիվը, եթե դա չի վտանգի արդարադատության շահը: Այս երկու հոդվածի դրույթները իրար հետ հարաբերվում են որպես նյութական և վարութային իրավանորմեր, ուստի դրանք կարող են կիրառվել համակցված կերպով: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր-ի 54-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված է վարույթն իրականացնող մարմնի լիազորող նորմը (նյութական իրավանորմ), իսկ ՀՀ քր. դատ. օր-ի 143-րդ հոդվածը սահմանում է լիազոր ներկայացուցիչների թիվը սահմանափակելու մասին նյութական իրավա-

նորմի իրականացման կարգը (վարութային իրավանորմ):

4. Մեկնաբանվող հոդվածի 4-րդ մասում սահմանված է, որ քննարկվող դատավարական սանկցիայի կիրառումը չպետք է բացառի համապատասխան իրավունքի բուն իրացումը: Այս դրույթի հիմքում դրված են մարդու իրավունքների սահմանափակման սահմանադրական պայմանները (հիմքերը): ՀՀ սահմանադրական դատարանը նշել է. «Որևէ հիմնական իրավունքի սահմանափակում հնարավոր է միայն օրենքով, իսկ համաչափության սկզբունքով պայմանավորված՝ օրենքով հիմնական իրավունքի սահմանափակումներին վերաբերող պահանջները հետևյալն են. 1) սահմանափակման **նպատակի լեգիտիմությունը**, այն է՝ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված լինելը. 2) սահմանափակման համար ընտրված միջոցների՝ ա) **պիտանիությունը**՝ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար. բ) **անհրաժեշտությունը**՝ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար. գ) **համարժեքությունը** սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը (18 հունիսի 2020 թ. ՍԴՈ-1546 որոշմամբ):

Դատավարական իրավունքների սահմանափակումը չի բացառում համապատասխան իրավունքի բուն իրացումը, եթե՝

1) սահմանափակվում է ոչ թե տվյալ իրավունքն ընդհանրապես, այլ այն սահմանափակվում է այնքանով, որքանով վարույթի մասնակիցն այդ իրավունքը օգտագործել է իրավունքի բուն նպատակին հակառակ: Եթե վարույթի մասնակիցը չարաշահել է, օրինակ, միջնորդություն հարուցելու իրավունքը, ապա սահմանափակվում է ոչ թե միջնորդություն հարուցելու իրավունքն ընդհանրապես, այլ նմանաբնույթ հիմնավորումներով կրկին միջնորդություն ներկայացնելու հնարավորությունը: Այլ հարցերով վարույթի մասնակիցն անխոչընդոտ իրականացնում է միջնորդություն հարուցելու իրավունքը:

2) պահպանվում են չարաշահված իրավունքի սահմանափակման գործողության *ժամանակային (փուլային) և սուբյեկտային* սահմանները: Օրինակ՝ եթե վարույթի մասնակցի՝ եզրափակիչ ելույթով հանդես գալու իրավուն-

քը սահմանափակվել է առաջին ատյանի դատարանում, ապա այդ սանկցիան գործում է դատավարության տվյալ փուլում, իսկ վերաքննիչ վարույթի ընթացքում վարույթի մասնակիցը կարող է իրացնել եզրափակիչ ելույթով հանդես գալու իր իրավունքը (ՀՀ քր. դատ. օր-ի 369-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ մասեր):

5. Իրավունքի իրականացման սահմանափակման դատավարական ձևը որոշում կայացնելն է: Մինչդատական վարույթի ընթացքում իրավասու անձն այս սանկցիան կիրառելու մասին որոշումը շարադրում է առանձին փաստաթղթի ձևով:

Դատական վարույթի ընթացքում այս սանկցիան կիրառելու մասին որոշման շարադրման ձևը պարզաբանման կարիք ունի: ՀՀ քր. դատ. օր-ի 270-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված են այն որոշումները, որոնք պարտադիր շարադրվում են առանձին փաստաթղթի ձևով: Այդ ցանկում դատավարական սանկցիաներից նախատեսվել են միայն դատական տուգանք նշանակելու և վարույթից հեռացնելու մասին որոշումները: ՀՀ քր. դատ. օր-ի 270-րդ հոդվածի կարգավորումների շրջանակում կարելի է եզրակացնել, որ օրենսդիրը չի ցանկացել, որ իրավունքների սահմանափակման մասին որոշումը պարտադիր կերպով շարադրվի առանձին փաստաթղթի ձևով: Դատարանը իր հայեցողությամբ է որոշում իրավունքը սահմանափակելու մասին որոշումը շարադրի առանձին փաստաթղթի ձևով, թե՛ դատական նիստի արձանագրության մեջ մտցնելով (ՀՀ քր. դատ. օր-ի 270-րդ հոդվածի 3-րդ մաս):

Իրավունքի սահմանափակման վերաբերյալ դատարանի որոշման շարադրման ձևի հարցում օրենսդրի իրական կամքը բացահայտելու նպատակով չպետք է կաշկանդվել ՀՀ քր. դատ. օր-ի 270-րդ հոդվածի կարգավորումներով: Այդ նպատակով պետք է վերլուծել նաև ՀՀ քր.

դատ. օր-ի 17-րդ գլխի (դատավարական սանկցիաներ) կարգավորումները և եզրակացություն անել այդ ինստիտուտի տրամաբանության շրջանակում: Նախ՝ նշված գլխում հատուկ նորմերով սահմանված են այն դատավարական սանկցիաները, որոնց վերաբերյալ որոշումները մտցվում են դատական նիստի արձանագրության մեջ: Դրանք են՝ նկատողությունը (ՀՀ քր. դատ. օր-ի 142-րդ հոդվածի 2-րդ մաս), անձին դատական նիստի դահլիճից հեռացնելու կարգադրությունը (ՀՀ քր. դատ. օր-ի 144-րդ հոդվածի 3-րդ մաս): Փաստորեն դատավարական սանկցիաների մասով օրենսդիրը, եթե ցանկացել է, որ որոշումը մտցրվի նիստի արձանագրությունում, ապա հատուկ նորմով դա կարգավորել է:

Այուս դատավարական սանկցիաների պարագայում օրենսդիրը կամ ուղիղ նշել է առանձին փաստաթղթի ձևով շարադրված որոշման մասին (օրինակ՝ դատական տուգանքը, վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնելը⁷) կամ օգտագործել է այնպիսի ձևակերպումներ, որոնցից պարզ է, որ խոսքն առանձին փաստաթղթի ձևով կայացված որոշման մասին է: Օրինակ՝ վարույթից հեռացնելու դեպքում գործածել է «հիմնավոր որոշմամբ» ձևակերպումը, որից բխում է, որ այն պետք է շարադրվի առանձին փաստաթղթի ձևով: Իրավունքի իրականացման սահմանափակման դեպքում օրենսդիրը գործածել է «համապատասխան որոշմամբ» ձևակերպումը, որից նույնպես կարելի է եզրակացնել, որ օրենսդիրը նպատակ է ունեցել շեշտելու, որ այդ որոշումը պետք է շարադրել առանձին փաստաթղթի ձևով:

Որոշման շարադրման ձևի ընտրության վրա վճռական ազդեցություն ունի այն, թե տվյալ ակտը անմիջական բողոքարկման ենթակա է, թե ոչ:



⁷ ՀՀ քր. դատ. օր-ի 145-րդ հոդվածում թեև ուղիղ նշված չէ **վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնելու որոշումն** առանձին փաստաթղթի ձևով շարադրելու մասին, սակայն դա ինքնին ակնհայտ է, քանի որ նշված հոդվածի 2-րդ մասում սահմանված է, թե որոշման մեջ ինչ տվյալներ են նշվում:

ԳԱՅԱՆԵ ՄԵԼԻՔՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային իրավական համագործակցության վարչության դատախազ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության ամբիոնի սպիրանտ

ՀԱՆՁՆՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԶԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՀԱՄԵՄԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Իրավաբանական գրականության մեջ, ընդհանուր առմամբ առանձնացնում են հանձնման ինստիտուտի կարգավորման երկու մոդել՝ եվրոպական և անգլո-ամերիկյան¹, որոնք կիրառվում են համապատասխանաբար ռոմանագերմանական իրավունքի և ընդհանուր իրավունքի երկրներում:

Ընդհանուր իրավունքի երկրներում, ինչպիսիք են օրինակ ԱՄՆ, Մեծ Բրիտանիան, որտեղ իրավունքի հիմնական աղբյուրն է դատական նախադեպը՝ սահմանված չեն հանձնման ինստիտուտի կարգավորմանը վերաբերող հստակ սկզբունքներ և նորմեր, յուրաքանչյուր գործ դատարանի կողմից քննարկվում է յուրովի՝ հնարավորություն տալով յուրաքանչյուր դեպքում ապահովել պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը: Սակայն անհրաժեշտ է նշել, որ վերջինս շրջանում անգլո-ամերիկյան մոդել ունեցող երկրներում ևս հանձնման վերաբերյալ հարաբերությունները կարգավորելիս սկսել են նախապատվություն տալ հանձնումը կարգավորող հատուկ օրենքներին, ինչպես նաև ոլորտը կարգավորող միջազգային պայմանագրերին²:

Ինչ վերաբերում է հանձնման ինստիտուտի եվրոպական մոդելին, ապա դրա հիմնական բնութագրական հատկանիշներն են՝ հստակ ամրագրված սկզբունքների առկայությունը՝ արարքը երկկողմանի հետապնդելի լինելը, սեփական քաղաքացիներին չհանձնելը, անձին պատասխանատվության ենթարկելը միայն այն արարքների համար, որոնց վերաբերյալ հանձնումը բավարարվել է (Principle of speciality) և այլն:

Հարկ է նշել, սակայն, որ վերը նշված երկու

մոդելներն ունեն իրենց թեղրական, թե՛ բացասական կողմերը: Այսպես՝ անգլո-ամերիկյան մոդելի դեպքում, ինչպես նշվեց, գերակայություն է տրվում պատժի անխուսափելիության սկզբունքի ապահովմանը, իսկ եվրոպական մոդելի արժանիքն այն է, որ հստակ ամրագրված սկզբունքների շնորհիվ նվազագույնի է հասցվում անձի իրավունքների խախտման հավանականությունը:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է իրավունքի եվրոպական ընտանիքի անդամ և իրավական կարգավորումներն առավելապես համահունչ են եվրոպական մոդելին՝ սույն պարագրաֆում առավել մանրամասն քննարկման առարկա կդարձվի հանձնման ինստիտուտի կարգադրման հենց եվրոպական մոդելը:

Նախքան հանձնման ինստիտուտի եվրոպական կարգավորումների առանձնահատկություններին անդրադառնալը՝ նշենք նաև, որ մայրցամաքային եվրոպայում հանձնման և իրավական օգնության վերաբերյալ համագործակցությունն իրականացվում է երկու մակարդակներով՝ եվրոպայի խորհրդի և եվրոպական Միության:

Եվրոպական միության անդամ երկրները, ունենալով քաղաքական, տնտեսական, իրավական և այլ որոլորտներում ինտեգրացման բավականին բարձր մակարդակ, իրավական օգնության բնագավառում ևս, ի համեմատ եվրոպայի խորհրդի անդամ մյուս երկրների, համագործակցում են առավել սերտ և միմյանց հետ կապված են առավել ամուր իրավական կապերով: Այստեղ, երկկողմ և բազմակողմ պայմանագրերից զատ, հանցավորության դեմ

¹ Տե՛ս Ըստ Բասիոնի գոյություն ունեն նաև Ասիական, Աֆրիկյան, Բենեյլյուքսի, Արաբական Լիգայի և այլ ռեժիմներ: Ավելի Մանրամասն տե՛ս International Extradition and world public order, 2014թ., էջ 23-42

² Տե՛ս Arvinder Sambei and John R.W.D. Jones. Extradition law handbook. 2005. P.42.

պայքարի բնագավառում, ինչպես և այլ ոլորտներում, գործում են վերազգային կառուցակարգեր: Մասնավորապես այդպիսի վերազգային կառույց է հանդիսանում Եվրոպական Հանձնաժողովը, որն անդամ պետությունների կողմից հանցավորության դեմ պայքարն առավել արդյունավետ կազմակերպելու և համագործկացության բարձր մակարդակ ապահովելու համար ներդնում է տարբեր կառուցակարգեր և ընդունում համապատասխան որոշումներ, որոնք, ի դեպ, ինչպես նշվեց, պարտադիր են բոլոր անդամ պետություններ համար: Այսպես՝ 2002 թվականի հունիսի 13-ի շրջանակային որոշմամբ ներդրվեց ձերբակալման եվրոպական (European Arrest Warrant) որոշման պարզադիր կատարումն անդամ պետությունների կողմից³:

Ինչ վերաբերում է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների շրջանում գործող համագործակցությանն, ապա այստեղ այն առավելապես իրականացվում է երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրեր կնքելու միջոցով:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունը Եվրոպայի խորհրդի անդամ է և Եվրոպական երկրների հետ համագործակցությունն իրականացնում է դրա շրջանակներում, ուստի, սույն աշխատության շրջանակներում առավել մանրամասն քննարկման առարկա կդարձնենք Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների շրջանում գործող իրավական կարգավորման առանձնահատկություններին:

Եվրոպայի խորհրդի շրջանակներում փոխադարձ իրավական օգնությունն առավել սերտ իրականացնելու և համապատասխան կարգավորումների միասնականությունն ապահովելու համար առավել առանցքային նշանակություն ունեն «Հանձնման մասին» 1957թ. Եվրոպական կոնվենցիան և դրա չորս լրացուցիչ արձանագրությունները: Հանձնման հարաբերությունների բնագավառում նշված կոնվենցիայի առանցքային նշանակության մասին է վկայում դրա 28-րդ հոդվածը, համաձայն որի՝ հանձնման բնագավառում Կոնվենցիան փոխարինում է ցանկացած երկկողմ պայմանագրի⁴: Այսինքն՝ հանձնման մասին Եվրոպական կոնվենցիան

հանձնման հարաբերությունները կարգավորող այլ կոնվենցիաների և երկկողմ պայմանագրերի համաեմատ առավել բարձր իրավաբանական ուժ ունի, և մասնակից պետություններն առաջին հերթին պետք է առաջնորդվեն դրանով: Ավելին՝ Կոնվենցիայի նշված կարգավորումից բխում է, որ անդամ պետությունները հանձնման բնագավառում երկկողմ կամ բազմակողմ այլ պայմանագրեր, կոնվենցիաներ կամ համաձայնագրեր կնքելիս պետք է հիմք ընդունեն Կոնվենցիայի կարգավորումները և նախատեսեն այնպիսի դրույթներ որոնք լրացնում են Կոնվենցիայի կարգավորումները կամ հեշտացնում են դրանում ամրագրված սկզբունքների կենսագրոծումը՝ ապահովելով մասնակցի պետությունների միջև քննարկվող ինստիտուտի միատեսակ կիրառությունը:

Հատկանշական է, որ Կոնվենցիային կարող են միանալ նաև Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող երկրները դրա անդամ պետությունների միաձայն համաձայնության դեպքում:

Չնայած որ Կոնվենցիան նախատեսում է վերապահումներ անելու հնարավորություն, որոնք շատ դեպքերում կատարվել են պետությունների կողմից՝ այնուամենայնիվ հարկ է նշել, որ Կոնվենցիայի միջոցով Եվրոխորհրդին, ընդհանուր առմամբ, հաջողվել է հասնել իր նպատակին: Կոնվենցիան ծառայում է նաև որպես ձևանմուշ Եվրոպական և այլ երկրների միջև կնքվող երկկողմ պայմանագրերի համար:

Հայաստանի Հանրապետությունը Կոնվենցիան ստորագրել է 2001 թվականի մայիսի 10-ին, վավերացրել 2002 թվականի հունվարի 25-ին, որն ուժի մեջ է մտել 2002 թվականի ապրիլի 25-ին:

Հանձնման ինստիտուտի համար հիմք հանդիսացող իրավունքի աղբյուրներին անդրադառնալով՝ նախ և առաջ քննարկման առարկա դարձնենք միջազգային օրենսդրությունը և դրա ազդեցությունը հանձնման ոլորտում ՀՀ ներպետական կարգավորումների վրա:

«Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ միջազգային պայմանագիրը՝ Հայաստանի Հան-

³ Տե՛ս Council Framework Decision of June 13, 2002 on the European arrest warrant and the surrender procedures between Member States, July 18, 2002, 2002/584/JHA, OJ L190/1.

⁴ Տե՛ս Հանձնման մասին Եվրոպական կոնվենցիա, 1957թ. հոդված 28

րապետության և պայմանավորվող մյուս կողմի (կողմերի) միջև մեկ փաստաթղթի կամ փոխկապակցված և միմյանցից անբաժանելի մեկից ավելի փաստաթղթերի տեսքով գրավոր ձևակերպված և միջազգային հանրային իրավունքով կարգավորվող համաձայնությունն է անկախ դրա անվանումից⁵:

Ինչպես երկկողմ այնպես էլ բազմակողմ միջազգային պայմանագրերը որպես կանոն կնքում են «Քրեական արդարադատության ոլորտում փոխադարձ օգնության օրինակելի պայմանագրի» (հիմնված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 14.12.1990թ. թիվ 45/117 բանաձևի վրա), ինչպես նաև «Հանձնման մասին օրինակելի պայմանագրի» հիման վրա (հիմնված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 14.12.1990թ. թիվ 45/116 բանաձևի վրա)⁶: Սակայն նշված փաստաթղթերը խորհրդատվական բնույթի են և պետությունների համար պարտադիր չեն: Հանձնման մասին օրինակելի պայմանագրերը բացառապես դիտվում են որպես օրինակներ, թե ինչ հարցեր և ոլորտներ պետք է կարգավորվեն հանձնման վերաբերյալ ցանկացած պայմանագրում:

Միջազգային պայմանագրերի կարևորությանը անդրադարձ է կատարվել նաև ՄԱԿ-ի 1996 թվականի դեկտեմբերի 12-ի հանցավորության և հասարակական անվտանգության վերաբերյալ հռչակագրով, որով Գլխավոր ասամբլեան, հիմնվելով անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի համընդհանուր նախագծի վրա, երկրներին կոչ է անում կազմակերպված հանցավորության դեմ հնարավորինս պայքարել երկկողմ, տարածաշրջանային, բազմակողմ և համաշխարհային հիմունքներով, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում փոխադարձ իրավական օգնության մասին համաձայնագրեր կնքելու միջոցով՝ նպատակ ունենալով հայտնաբերել, ձերբակալել և հետապնդում իրականացնել անդրազգային հանցագործություն կատարած կամ նման հանցագործությունների համար մեղավոր ճանաչ-

ված անձանց, ինչպես նաև մշակել առավել արդյունավետ գործընթաց՝ այդ անձանց հանձնելու կամ քրեական հետապնդում իրականացնելու համար, որպեսզի այդ անձինք «չգտնեն իրենց համար ոչ մի անվտանգ ապաստարան»⁷:

Ելնելով սովորենության գաղափարից՝ յուրաքանչյուր պետություն ինքնուրույն է որոշում, թե որ պետության հետ համագործակցի և կնքի համագործակցության վերաբերյալ համաձայնագրեր: Հայաստանի Հանրապետությունը, օրինակ հանցանք կատարած անձանց հանձնման վերաբերյալ պայմանագրեր է կնքել իր հարևաններից Վրաստանի (1997թ.) և Իրանի Իսլամական Հանրապետության (2006թ.) հետ⁸, իսկ Ադրբեջանի Հանրապետության հետ փոխադարձ որևէ համագործակցություն չի իրականացնում: Սակայն, միաժամանակ անհրաժեշտ է նշվել, որ թեև Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև առկա չէ հանձնման հարաբերությունները կարգավորող պայմանագիր, այնուամենայնիվ երկու պետություններն էլ վավերացրել են Մինսկի կոնվենցիան, ուստի ասել, որ Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև առկա չէ համագործակցության իրավական հիմք, այդքան էլ ճիշտ չէ, այլ է հարցը, որ նման համագործակցություն հնարավոր չէ պատկերացնել պայմանավորված պետությունների միջև առկա հարաբերություններով:

Հանձնման մասին երկկողմ պայմանագրեր ՀՀ-ն կնքել է նաև Բուլղարիայի (1995թ.) և Եգիպտոսի Արաբական Հանրապետության (2007թ.) հետ:

Հանցանք կատարած անձանց հանձնման եվրոպական մոդելի պարագայում հանձնման ավանդական իրավական աղբյուր են տարածաշրջանային համաձայնագրերը, որոնք կնքվում են ընդհանուր աշխարհագրական, սերտ քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային և իրավական համակարգեր ունեցող պետությունների միջև:

⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին ՀՀ օրենք, 2018թ. մարտի 23, Հոդված 2

⁶ Տե՛ս Справочная правовая система «КонсультантПлюс». Раздел «Международные правовые акты».

⁷ Տե՛ս «Հանցանք կատարած անձանց հանձնելու քրեաիրավական կարգավորումը» Արա Ֆիդայան, 2015թ. Երևան, էջ 35

⁸ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև հանձնման մասին» 1997 թվականի պայմանագիր, «Հանձնման համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև» 2006 թվականի:

Այդպիսի տարածաշրջանային համաձայնագրերից կարելի է առանձնացնել օրինակ՝

1. 1957 թվականին Փարիզում ստորագրված Հանձնման մասին Եվրոպական կոնվենցիան:
2. 1961 թվականին կնքված հանձնման մասին Ասիա-աֆրիկյան կոնվենցիան⁹,
3. Բենելյուքսի պետությունների միջև 1962 թվականին կնքված (ուժի մեջ է մտել 1967 թվականի դեկտեմբերի 11-ին) հանձնման և փոխադարձ իրավական օգնության մասին համաձայնագիրը¹⁰:
4. 1962 թվականին կնքված հանձնման մասին Նորդական (Nordic Arrest Warrant) պայմանագիրը՝ կնքված Դանիայի, Իսլանդիայի, Նորվեգիայի, Ֆինլանդիայի և Շվեդիայի միջև:
5. Արաբական պետությունների լիգայի միջև կնքված հանձնման մասին համաձայնագիրը, որը հաստատվել է 1952 թվականի սեպտեմբերի 14-ին Արաբական պետությունների լիգայի խորհրդի կողմից, լրացնում կամ փոխարինում է արաբական առանձին պետությունների միջև գործող առանձին երկկողմ պայմանագրերը¹¹:
6. 1993 թվականին ԱՊՀ երկրների միջև Մինսկում ստորագրված «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարցերի մասին» կոնվենցիան (այսուհետ նաև Մինսկի Կոնվենցիա)¹²:
7. 2002 թվականին Քիշնևում ԱՊՀ պետությունների միջև ստորագրված «Քաղաքացիական, ընտանեկան և քրեա-

կան գործերով իրավական օգնության և իրավական հարցերի մասին» կոնվենցիան (այսուհետ նաև Քիշնևի կոնվենցիա)¹³ և այլն:

Վերը թվարկվածներից Հայաստանի Հանրապետությանն են վերաբերում եվրոպական կոնվենցիան, Մինսկի և Քիշնևի կոնվենցիաները:

Ինչպես Մինսկի, այնպես էլ Քիշնևի կոնվենցիաների կարգավորման առարկաներից մեկը ԱՊՀ անդամ պետությունների միջև հանձնմանը վերաբերող հարցերի կարգավորումն է: Թեև Մինսկի կոնվենցիան ընդօրինակում է իրավական օգնության ծավալի և բովանդակության առումով երկկողմ պայմանագրերին, այն ընդհանուր առմամբ, լուծել է իր առջև դրված խնդիրները՝ լրացնելով քննարկվող ինստիտուտի կարգավորմանը վերաբերող երկկողմ պայմանագրերի բացակայության խնդիրը ԱՊՀ այն անդամ պետությունների համար, որոնք չունեն երկկողմ պայմանագրեր, ունիֆիկացրել է հանձնմանը վերաբերող օրենսդրությունը, վերացրել որոշ հարցերի շուրջ գոյություն ունեցող կոլիզիաները, բարձրացրել քննարկող ինստիտուտի արդյունավետությունը:

ԱՊՀ անդամ-պետությունների հաջորդ քայլը հանձնմանը վերաբերող իրավական հիմքի զարգացումն է 2002 թվականին Քիշնևի կոնվենցիայի կնքմամբ: Հանձնման վերաբերյալ կարգավորումների տեսանկյունից կոնվենցիան էական նորամուծություններ չի կատարել: Դրա հետ միաժամանակ հստակեցրել է արարքի երկկողմ հետապնդելի լինելուն վերաբերող պահանջը՝ սահմանելով, որ դրա բացահայտման համար պարտադիր չէ քրեական օրենքում տերմինների ամբողջական համընկնում:

⁹ Հատկանշական է, որ սովյալ մոդելի ուսումնասիրության ընթացքում նկատվում է այն հանգամանքը, որ 20-րդ դարում հումանիտար իրավունքի զարգացմանը զուգահեռ հանձնման ինստիտուտը սկսեց զարգանալ մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ: Մեկը մյուսի հետևից սահմանվում էին նոր խոչընդոտներ հանձնման գործընթացում՝ ոչ արդարացի դատաքննության ռիսկը, ցմահ ազատազրկման և այլ ռիսկեր: Ինչի արդյունքում 21-րդ դարի սկզբում հանցանք կատարած անձանց հանձնման գործընթացը զգալիորեն բարդացավ, էականորեն նվազեց նաև քննարկվող ինստիտուտի արդյունավետությունը: Հանձնման հիմնական նպատակը՝ հանցավորության դեմ պայքարը, մղվեց երկրորդ պլան: Ինչն էլ որպես հետևանք հանգեցրեց հակառակ տենդենցի՝ որոնք ուղղվեցին հանձնման գործընթացի հեշտացմանը, որի արդյունք եղան վերը նշված համաձայնագրերի կնքում: Ավելի մանրամասն, տե՛ս Международное уголовное право / И.И. Лукашук, А.В. Наумов. М., 1999. С.211, 238, 242-243.

¹⁰ Տե՛ս Benelux Treaty on Extradition and Mutual Assistance in Penal Matters, 1962 [Electronic resource]. URL: <https://uia.org/s/or/en/1100041622> (date of application: 23.08.2020).

¹¹ Տե՛ս League of Arab States, Riyadh Arab Agreement for Judicial Cooperation of April 6 [Electronic resource]. URL: <http://www.refworld.org/docid/3ae6b38d8.html> (date of application: 23.08.2020).

¹² Տե՛ս Մինսկի Կոնվենցիա

¹³ Տե՛ս Քիշնևի կոնվենցիա

Կոնվենցիայի առանձնահատկություններից է այն, որ պայմանավորվող կողմերին պարտավորեցնում է հանցանք կատարած անձին քրեական հետապնդման ենթարկել հայցվող պետությունում, այն դեպքում երբ վերջինս մերժում է հայցող պետության միջնորդությունը¹⁴:

Հանձնման մասին 1957թ. Եվրոպական կոնվենցիան, ի տարբերությունը վերը քննարկված երկուսի, կարգավորում է բացառապես հանցանք կատարած անձանց հանձնմանը վերաբերող հարցեր: 1954 թվականի մայիսի 5-ին Եվրոպայի խորհրդի իրավական և վարչական հարցերով կոմիտեն ներկայացրեց զեկույց, որն իր մեջ բովանդակում էր հանձնման մասին կոնվենցիայի նախագիծ, որը պետք է ծառայեր որպես հիմք Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների միջև բազմակողմ կոնվենցիայի ստեղծմանը վերաբերող հետագա քննարկումների համար: Նկատի ունենալով, որ Կոնվենցիայի նպատակներից էր հանձնմանը վերաբերող հարցերի վերաբերյալ միատեսակ կարգավորումների սահմանումը Եվրոպայի խորհրդի անդամ-պետությունների համար՝ հետևաբար, անհրաժեշտ էր ձեռք բերել ընդհանուր համաձայնություն առնվազն հետևյալ հարցերի շուրջ՝

- Արդյոք կոնվենցիայի անդամները համապատասխան պայմաններում պարտավորված են լինելու բավարարել հանձնման միջնորդությունը, թե նման որոշման կայացումը թողնված պետք է լինի պետությունների հայեցողությանը, այլ խոսքով, հանձնումը պետք է կրեր իմպերատիվ, թե դիսպոզիտիվ բնույթ:
- արդյոք քաղաքական բնույթի հանցագործություններ պետք է սահմանվեն կոնվենցիայով, թե նման հանցագործությունների սահմանումը պետք է թողնվեր հայցվող պետություններին՝ նկատի ունենալով վերջիններիս ազգային օրենսդրությունը, և արդյոք քաղաքական բնույթի հանցագործությունների համար հանձնման մերժումը պետք է լիներ բացարձակ, թե դիսպոզիտիվու-

թյունը կարող էր գերակշռել հայցվող պետությունում:

- Արդյոք կոնվենցիայի անդամները պետք է հնարավորություն ունենային տարբերակելու իրենց և օտարերկրյա քաղաքացիների միջև, թե հանձնման միջնորդությունները պետք է քննարկվեին առանց հաշվի առնելու հանձնման ենթակա անձանց քաղաքացիության պատկանելության հանգամանքը:
- Արդյոք կանոնն առ այն, որ անձը կարող է քրեական հետապնդման ենթարկվել միայն այն հանցագործության համար, որի համար հանձնումը բավարարվել է (principle of speciality) պետք է պահպանվեր բոլոր դեպքերում, թե դրա պահպանումը կարող էր կախված լիներ հայցվող պետությունից, կամ հանձնման ենթակա անձից:
- Արդյոք անձը պետք է ձեռք բերի իմունիտետ հանձնման հիմքը կազմող այն հանցագործությունների համար, որոնց համար քրեական հետապնդման վաղեմության ժամկետներն անցած լինեն հայցող կամ հայցվող պետությունում, կամ էլ երկուսում էլ:
- Արդյոք անձը կարող էր ենթարկվել մահապատժի հայցող պետության օրենսդրությամբ, եթե նման պատիժ սահմանված չլինի հայցվող պետության օրենսդրությամբ:
- նույն անձի նկատմամբ հանձնման միջնորդություն ներկայացրած երկու պետություններից, որը մեկը պետք է ունենար նախապատվություն:
- Որոնք պետք է լինեին իր պետության տարածքով տարանցում թույլ տված պետության իրավունքներն ու պարտականությունները:
- և վերջապես լայն համաձայություն պետք է ձեռք բերվեր հանձնման առարկա հանդիսացող հանցագործությունների վերաբերյալ:

¹⁴ Տե՛ս «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարցերի մասին» 2002թ. կոնվենցիա, հոդված 90: Սույն կոնվենցիայի 120-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունների միջև իրենց գործողությունը դադարեցնում են Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին 1993 թվականի հունվարի 22-ի Կոնվենցիան և դրան կից՝ 1997 թվականի մարտի 28-ի Արձանագրությունը:

Ըստ էության, վերը ներկայացված հարցերն իրենց լուծումն են գտել Կոնվենցիայում, այժմ անդրադառնանք դրանցից որոշներին, ինչպես նաև զուգահեռներ անցկացնենք ներպետական օրենսդրության հետ:

Առաջին հարցը. այն է՝ արդյոք հանձնումը պետք է կրեր իմպերատիվ, թե դիսպոզիտիվ բնույթ, իր լուծումն է գտել Կոնվենցիայի 1-ին հոդվածով, որ ունի հանձնման պարտավորություն վերտառությունը և սահմանում է, որ պայմանավորվող կողմերը **պարտավորվում են** միմյանց հանձնել...: Առկա կարգավորումից արդեն իսկ պարզ է դառնում, որ կողմերը պարտավորվում են կիրառել կոնվենցիայի դրույթները, իսկ քննարկվող հոդվածը, ընդհանուր առմամբ, ունի ընդհանուր նշանակություն ամբողջ կոնվենցիայի համար¹⁵: Միևնույն ժամանակ, թեև կոնվենցիային միանալով, պետությունների համար հանձնումը դառնում է պարտավորություն յուրաքանչյուր համապատասխան դեպքում, սակայն հարկ է նշել, որ Կոնվենցիան թույլ է տալիս անել վերապահումներ, որոնցից օգտվել է նաև Հայաստանի Հանրապետությունը, ինչ մասին կխոսվի ավելի ուշ:

Ինչ վերաբերում է քաղաքական բնույթի հանցագործությունների դեպքում հանձնմանը և դրանց սահմանմանը, ապա պետք է նշել, որ թեև որոշ պետությունների հանձնումը կարգավորող օրենսդրություններով նախատեսված է քաղաքական հանցագործությունների սահմանումը¹⁶, այնուամենայնիվ կոնվենցիան գնաց այլ ճանապարհով, թողնելով յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետություններին որոշել իրենց ներքին օրենսդրությանը համապատասխան, արդյոք կատարվածը կհարմարվի քաղաքական բնույթի հանցագործություն, թե ոչ (Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մաս): Նկատի ունենալով, որ Կոնվենցիայի անդամ պետությունները միաձայն համաձայն չէին, ինչպես այս այնպես էլ կոնվենցիայի նույն հոդվածի 3-րդ մասի հետ, որը սահմանում է, որ «Պետության ղեկավարի կամ նրա ընտանիքի անդա-

մի նկատմամբ մահափորձը կամ սպանությունը, համաձայն սույն Կոնվենցիայի, չպետք է համարվի քաղաքական հանցագործություն», Կոնվենցիան հնարավորություն է տալիս վերապահում կատարել 26-րդ հոդվածի համատեքստում (հակառակ դեպքում նման կարգավորումը ուղղակի հակասության մեջ է օրինակ ԳԴՀ Հանձնման մասին օրենքի կարգավորումների հետ):

Հետևաբար նման հանցագործությունների վերաբերյալ հանձնման հարցում ստանալիս՝ Հայաստանի Հանրապետությունը դրանք պետք է քննարկի ելնելով այն հանգամանքից արդյոք այդ հանցագործությունը համարվում է քաղաքական կամ դրա հետ կապ ունեցող իր ներպետական օրենսդրությամբ կամ ՀՀ-ի համար գործող միջազգային պայմանագրերով:

Ինչ վերաբերում է սեփական քաղաքացիների հանձնման վերաբերյալ միջնորդություններին, ապա պետք է նշել որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր կողմ պետք է իրավունք ունենա մերժելու սեփական քաղաքացիների հանձնումը:

Անհրաժեշտ է նշել, որ քաղաքացիների հանձնման արգելքը, ինչպես արդեն նշվել է, սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ, բացի այդ նման կարգավորում նախատեսված է նաև Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգրքի 488-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով: Կոնվենցիայի քննարկվող հոդվածից ՀՀ-ն կատարել է նաև վերապահում:

Հաջորդ հարցը, որին կցանկանայինք առավել անդրադառնալ, այսպես կոչված Principle of Speciality – միայն այն արարքների համար անձին պատասխանատվության ենթարկելը, որոնց համար հանձնումը բավարարվել է սկզբունքն է:

Կոնվենցիայի 14-րդ հոդվածի համաձայն՝ «Այն անձը, որը հանձնվել է, չպետք է ենթարկվի քրեական հետապնդման, դատապարտվի կամ կալանավորվի որևէ հանցագործության համար, որը նա կատարել է մինչև հանձնումը,

¹⁵ Տե՛ս <https://rm.coe.int/16800c92bc>, 24.04.2022

¹⁶ Տե՛ս Գերմանիայի Դեկլարատական Հանրապետության Հանձնման մասին 1929թ. դեկտեմբերի 23-ի հոդված 3-ը քաղաքական հանցագործությունները սահմանում է որպես պատժելի ոստիկանություն՝ անմիջականորեն ուղղված պետության գոյությանն ու անվտանգությանը, ուղղված պետության ղեկավարին կամ կառավարության անդամին, սահմանադրական մարմնին, ուղղված քաղաքացիների իրավունքներին և պարտականությունների ընտրությունների բնագավառում, ինչպես նաև այլ պետությունների հետ բարեադրացական հարաբերությունները վնասելուն:

բացառությամբ այն հանցագործության, որի կատարման համար նրան հանձնել են, և նրա անձնական ազատությունը չպետք է սահմանափակվի, բացառությամբ...»

Համանման կարգավորում նախատեսված է ինչպես «Քաղաքացիական ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 1993թ. Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածով¹⁷, այնպես էլ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածով, որի 1-ին մասի համաձայն՝ եթե սույն գլխի նորմերով սահմանված կարգով անձը Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի իրավասությանն է հանձնվել նրա նկատմամբ քրեական հետապնդում սկսելու կամ շարունակելու կամ դատավճիռն ի կատար ածելու համար, ապա առանց հանձնումը թույլատրած համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմնի համաձայնության՝ այդ անձը չի կարող քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվել մինչև նրան հանձնելը կատարած այն հանցագործության համար, որով նա չի հանձնվել:

Զնայած գոյություն ունեցող հստակ կարգավորումներին՝ Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ մտելուց կարճ ժամանակ անց, ՀՀ իրավապահ մարմնիներին և դատարաններին կողմից թույլ էին տրվում քննարկվող սկզբունքի համատարած խախտումներ, որոնց բազմիցս անդրադարձել է ՀՀ Վճռաբեկ դատարանը իր կողմից կայացվող որոշումներում:

Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն իր բազմաթիվ որոշումներում անդրադառնալով վերոնշյալ սկզբունքին, նշում է, որ միջազգային պայմանագրերը ՀՀ օրենսդրության բաղկացուցիչ մասն են: Անդրադարձ է կատարում նաև ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն որի՝ Հա-

յաստանի Հանրապետության տարածքում, անկախ հանցանքի կատարման վայրից, քրեական գործերով վարույթն իրականացվում է սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ: Վերլուծում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, ինչպես նաև կոնվենցիայի համապատասխան հոդվածները և հանգում այն եզրակացության, որ անձին հստակ հոդվածներով քրեական պատասխանատվության ենթարկելու համար հանձնելու մասին միջնորդություն երկայացնել հայցող պետություն, իսկ հանձնման միջնորդությունը բավարարելուց հետո վերջինիս բացի հայցվածից, կամ դրաց վերաորակումից հետո պատասխանատվության ենթարկելիս նաև այլ հանցանքների համար՝ խախտվում է ինչպես միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները, այնպես էլ ներպետական օրենսդրությունը, քանի որ առաջանում է այնպիսի իրավիճակ, որ անձը ենթարկվում է պատժի և պատասխանատվության այնպիսի հանցանքների համար, որոնց համար վերջինս ի հանձնվել¹⁸:

Ամփոփելով, վերոգրյալը կարող են փաստել, որ ըստ էության, ինչպես ներպետական օրենսդրությամբ, այնպես էլ միջազգային պայմանագրերով բացի հանձնման ինստիտուտի կիրառման համար նորմեր սահմանելուց, դրանք նպատակ են հետապնդում նաև սահմանել այնպիսի կարգավորումներ, որոնք հայցվող պետության համար երաշխիքներ կտրամադրեն առ այն, որ անձին հանձնելով հայցող պետությանը, այդ պետությունը պարտավորված կլինի վերջինիս միջազգային պայմանագրերով ստանձնած իրավունքների ապահովման պարտականությամբ, դրանով նվազագույնի հասցնելով հանձնված անձանց իրավունքների խախտման հնարավոր ռիսկերը:

¹⁷ 1993թ. Մինսկի Կոնվենցիայի 66-րդ հոդվածի համաձայն՝ Առանց հարցվող Պայմանավորվող կողմի համաձայնության՝ հանձնված անձին չի կարելի քրեական պատասխանատվության կամ պատժի ենթարկել մինչև հանձնելը նրա կատարած այն հանցագործության համար, որի կապակցությամբ նա չի հանձնվել:

¹⁸ Տես ՀՀ վճռաբեկ դատարանի Արտակ Բրուտյանի վերաբերյալ թիվ ՎԲ/293/06 գործով 2006 թվականի դեկտեմբերի 22 որոշում: Տես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի Մարտին Միքայելյանի վերաբերյալ թիվ ՎԲ/271/06 գործով 2006 թվականի նոյեմբերի 24-ի որոշումը, ՀՀ վճռաբեկ դատարանի Սպարտակ Ալավերդյանի վերաբերյալ թիվ ՎԲ/279/06 գործով 2006 թվականի նոյեմբերի 24-ի որոշումը, ՀՀ վճռաբեկ դատարանի Հասմիկ Կյուրդինյանի վերաբերյալ թիվ ՎԲ/234/06 գործով 2006 թվականի հոկտեմբերի 31-ի որոշումը և այլն:

ՄԱՐԻԱՄ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀՌՀ իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ

ԱՌԱՆՁԻՆ ԴՈՒՄՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՎԿԱՅՈՂ ԱՅԼ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻՎ ԿՈՂՄԻ ՀԱՏԿԱՆԻՇ

Օբյեկտիվ կողմից առանձին դատանությունը վերաբերում է ինչպես սպանության կատարման եղանակին, այնպես էլ հանցավորի կողմից առանձին դատանություն ցուցաբերելը վկայող այլ հանգամանքներին:

Դատական բարձրագույն ատյանը սահմանել է, որ «առանձին դատանության հատկանիշ, մասնավորապես առկա է, երբ կյանքից զրկելուց առաջ կամ սպանության ընթացքում տուժողի նկատմամբ կիրառվել են տանջանքներ, խոշտանգում, կամ նա ենթարկվել է ծաղրուծանակի կամ սպանությունը կատարվել է այնպիսի եղանակով, որը հանցավորի համար ակնհայտորեն կապված է տուժողին առանձնահատուկ տանջանքներ պատճառելու հետ (մեծ թվով մարմնական վնասվածքներ հասցնելը, տանջալիորեն ազդող թույն օգտագործելը, մարդուն կենդանի կիզելը, երկար ժամանակով սննդից, ջրից զրկելը և այլն): Առանձին դատանությունը կարող է արտահայտվել նաև այն ժամանակ, երբ սպանությունը կատարվել է տուժողի մերձավորների ներկայությամբ և հանցավորը գիտակցել է, որ իր գործողություններով նրանց հատուկ տառապանքներ է պատճառում»: Տրված սահմանումից հետևում է, որ ինչպես սպանության կատարման եղանակը, այնպես էլ առանձին դատանություն ցուցաբերելը վկայող այլ հանգամանքները հանդիսանում են առանձին դատանությամբ կատարված սպանության օբյեկտիվ հատկանիշներ: Առանձին դատանությամբ կատարված սպանության եղանակները բազմաթիվ են: Սպանության կատարման եղանակը հաճախ ակնհայտորեն վկայում է հանցավորի դրսևորած առանձին դատանության և դրա արդյունքում տուժողին կամ նրա մերձավորին անասելի,

ուժեղ, տևական, ֆիզիկական և (կամ) հոգեկան տառապանք պատճառելու մասին: Խոսքը վերաբերում է անձին կենդանի կիզելու, անձին կենդանի թաղելու, եռացող ջրի մեջ գցելու, բարձր ջերմային ռեժիմով շոգեբաղնիքում փակելու, սառնարանային պայմաններում պահելու, տաքացած արդուկով այրվածքներ պատճառելու, փոփոխական էլեկտրական հոսանքով հոսանքահարելու, ծանրաքարերով կապված անձին ջրախեղդ անելու և նման այլ եղանակներով կատարված սպանություններին, որոնք ըստ կատարման եղանակի ակնհայտորեն հանդիսանում են առանձին դատանությամբ կատարված սպանություններ: Որպես առանձին դատանությամբ կատարված սպանության եղանակ կարող են հանդիսանալ մասնավորապես նաև՝ մեծ թվով մարմնական վնասվածք հասցնելը, տանջալիորեն ազդող թույն օգտագործելը, երկար ժամանակով սննդից, ջրից զրկելը և այլն:

Որպես առանձին դատանություն ցուցաբերելը վկայող այլ հանգամանքներ կարող են հանդիսանալ կյանքից զրկելու հետ կապված այնպիսի գործողությունները, որոնք ինքնին սպանության կատարման եղանակ չեն հանդիսանում: Որպես այդպիսիք կարող են հանդիսանալ մերձավորների ներկայությամբ կատարված սպանությունը, անձի սպանությունը հաջորդ գոհի ներկայությամբ, ինչպես նաև սպանությունից առաջ տուժողին տանջանքների, խոշտանգման, անարգանքի կամ ծաղրուծանակի ենթարկելը: Այն դեպքում, երբ տանջանք, խոշտանգում, անարգանք, ծաղրուծանակ համարվող գործողությունները կիրառվել են անձին կյանքից զրկելու ընթացքում, ապա այդ դեպքում այդպիսիք կա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 130 2022

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն դատարանի պլենումի որոշումների ժողովածու 1991-1995թթ., Երևան, 1995, էջ 80-81:

րող են համարվել որպես սպանության կատարման եղանակ:

Բոլոր դեպքերում, ինչպես նկատել ենք, **արարքը որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն որակելու համար անհրաժեշտ է որպեսզի առանձին դաժանությունն ընդգրկված լինի հանցավորի դիտավորությամբ:** Այսինքն՝ առանձին վերցրած միայն սպանության կատարման եղանակը կամ այլ հանգամանքները, առանց հանցակազմի սուբյեկտիվ կողմի հաշվառման, չեն կարող հիմք հանդիսանալ արարքը որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն որակելու համար: Օրինակ, բազմաթիվ մարմնական վնասվածքները ինքնին, առանձին վերցրած, չեն կարող հիմք հանդիսանալ արարքը որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն որակելու համար: Որպես կանոն առանձին դաժանությունը բացակայում է նաև, երբ բազմաթիվ վնասվածքները հասցվել են ժամանակի կարճ հատվածում՝ մահն արագացնելու նպատակով: Նույնը վերաբերում է նաև մերձավորների սպանության այն դեպքերին, երբ հանցավոր դիտավորությունն ուղղված չի եղել տուժողներին առանձին տանջանքներ և տառապանքներ պատճառելուն: Հետևաբար, բազմաթիվ վնասվածքներ հասցնելու փաստը կամ մերձավորների սպանությունը, ինչպես նաև մերձավորի ներկայությամբ կատարված սպանությունը չի կարող առանձին դաժանության առկայությունը ապացուցող միակ պայմանը լինել, առանց հանցավորի առանձին դաժանությունը վկայող դիտավորության հաստատման, առանց հանցագործության սուբյեկտիվ կողմի մանրակրկիտ վերլուծության:

Տ.Ա. Ստելմախ², Դ.Ա.Տրավկին³, Ե.Վ. Սերյոգինան, Տ.Ա. Կազանովան և այլոք նշել են, որ այս բնույթի գործերի քննության ընթացքում իրավակիրառների ուշադրությունը հիմնականում ուղղված է եղել առանձին դաժանության օբյեկտիվ կողմի հատկանիշների

բացահայտմանը, իսկ առանձին դաժանության նկատմամբ հանցավորի սուբյեկտիվ վերաբերմունքին շատ դեպքերում անդրադարձ չի կատարվում, այսինքն՝ անտեսվում կամ անբավարար գնահատման է արժանանում հանցավորի դիտավորության նշանակությունը⁴:

Չնայած առանձին դաժանությամբ կատարված սպանությունների մեջ սպանության կատարման եղանակի թվային գերակայությանը, սպանության կատարման եղանակը առանձին դաժանությամբ կատարված սպանության օբյեկտիվ կողմի միակ հատկանիշը չէ: Օբյեկտիվ կողմից առանձին դաժանությունը կարող է պայմանավորված լինել և հանցավորի կողմից առանձին դաժանություն ցուցաբերելը վկայող այլ հանգամանքներով:

Դատական պրակտիկայում, սակայն քիչ չեն այն դեպքերը, երբ հանցավորի գործողությունները մի դեպքում դիտվել են որպես առանձին դաժանությամբ կատարված սպանության եղանակ, մյուս դեպքերում՝ որպես հանցավորի կողմից առանձին դաժանություն ցուցաբերելը վկայող այլ հանգամանքներ:

Սպանության իրավիճակը կարող է վկայել տուժողին կամ նրա մերձավորներին առանձին հոգեկան տառապանք պատճառելու մասին, իսկ սպանության բնույթը պարզող այլ հանգամանքները կարող են վկայել հանցավորի կողմից հանցագործության կատարման ընթացքում առանձին դաժանության դրևորման մասին:

Առանձին դաժանությամբ կատարված սպանության օբյեկտիվ կողմի այլ հատկանիշներին է վերաբերում հանցագործության կատարման իրավիճակը և կատարված հանցագործության բնույթը:

Ա.Ի. Չուչակի կարծիքով հանցագործության կատարման իրավիճակը բնութագրվում է որպես պայմանների և հանգամանքների համակցություն, որոնց դեպքում իրականացվում է հանրորեն վտանգավոր արարքը⁵:

² Տե՛ս Стельмах Т.А. Проблемы теории и судебной практики квалификации убийства по признаку особой жестокости. //Российская судья 2010 N10, էջ 17-19//.

³ Տե՛ս Травкин Д.А. Проблемы уголовно-правовой квалификации убийства с особой жестокости. //Наука-rastudent.ru 2017, N3 (039)//.

⁴ Տե՛ս Е.В. Серегина, Т.А. Казанова Сложности уголовно-правовой оценки признаков преступлений, совершенных с особой жестокостью. International Journal of Humanities and Natural Sciences, vol. 5. Part 2.

⁵ Տե՛ս Наумов А.В. Российское уголовное право. Курс лекций. В двух томах, М. 2004, էջ 207.

Ա.Ֆ. Իստոմինի կարծիքով հանցագործության կատարման իրավիճակը այդ պայմանների համակցություն է, որում ընթանում և զարգանում է հանցավոր արարքի օբյեկտիվ կողմը⁶:

Փաստորեն հանցագործության կատարման իրավիճակը այդ պայմանների և հանգամանքների ամբողջությունն է, որում կատարվում է հանցագործության օբյեկտիվ կողմը:

Ինչպես արդեն նկատել ենք, սպանության կատարման եղանակի վերլուծության դեպքում, հանցակազմի օբյեկտիվ կողմի ֆակտուալտիվ հատկանիշները, այդ թվում՝ հանցագործության կատարման եղանակը, իրավիճակը՝ կապված քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածի դիսպոզիցիայում ամրագրված կամ չամրագրված լինելուց, մի դեպքում ձեռք է բերում հանցակազմի պարտադիր հատկանիշի բնույթ, մյուս դեպքում՝ շարունակում է մնալ որպես ֆակտուալտիվ հատկանիշ:

Մասնավորապես՝ երկարատև հոգեճնշող իրավիճակի հետևանքով հանկարծակի առաջացած հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանության, անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցմամբ հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ կատարված սպանությունների դեպքում, փաստորեն հանցագործության կատարման իրավիճակը հանդիսանում է համապատասխան հանցակազմերի պարտադիր հատկանիշ:

Ինչ վերաբերում է առանձին դաժանությամբ կատարված սպանության դեպքում հանցագործության կատարման իրավիճակին, ապա այն ուղղակիորեն պայմանավորված է առանձին դաժանությունը վկայող այլ հանգամանքներով:

Օրինակ՝ ոգելից խմիչք օգտագործած վիճակում գտնվող Լ-ի և Գ-ի միջև ծագած վեճը հետագայում վերածվել է փոխադարձ կռվի, որի ժամանակ Լ-ն դանակով բազմաթիվ վնասվածքներ է պատճառել Գ-ի դեմքի և պարանոցի շրջանին: Այդ ամբողջ ընթացքում Գ-ն բռնե-

լով Լ-ի ձեռքից փորձել է պաշտպանվել, սակայն չի կարողացել ազատվել նրանից: Տեսնելով, որ Գ-ն կենդանության նշաններ է ցույց տալիս, Լ-ն վերցրել է խոհանոցային դանակը և կտրել Գ-ի պարանոցը, որի արդյունքում տուժողը մահացել է: Դատական բարձրագույն ատյանը ուժի մեջ թողնելով ստորադաս դատարանի կողմից կայացրած դատական ակտը, որով Լ-ն դատապարտվել է առանձին դաժանությամբ սպանություն կատարելու համար, միաժամանակ նշել է, որ սպանությունը առանձին դաժանությամբ կատարված որակելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ օրենքը առանձին դաժանությունը կապում է ինչպես սպանության կատարման եղանակի, այնպես էլ հանցավորի կողմից դրսևորած առանձին դաժանությունը վկայող այլ հանգամանքների հետ⁷:

Հանցագործության կատարման իրավիճակը այն օբյեկտիվ պայմաններն են, որոնց դեպքում տեղի է ունենում հանցագործությունը⁸: Իրավիճակը վերաբերում է հանցագործության արտաքին հանգամանքներին, որն առանձին դաժանությամբ կատարված սպանության դեպքում հանդիսանում է հանցագործության օբյեկտիվ կողմի հատկանիշ՝ առանձին դաժանության դրսևորման վիճակ:

Հանցագործության կատարման իրավիճակը խիստ կարևորվում է արարքն առանձին դաժանությամբ կատարված համարելու համար: **Հանցագործության կատարման իրավիճակը կարող է վկայել հանցավորի կողմից տուժողին և (կամ) նրա մերձավորներին առանձին հոգեկան տառապանքներ պատճառելու մասին: Այն միաժամանակ կարող է վկայել նաև հանցավորի առանձին դաժանության դրսևորման մասին:**

Այն հանգամանքները, որոնք բնութագրում են հանցագործության կատարման իրավիճակը և վկայում հանցագործությունն առանձին դաժանությամբ կատարված լինելու մասին, իրավաբանական գրականության մեջ ընդունված է պայմանականորեն բաժանել երկու մասի՝ տուժողին վերաբերելի և տուժողի մերձավորներին վերաբերելի հանգամանքների:

⁶ Տե՛ս Уголовное право России. Общая и Особенная части. Учебник/ Под ред. В.К. Дюнова.М. 2008, էջ 98.

⁷ Տե՛ս Бюллетень Верховного суда РСФСР. 1978. №2, էջ 8-9.

⁸ Տե՛ս Словарь по уголовному праву. М., 1997. էջ 292.

Իրավաբանական գրականության մեջ վեճերի տեղիք է տվել այն հարցը, թե արդյոք սպանության կատարման ընթացքում տուժողին ուժեղ, տևական, հոգեկան տառապանքներ պատճառելը պետք է դիտել որպես առանձին դաժանության դրսևորում թե՛ ոչ:

Որոշ հեղինակներ պնդում են, որ սպանությունը կարող է համարվել առանձին դաժանությամբ կատարված միայն այն դեպքում, երբ խոսքը գնում է տուժողին ֆիզիկական տառապանքներ պատճառելու մասին: Օրինակ՝ Ս.Մ. Կորաբելնիկովը գտնում է, որ եթե սպանության կատարումից առաջ հանցավորը բանավոր կամ գրավոր եղանակով կամ ժեստերով ստորագնում է տուժողին, իսկ հետո սպանում նրան, ապա այդպիսի գործողությունները չեն կարող գնահատվել որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն: Ըստ նրա՝ օրենքի իմաստով, առանձին դաժանությունը պետք է արտահայտվի հենց ֆիզիկական բռնությամբ: Հեղինակների կարծիքով դատական պրակտիկան ևս սպանությունը ճանաչում է առանձին դաժանությամբ կատարված միայն, եթե առկա է ֆիզիկական բռնություն: Ինչ վերաբերում է հոգեկան բռնությանը, ապա հեղինակի կարծիքով այն առկա է միայն այն դեպքում, երբ սպանությունը կատարվել է տուժողի մերձավոր ազգականների և հարազատների ներկայությամբ, բայց ուղղված չէ տուժողի դեմ⁹:

Հակառակ դիրքորոշում ունեցող հեղինակները գտնում են, որ տուժողին առանձին հոգեկան տառապանքներ պատճառելը նույնպես կարող է հիմք հանդիսանալ սպանությունը առանձին դաժանությամբ կատարված համարելու համար:

Այսպես՝ Լ.Ա. Անդրեևան նշում է, որ առանձին դաժանությամբ կատարված սպանության բարձր հանրային վտանգավորությունը պայմանավորված է ինչպես տուժողի ուժեղ տառապանքներով, այլնպես էլ հանցավորի բացառիկ դաժանությամբ: Տուժողի տառապանքները կարող են լինել ոչ միայն ֆիզիկական, այլև՝ հոգեկան: Նրա կարծիքով սպանությունից անմիջապես առաջ տուժողին անարգելը

հանդիսանում է առանձին դաժանության հատկանիշ: Այդ առումով հեղինակը դատական պրակտիկայից վկայակոչել է Ի-ի վերաբերյալ քրեական գործը, համաձայն որի Ի-ն խանդի հողի վրա որոշել է սպանել կնոջը և այդ նպատակով վերջինիս կապելով մահճակալին սկսել է պատմել, թե ինչպես է սպանելու նրան՝ մարմնի տարբեր մասերը կտրելով: Ընդ որում՝ այդ ընթացքում, Ի-ն ցուցադրաբար սկսել է սրել դանակը, կինը լացել է, հառաչել, աղերսել նրան հանգստանալ և չսպանել իրեն: Սակայն, տուժողի թախանձագին աղերսներն որևէ արդյունք չեն տվել և հանցավորի կողմից կնոջն անարգելը ավարտվել է տուժողի սրտին դանակի մահացու հարված հասցնելով, որն էլ հանգեցրել է նրա մահվան¹⁰:

Ս.Ի. Տիշկևիչը նույնպես կարծում է, որ սպանության դեպքում տուժողին հոգեկան տառապանքներ պատճառելը դա առանձին դաժանության դրևորում է: Նրա կարծիքով այդ ամենը կարող է դրսևորվել տուժողին ծաղրելով, օրինակ՝ հանցավորի կողմից սպանությունից առաջ ծրագրված հանցավոր արարքի կատարման մանրամասները նկարագրելով, տուժողի սպանությունից հետո նրա մերձավորների նկատմամբ կատարվելիք գործողությունները նկարագրելով, կեղծ հարձակումներ կատարելով, զենքով մեկից ավելի անգամ տուժողի վրա նշան բռնելով, հանցագործության գործիքով նրա մարմնին դիպչելով, մահվան վրա հասնելը դիտավորյալ ձգձգելով¹¹:

Մեր կարծիքով, սպանությունը պետք է համարվի առանձին դաժանությամբ կատարված նաև այն դեպքում, երբ հանցավորը դիտավորությամբ տուժողին պատճառել է ուժեղ, տևական հոգեկան տառապանք: Այսինքն՝ դաժանությունն իր մեջ կրում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեկան տառապանքի պատճառման բաղադրիչ:

Սույն դիրքորոշման իրավացիությունը հաստատվում է նաև ՌԴ գերագույն դատարանի պլենումի 1999 թվականի հունվարի 27-ի «Սպանության գործերով դատական պրակտիկայի մասին» որոշմամբ, համաձայն որի՝ առանձին

⁹ Ст'у Уголовная ответственность за посягательства на жизнь... С. 15.
¹⁰ Ст'у Андреева Л.А. Квалификация убийств, совершенных при отягчающих обстоятельствах. СПб., 1998 էջ 16.
¹¹ Ст'у Тишкевич С.И. Квалификация преступлений против жизни. Минск. 1991 էջ 51.

դաժանությունն առկա է նաև այն դեպքում, երբ կյանքից զրկվելուց առաջ կամ դրա ընթացքում տուժողը ենթարկվել է անարգանքի:

Անարգանքը՝ դա չար և վիրավորական ծաղրանքն է¹², որն առավելապես կապվում է այլ հանգամանքների հետ և չի կարող հավասարեցվել սպանության կատարման եղանակի հետ: Հետևաբար, ըստ ՌԴ գերագույն դատարանի պլենումի, տուժողի հոգեկան տառապանքները դրանք հանգամանքներ են, որոնք հիմք են տալիս սպանությունը որպես առանձին դաժանությամբ կատարված ճանաչելու համար: Այդ իսկ պատճառով, կյանքից զրկելուց առաջ կամ դրա ընթացքում տուժողին պատճառված ուժեղ հոգեկան տառապանքները վկայում են արարքն առանձին դաժանությամբ կատարված լինելու մասին: Տուժողի հոգեկան տառապանքները կարող են պատճառվել սպանությանը նախորդող կամ ուղեկցող հանցավորի դիտավորությամբ ընդգրկված բազմաթիվ արտաքին հանգամանքների ուժով:

Կյանքից զրկելուց առաջ կամ կյանքից զրկելու ընթացքում տուժողին անարգելը, ստորացնելը կամ մոտալուտ մահվան գիտակցմամբ պայմանավորված այլ նվաստացումները և դրանց արդյունքում տուժողին ուժեղ հոգեկան տանջանքներ պատճառելը նույնպես առանձին դաժանության դրսևորումներ են, անկախ նրանից, թե կյանքից զրկելու եղանակը կապված է առանձին դաժանության դրսևորման հետ, թե՛ ոչ: Օրինակ՝ հանցավոր խմբի անդամները առևանգված երկու տուժողներին տեղափոխել են անտառ և մահվան սպառնալիքի տակ ստիպել են նրանց փորել իրենց գերեզմանափոսերը, որից հետո ատրճանակից արձակած մեկական կրակոցով հերթականությամբ սպանել նրանց: Չնայած ատրճանակից արձակած կրակոցով կատարված սպանությունը առանձին վերցրած չի հանդիսանում առանձին դաժանության դրսևորման եղանակ, սակայն այն հանգամանքները և իրավիճակը, որոնցում կատարվել է նշված սպանությունը, վկայում են հանցավորների դրսևորած առանձին դաժանության մասին, որքանով որ վերջիններս գիտակցել են իրենց գործողությունների հետևանքով տուժողներին ֆի-

զիկական և (կամ) հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, ցանկացել և գիտակցաբար թույլ են տվել այն:

Տուժողին անարգելը, ստորացնելը կամ մոտալուտ մահվան գիտակցմամբ պայմանավորված այլ նվաստացումները և դրանց արդյունքում նրան ուժեղ ֆիզիկական և հոգեկան տանջանքներ և տառապանք պատճառելը առանձին դաժանության դրսևորումներ են, որտեղ թե սպանության կատարման եղանակը և թե հանցավորի առանձին դաժանությունը վկայող այլ հանգամանքները կարող են համատեղվել և զուգորդվել: Օրինակ՝ երկու կանանցից և մեկ տղամարդուց բաղկացած հանցավոր խմբի անդամներ Պ-ն, Ֆ-ն և Ս-ն նախաքննական մարմնի կողմից մեղադրվել են Ֆի-ի առանձին դաժանությամբ սպանության կատարման համար: Համաձայն գործով ձեռք բերված տվյալների Ֆի-ի սպանությունը ծրագրելուց հետո հանցավոր խումբը տուժողին կանչել է անտառ, որտեղ խմբի տղամարդ անդամ Ֆ-ն տուժողին ցուցադրել է ձեռքին եղած դանակը, իսկ խմբի անդամ Պ-ն ասել է, որ նա պետք է սպանվի: Այնուհետև, տուժողին կապելով իրենց հետ բերած պարանով, խմբի անդամ Պ-ն մոմի լույսի տակ տուժողին ներարկել է ռելանիում: Այդ ընթացքում խմբի տղամարդ անդամ Ֆ-ն փորել է գերեզմանափոս և արձակելով Ֆի-ին, նրան տարել է գերեզմանափոսի մոտ: Ֆի-ն խնդրել է իրեն չսպանել, խոստանալով չդիմել ոստիկանություն, սակայն Պ-ն ասել է, որ նրան չի կարելի կենդանի թողնել: Ֆ-ն դանակով հարվածել է Ֆի-ի ձախ կրծքի շրջանին՝ սրտի հատվածում: Կրծքի թափանցող վերք ստանալուց հետո սարսափաբար կինը փորձել է փախչել, սակայն Ֆ-ն հասնելով նրան բռնել և կրկին բերել է փոսի մոտ: Տուժողը կրկին խնդրել է չսպանել իրեն, կանչել շտապօգնության մեքենա, սակայն Պ-ն պահանջել է, որ Ֆ-ն դանակով կրկին հարվածի Ֆի-ին, որից Ֆ-ն հրաժարվել է: Այն բանից հետո, երբ հանցավոր խմբի անդամ Ս-ն նույնպես հրաժարվել է դանակով հարվածել Ֆի-ին, Պ-ն նրան է տվել բահը և Ս-ն մի քանի անգամ բահով հարվածել է տուժողին, ապա բահը փխանցել Պ-ին: Վերջինս պահանջել է, որ Ֆի-ն

¹² Слово Ожегов С.И. Словарь русского языка. М., 1990, էջ 137.

մտնի և պարկի գերեզմանափոսի մեջ՝ դեմքով դեպի հողը, և այն բանից հետո, երբ կինը կատարել է Պ-ի պահանջը, վերջինս բահի մետաղական սուր մասով մի քանի անգամ հարվածել է տուժողի գլխին և պարանոցին: Համոզվելով, որ տուժողը մահացել է, հանցավոր խմբի անդամները նրան ծածկել են հողով:

Նման պայմաններում Վորոնեժի մարզային դատարանը կայացրել է բանականությունից դուրս, անհեթեթության հասնող որոշում՝ վերաորակելով հանցավորների արարքը, գտնելով, որ քրեական գործում բացակայում է տուժող Ֆի-ին առանձին դաժանությամբ սպանելու դիատվորության մասին ապացույցները:

Նկատի ունենալով մարզային դատարանի կողմից հանցագործների դրսևորած առանձին դաժանությունը վկայող բազմաթիվ հանգամանքների անտեսումը, և ընդհանրապես՝ առանց տուժողին առանձին տանջանքներ և տառապանք պատճառելը հերքող որևէ պատճառաբանության բերման, մարզային դատարանի կողմից կայացված դատավճռի անհիմն և ապօրինի լինելը, մեղադրողի կողմից այն բողոքարկվել է, որն էլ բավարարվել է Ռուսաստանի Դաշնության գերագույն դատարանի քրեական գործերով դատական կոլեգիայի կողմից:

Այս գործով, հաջորդ անհեթեթությունը, որը նկատել ենք տվյալ օրինակի ուսումնասիրման ժամանակ, այն է, որ մարզային դատարանը Ֆ-ի, Պ-ի և Ս-ի արարքը որակել է ոչ թե որպես խմբի կողմից կատարված սպանություն, այլ վերջիններս դիտարկվել են որպես Ֆ-ին օժանդակողներ, իսկ Ֆ-ի արարքը որակվել է որպես հասարակ սպանություն¹³:

Ակնհայտ է, որ տվյալ դեպքում առկա է հանցավոր խմբի անդամների առավել քան դաժան բացասական հատկանիշները, քան հասարակ սպանության դեպքում դրևորվող դաժանության ժամանակ: Ինչպես սպանության կատարման եղանակը, այնպես էլ հանցագործության կատարման իրավիճակը վկայում են հանցագործություն կատարող անձանց առանձին, հատուկ, անգթության, անողորմության, անխղճության, մարդկային որակներից զուրկ, ստոր վարքագծի մասին:

Այսինքն՝ հանցավորի առանձին դաժա-

նության մասին ակնհայտորեն կարող է վկայել հանցավոր արարքի կատարման բնույթը:

Հանցագործության կատարման իրավիճակին է վերաբերում նաև տուժողի սպանությունը մյուս տուժողի ներկայությամբ:

Ինչպես նշել է Ա.Ա. Թամազյանը, որպես առանձին դաժանության օբյեկտիվ կողմի հատկանիշ կարող է հանդիսանալ անձի սպանությունը հաջորդ զոհի ներկայությամբ: Օրինակ՝ Արմավիր քաղաքի բնակիչներ Ա-ն, Բ-ն և Գ-ն գույք հափշտակելու նպատակով զինված մուտք են գործել նույն քաղաքի բնակիչ Կ-ի բնակարան, զենքի սպառնալիքի տակ կապել ընտանիքի բոլոր անդամներին և այնտեղ գտնվող հարևանին, որից հետո դանակների տասնյակ հարվածներով հերթականությամբ սպանել բնակարանատեր ամուսիններին, նրանց երկու անչափահաս երեխաներին, բնակարանատիրոջ հորը, հարևանին և դիմել փախուստի ու նույն օրը ձերբակալվել «Զվարթնոց» օդանավակայանում՝ հանրապետությունից հեռանալու պահին: Հանցավոր խմբի անդամների արարքը, ծանրացնող բազմաթիվ այլ հանգամանքների հետ միասին, որակվել է նաև որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն՝ պայմանավորված հաջորդ զոհի ներկայությամբ կատարված սպանությամբ:

Մեկը մյուսի ետևից մի քանի անձանց սպանության այն դեպքերում, երբ հանցավորը գիտակցում է, որ իր գործողություններով տուժողներին պատճառում է առանձնակի հոգեկան տառապանքներ՝ արարքը ենթակա է որակման որպես առանձին դաժանությամբ երկու կամ ավելի անձանց սպանություն: Օրինակ՝ հանցավոր խմբի կողմից մեկ ժամվա ընթացքում մեկը մյուսի աչքի առջև ատրճանակից արձակված կրակոցով պատանդ վերցրած երեք անձի սպանությունը ենթակա է որակման նաև որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն՝ անկախ այն հանգամանքից, որ գլխին արձակված կրակոցով կատարված սպանության եղանակն ինքնին առանձին դաժան չի հանդիսանում: Տվյալ դեպքում սպանության առանձին դաժանության մասին վկայում են այն հանգամանքները և իրավիճակը, որում կատարվել է արարքը:

¹³ Стн Бюллетень Верховного суда РСФСР. 1994. №8, էջ 6-7.

Այս ամենով հաղերձ հարկ է նկատել, որ բոլոր հանգամանքներում և իրավիճակներում չէ, որ մեկը մյուսի ետևից կատարված երկու անձանց սպանությունը կարող է որակվել որպես առանձին դաժանությամբ կատարված, նաև այն պարագայում, երբ նրանք մերձավորներ են: Այն դեպքում, երբ գործի հանգամանքները վկայել են այն մասին, որ տուժողին առանձին հոգեկան տառապանքներ պատճառելու չի ընդգրկվել հանցավորի դիտավորությամբ, օրինակ՝ հանցավորը փոխադարձ կռվի ժամանակ մեկը մյուսից հետո դանակի հարվածով սպանել է երկու եղբայրների, ապա արարքը չի կարող որակվել առանձին դաժանությամբ կատարված սպանություն միայն հիմնվելով հաջորդ գոհի ներկայությամբ կատարված սպանությամբ կամ մերձավորի ներկայությամբ կատարված սպանության հանգամանքով:

Բոլոր այն դեպքերում, երբ սպանության կատարման իրավիճակը պայմանավորված է փակ տարածքից, բարձրությունից, հիվանդություններից կամ միկրոբներից տուժողի ունեցած ֆոբիաներն ու վախերն օգտագործելով վերջինիս լրացուցիչ հոգեկան տանջանք և տառապանք պատճառելով, առկա է առանձին դաժանությամբ կատարված սպանության հանցակազմ:

Առանձին դաժանությամբ կատարված սպանության իրավիճակը բնութագրող հատկանիշներից մեկն էլ սպանությունը տուժողի մերձավորների ներկայությամբ կատարելն է:

«Դիտավորյալ սպանությունների վերաբերյալ գործերով դատական պրակտիկայի մասին» Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության գերագույն դատարանների համապատասխանաբար 1992 թվականի դեկտեմբերի 22-ի և 1993 թվականի դեկտեմբերի 2-ի որոշումներում, Ռուսաստանի Դաշնության գերագույն դատարանի պլենումի 1999 թվականի հունվարի 27-ի «Սպանության գործերով դատական պրակտիկայի մասին» որոշման մեջ նշվում է, որ առանձին դաժանությունը կարող է դրսևորվել նաև այն ժամանակ, երբ սպանությունը կատարվել է տուժողի մերձավորների ներ-

կայությամբ և հանցավորը գիտակցել է, որ իր գործողություններով նրանց հատուկ տառապանքներ է պատճառում¹⁴: Փաստորեն, ՌԴ և ՀՀ դատական բարձրագույն ատյանները ուղղորդել են դատարաններին, որ սպանության ժամանակ առանձին դաժանությունը վկայող հանգամանքը բնութագրող հատկանիշ կարող է հանդիսանալ նաև տուժողի մերձավորների ներկայությամբ այն կատարելը: Այդ դիրքորոշումն է արտահայտվել նաև տեսական գրականության մեջ, համաձայն որի՝ մերձավորների ներկայությամբ կատարված սպանությունը՝ անկախ հանցագործության կատարման եղանակից, համարվում է առանձին դաժանությամբ կատարված, երբ հանցավորը գիտակցել է, որ իր գործողություններով հատուկ տառապանք է պատճառում տուժողի մերձավորներին¹⁵:

Մերձավորի ներկայությամբ կատարված սպանության դեպքում խիստ կարևորվում է հանցագործության կատարման հանգամանքները, այդ թվում՝ հանցագործության կատարման իրավիճակը, գործողությունների բնույթը և արարքի կատարման եղանակը: Օրինակ՝ ինչպես արդեն նշել ենք վեճի և փոխադարձ կռվի ժամանակ եղբայրներից մեկի սպանությունը մյուսի ներկայությամբ գործնականում չի վկայում սպանությունը առանձին դաժանությամբ կատարված լինելու մասին, սակայն մեկ այլ իրավիճակում՝ եղբոր ներկայությամբ եղբոր սպանությունը՝ պայմանավորված գործի հանգամանքներով, այդ թվում՝ հանցագործության կատարման իրավիճակով, կարող է որակվել որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն՝ կապված ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ տուժողի մերձավորին առանձին տանջանք և տառապանք պատճառելու հանցավորի դիտավորությամբ:

Տուժողի մերձավորին առանձին տանջանք և տառապանք պատճառելու հանցավորի դիտավորությունը ինքնին բավարար է արարքը առանձին դաժանությամբ կատարված սպանություն որակելու համար: Այստեղ որևէ սահմանափակում նախատեսելը կամ տառապանքների «առանձնակիության» լրացուցիչ

● ՕՐԻՆԱԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ № 130 2022

¹⁴ Տե՛ս Бюллетень Верховного суда РСФСР. 1999. № 3, Հայաստանի Հանրապետության գերագույն դատարանի պլենումի որոշումների ժողովածու 1991-1995, Երևան 1995, էջ 81:

¹⁵ Տե՛ս Թամազյան Ա.Ա. Սպանությունների որակման հիմնախնդիրները, Երևան, 2011 թ., էջ 143:

չափորոշիչներ սահմանելն ընդունելի չէ: Այդ առումով, կարծում ենք, չպետք է համաձայնել Լ.Ա. Անդրեևայի և այլոց կարծիքի հետ, ովքեր մերձավորի առանձին տառապանքի համար սահմանում են լրացուցիչ չափորոշիչ՝ կապված տուժողին օգնելու հնարավորությունից զրկված լինելու և այդ հանգամանքը հանցավորի կողմից գիտակցված լինելու հետ¹⁶:

Տուժողին օգնություն ցույց տալու հնարավորությունից զրկված լինելը կամ չլինելը, մեր կարծիքով, որպես այդպիսին, դուրս է տառապանքի բնութագրից, բնույթից, աստիճանից, դրսևորումից, հետևաբար և չի կարող դեր խաղալ արարքի որակման հարցում: Տուժողին օգնություն ցույց տալու հնարավորությունից մերձավորի զրկված լինելը կամ չլինելը քննարկվող հանցագործության հատկանիշներ չեն: Առավել ևս, երբ միանգամայն, բնական է, որ տուժողին օգնություն ցույց տալու անհնարինության փաստի գիտակցումը ավելի է խորացնում առանց այդ էլ այն սարսափելի տառապանքները, որոնք, որպես ականատեսներ, նրանք կրում են հանցավորի կողմից տուժողին կյանքից զրկելու ամբողջ ընթացքում: Այսինքն՝ տուժողի մերձավորների առանձնակի տառապանքները պայմանավորված են մերձավորի մահվան, հարազատի անդառնալի կորստի փաստի ականատեսը լինելու, այդ ամենը գիտակցելու և անասելի տառապանքներ կրելու հետ:

«Մերձավորների» շրջանակը չի սահմանափակվում մերձավոր ազգականների շրջանակով: Այդ մասին է վկայում Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում ձևավորված դատական պրակտիկան, որում մերձավոր ասելով հասկացվում է ոչ միայն մերձավոր ազգականը, այլև բոլոր այն անձինք, ովքեր ակնհայտորեն թանկ են, գնահատելի և սիրելի տուժողի համար:

Վճռաբեկ ատյանը Կ-ի գործով նշել է, որ մերձավոր անձանց շրջանակը չի սահմանափակվում քրեական դատավարության օրենսգրքի հոդվածով նախատեսված մերձավոր ազգականների թվարկմամբ, և որ առանձին դաժանությամբ կատարված սպանություն է հա-

մարվում նաև տուժողի մերձավորի ներկայությամբ կատարված սպանությունը, երբ հանցավորը գիտակցել է, որ իր գործողություններով նրան պատճառում է առանձին տառապանք:

Այսպիսով, օրենքի իմաստով սպանությունը համարվում է առանձին դաժանությամբ կատարված, երբ այն կատարվել է տուժողի մերձավորների ներկայությամբ, իսկ տուժողի մերձավորներ ասելով հասկացվում է ոչ միայն մերձավոր ազգականները, այլև այլ անձինք, որոնք ձևավորված հարաբերությունների արդյունքում հարազատ և թանկ են տուժողի համար: Այստեղ կարևորը սպանության ժամանակ տուժողի մերձավորների առանձին հոգեկան տառապանք կրելն է և հանցավորի կողմից այն գիտակցելը: Մերձավորության աստիճանը տվյալ դեպքում մղվում է երկրորդ պլան և դեր չի խաղում արարքի որակման հարցում:

Այսինքն, արարքը որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն որակելու համար անհրաժեշտ է, որ հանցավորին հայտնի լինի անձի մերձավորության մասին և դրանով պայմանավորված՝ վերջինիս ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ ծանր հոգեկան տառապանք պատճառելու մասին: Այսինքն, իմանալով տուժողի հետ անձի ունեցած մերձավորության մասին, հանցավորը տուժողին կյանքից զրկելով, մի դեպքում՝ ցանկանում և գիտակցաբար թույլ է տալիս տուժողի մերձավորին ծանր հոգեկան տառապանք, մյուս դեպքում՝ չցանկանալով մերձավորին ուժեղ հոգեկան տառապանքի պատճառումը, այնուամենայնիվ, գիտակցաբար թույլ է տալիս այն:

Ընդհանրապես, մերձավորի ներկայությամբ կատարված սպանությունը միշտ էլ անձին անասելի ուժեղ հոգեկան տառապանք է պատճառում: Նա առաջինն է կրում այն սարսափը, որը պայմանավորված է իր աչքի առջև մերձավորին սպանելու գործողությամբ և իր կողմից վերջինիս օգնելու, կյանքը փրկելու անզորության գիտակցմամբ: Նման իրավիճակում որևէ կապ չունի թե մերձավորի սպանությունը ինչ եղանակով է կատարվել, ինչ առարկայի կամ միջոցի գործադրմամբ: Այն կարող է կատարվել դանակի մեկ հարվածով, մեկ կրակո-

¹⁶ Стен Андреева Л.А. Квалификация убийств, совершенных при отягчающих обстоятельствах. СПб., 1998 էջ 18. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, հատուկ մաս, Երևան 2012, էջ 72.

ցով և այլն: Այսինքն մերձավորի ներկայությամբ կատարված սպանության դեպքում արարքը առանձին դաժանությամբ սպանություն որակելու համար ամենևին էլ պարտադիր չէ, որ հանցավորը սպանություն կատարելիս գործի հենց առանձին դաժանությամբ, այլ բավարար է նաև, որ նա գիտակցաբար թույլ տա այն: Այսինքն՝ մերձավորի ներկայությամբ կատարված սպանության դեպքում հանցավորը, ինչպես արդեն նկատեցինք, կարող է և նրանց հոգեկան տառապանք պատճառելու նպատակ չունենալ, բայց գիտակցաբար թույլ տալ այն: Պետք է նկատել սակայն, որ **անձի մերձավորության մասին հանցավորի չիմանալը բացառում է մերձավորին տառապանք պատճառելու հանցավորի դիտավորությունը, հետևաբար և արարքը առանձին դաժանությամբ կատարված սպանություն որակելը:**

Այն դեպքերում, երբ մերձավոր հանդիսացող անձի համար կարևոր չէ կամ միևնույն է հետևանքի առաջացման փաստը՝ տվյալ դեպքում մերձավոր հանդիսացող անձը ներկա գտնվելով դեպքին չի կրում հոգեկան որևէ տառապանք և հանցավորն էլ գիտակցում է այդ, ապա անկախ տուժողի հետ նրա կապվածության աստիճանից և բնույթից, նրա ներկայությամբ կատարված սպանությունը չի կարող որակվել որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն: Ավելին, դատական պրակտիկային հայտնի են դեպքեր, երբ սպանության դեպքի վայրում ներկա գտնվող մերձավոր ազգականը կամ մերձավորը ոչ միայն չի կրում հոգեկան որևէ տանջանք և տառապանք, այլ հենց ինքն է հանդիսացել տվյալ հանցագործության կազմակերպիչ կամ օժանդակող, մասնավորապես՝ կատարված սպանության պատվիրատու:

Մերձավորի ներկայությամբ կատարված սպանության այն դեպքերում, երբ վերջինս ինչ-ինչ հանգամանքներում չի զգացել կատարվող հանցագործության փաստը՝ եղել է քնած կամ խորը հարբածության վիճակում և հանցավորն էլ գիտակցել է այդ, ապա նման իրավիճակում նույնպես արարքը չի կարող համարվել որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն: Այսինքն, միայն հանցանքի կատարման վայրում մերձավորի գտնվելը դեռևս բավարար չէ հանցավորի արարքը որպես առան-

ձին դաժանությամբ կատարված սպանություն որակելու համար: Հնարավոր են նաև դեպքեր, երբ մերձավորի ներկայությունը հանցավորի կողմից օբյեկտիվորեն նկատված չլինի կամ հանցավորին հայտնի չլինի անձանց մերձավորության մասին: Այս դեպքում նույնպես հանցավորի արարքը չի կարող որակվել որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն, անկախ մերձավորի կողմից առանձին տառապանք ստանալու հանգամանքից: Նման դեպքերում արարքն առանձին դաժանությամբ կատարված սպանություն որակելու համար անհրաժեշտ է տուժողին կամ մերձավորին առանձին տառապանք պատճառելու հանցավորի դիտավորությունը:

Անձանց մերձավորության մասին հանցավորին օբյեկտիվորեն հայտնի չլինելը, կամ հանցավորի կողմից մերձավորին դեպքի վայրում նկատած չլինելը բացառում են արարքը «մերձավորի ներկայությամբ կատարված սպանություն» հատկանիշով որակելը, անկախ մերձավոր համարվող անձի կողմից առանձին տառապանք ստանալու հանգամանքից: Եվ դատարամաբանական է ու ճիշտ, որքանով որ անձանց մերձավորության մասին չիմանալու պարագայում կամ դեպքի վայրում մերձավորին նկատած չլինելու դեպքում հանցավորի մոտ չի կարող ձևավորվել դեպքի վայրում գտնվող մերձավորին առանձին տառապանք պատճառելու դիտավորություն:

Բոլոր դեպքերում, մերձավորի ներկայությամբ կատարված սպանության հատկանիշից ելնելով, արարքը առանձին դաժանությամբ կատարված սպանություն որակելու համար պարտադիր է դեպքի վայրում գտնվող անձանց մերձավորության մասին հանցավորին հայտնի լինելը և նման իրավիճակում վերջինիս առանձին տառապանք պատճառելու հանցավորի դիտավորությունը: Իսկ այն դեպքերում, երբ նման իրավիճակում, այնուհանդերձ, հանցավորը սպանությունը կատարել է առանձին դաժան եղանակով, ապա վերջինիս արարքը ենթակա է որակման որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն՝ պայմանավորված արդեն ոչ թե հանցագործության կատարման իրավիճակով, այլ հանցագործության կատարման եղանակով:

Այսպիսով, բոլոր այն դեպքերում, երբ հան-

ցավորը ցանկացել է հանցանքի կատարման վայրում գտնվող և տեղի ունեցածի բնույթը գիտակցող տուժողի մերձավորին առանձին տառապանք պատճառելը, ապա անկախ այն հանգամանքից թե մերձավորը առանձին տանջանք կամ տառապանք կրել է, թե ոչ՝ հանցավորի արարքը ենթակա է որակման որպես առանձին դաժանությանը կատարված սպանություն:

Այն դեպքերում, երբ հանցավորը չի ցանկացել հանցանքի կատարման վայրում գտնվող և տեղի ունեցածի բնույթը գիտակցող տուժողի մերձավորին առանձին տառապանք պատճառելը, սակայն ենթադրել է, որ դեպքին ականատես մերձավորը կարող է տանջանք և տառապանք կրել կամ անտարբեր է գտնվել դրանց հարցում, ապա՝ կապված տուժողի մերձավորների կողմից առանձին տառապանք կրելու կամ չկրելու հանգամանքից, արարքը ենթակա է որակման առաջին դեպքում՝ որպես առանձին դաժանությանը կատարված սպանություն, երկրորդ դեպքում՝ ոչ: Նման որակումը ըստ մեզ ընդունելի է, քանի որ առաջին դեպքում հանցավորը չի ցանկացել, սակայն գիտակցաբար թույլ է տվել ծանրացնող հանգամանքի վրա հասնելը, երկրորդ դեպքում՝ չի ցանկացել ծանրացնող հետևանքը և այն չի առաջացել: Իսկ հանցավորի մասին տվյալ դեպքում խոսք լինել չի կարող:

Մեր կարծիքով, սպանության կատարման ժամանակ ներկա գտնվող մերձավորի կողմից առանձին տանջանք և տառապանք չկրելը, առանձին դաժանությունը բացառող հանգամանք և պարտադիր պայման չէ: Այդ առումով չպետք է համաձայնել այն հեղինակների հետ, որոնց կարծիքով, միայն մերձավորի սպանության փաստը գիտակցելը դեռ բավարար չէ արարքը առանձին դաժանությանը կատարված սպանություն համարելու համար, այլ անհրաժեշտ է նաև, որ ներկա գտնվողը առանձին տանջանքներ և տառապանքներ կրի:

Կատարված արարքի բնույթը չընկալող, չգիտակցող, հոգեկան հիվանդի ներկայությամբ մերձավորի սպանությունը, որոշ հեղինակների կարծիքով, չի կարող որակվել որպես առանձին դաժանությանը կատարված սպանություն: Սակայն, ինչպես նկատել է Ա. Ա. Թա-

մազյանը «նման դիրքորոշումը վիճարկելի չէ միայն այն դեպքերում, երբ հանցավորն իմացել է անձի հոգեկան հիվանդ լինելու և դրա արդյունքում կատարված արարքի բնույթը չընկալելու, չգիտակցելու մասին»¹⁷:

Մեր կարծիքով, մերձավորի ներկայությամբ կատարված սպանության դեպքում արարքը որպես առանձին դաժանությանը կատարված սպանություն որակելու համար բոլոր դեպքերում պարտադիր չէ, որ տուժողն էլ անձամբ առանձին տանջանք կամ տառապանք կրի: Կարծում ենք, որ այն դեպքերում, երբ հանցավորի դիտավորությունն ուղղված է տուժողին առանձին տանջանք և տառապանք պատճառելու եղանակով սպանելուն, սակայն հանգամանքների բերումով վերջինս այդպիսիք չի զգացել, օրինակ՝ կապված ակոհոլային ուժեղ հարբածության վիճակում գտնվելու կամ առաջին հարվածից հետո գիտակցությունը կորցնելու հետ, նույնպես ենթակա է որակման որպես առանձին դաժանությանը կատարված սպանություն: Այսինքն, երբ առկա է հանցավորի կողմից տուժողին առանձին տանջանք և տառապանք պատճառելու եղանակով սպանելու ուղղակի դիտավորությունը, ապա ամենևին էլ պարտադիր չէ, որ այդ նույնը տուժողն օբյեկտիվորեն զգա:

Ս.Ի. Տիշկևիչը նույնպես այն կարծիքին է, որ առանձնակի տառապանք պատճառելու ուղղակի դիտավորության դեպքում պատասխանատվությունը պետք է առաջանա առանձին դաժանությանը ավարտված սպանության համար, նույնիսկ եթե տուժողը որևէ տանջանք կամ տառապանք չի զգացել¹⁸:

Այսպիսով, մերձավորի ներկայությամբ կատարված սպանությունը ենթակա է որակման որպես առանձին դաժանությանը կատարված սպանություն ինչպես այն դեպքում, երբ տուժողին դրանով պատճառվել է առանձին տառապանք, այնպես էլ այն դեպքում, երբ այդ տառապանքը պատճառվել է ոչ թե տուժողին, այլ նրա մերձավորին, ինչպես նաև միաժամանակ և տուժողին և մերձավորին:

Այսպիսով, մերձավորի ներկայությամբ կատարված սպանությունը ենթակա է որակման որպես առանձին դաժանությանը կատարված,

¹⁷ Տե՛ս Թամազյան Ա. Ա. Սպանությունների որակման հիմնախնդիրները, Երևան, 2011թ. էջ 144:

¹⁸ Տե՛ս Тишкевич С.И. Расследование убийств: уголовно-правовые аспекты (рекомендации для следователей), с. 92.

ինչպես այն դեպքում, երբ տուժողին դրանով պատճառվել է առանձին տառապանք, այսինքն՝ հանցավորի կողմից մերձավորի ներկայությունը օգտագործվել է տուժողին լրացուցիչ, ուժեղ, հավելյալ տառապանք պատճառելու միջոց, այնպես էլ այն դեպքում, երբ այդ տառապանքը պատճառվել է ոչ թե տուժողին, այլ նրա մերձավորին:

Մեր կարծիքով չպետք է համաձայնել այն հեղինակների հետ, որոնց կարծիքով մերձավորի տառապանքները դուրս են գտնվում տուժողին սպանելու արարքից և այդ տառապանքները հանդիսանում են միայն սպանությանը ուղեկցող հանգամանք:

Դժվար չէ նկատել, որ մերձավորի ներկայությամբ կատարված սպանությունը վկայում է հանցավորի առավել բարձր վտանգավորության մասին և հատկապես այն դեպքերում, երբ հանցավորը դրանով իսկ հետապնդում է տուժողի մերձավորներին առանձնակի տառապանքներ պատճառելու հատուկ նպատակ: Եվ այն տեսակետը, որ նման դեպքերում, չնայած հանցավորի կողմից տուժողի մերձավորների նկատմամբ դրսևորած դաժանությանը սպանությունն ինքնին առանձին դաժան չի դառնում, չի համապատասխանում օրենքի ոգուն և այդ առումով ընդունելի չէ: Նման տեսակետը անտեսվել է նաև դատական պրակտիկայի կողմից, համաձայն որի առանձին դաժանությունը կապվում է ինչպես անձին կյանքից զրկելու եղանակի, այնպես էլ առանձին դաժանությունը վկայող այլ հանգամանքերի հետ: Հետևաբար, արարքից դուրս գտնվող այլ ուղեկցող հանգամանքները ոչ թե չեն կարող, այլ հակառակը կարող են վկայել հանցավորի կողմից առանձին դաժանության դրսևորման մասին: Մեր կարծիքով, հանցավորի կողմից դրսևորած առանձին դաժանությունը կարող է դրսևորվել ինչպես տուժողին կյանքից զրկելու մեջ, այնպես էլ նրան ուղեկցող հանգամանքներում, և օրենքի տառը վկայակոչող բոլոր տեսակի տարընթերցումները բացառելու նպատակով առաջարկում ենք, հողվածը վերնագրել «առանձին դաժանությամբ կամ առանձին դաժանությամբ զուգորդված սպանությունը» վերտառությամբ, դրանով իսկ օրենքի տառը հա-

մապատասխանեցնելով օրենքի ոգուն, այն է՝ հանցավոր արարքի էությանը:

Իրավաբանական գրականության մեջ առանձին քննարկման առարկա է հանդիսանում նաև **մանկահասակների ներկայությամբ կատարված սպանությունների որակման հիմնախնդիրները:** Դատական պրակտիկայում նման սպանությունների թիվը եզակի չեն, մասնավորապես, մանկահասակի ներկայությամբ ծնողի սպանության դեպքերը: Նման դեպքերում, երբ մանկահասակը չի գիտակցել կատարվածի բնույթը, հանցավորն էլ գիտակցել է մանկահասակի կողմից կատարվածի բնույթը չընկալելը, ապա հանցավորի արարքը, պայմանավորված կատարման իրավիճակով, առանձին դաժանություն չի պարունակում: Իսկ այն դեպքերում, երբ մանկահասակը գիտակցել է արարքի ողբերգությունը, կամ այն ընդգրկված է եղել հանցավորի գիտակցությամբ, արարքը ենթակա է որակման որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն: Դատական պրակտիկային հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ երեխաները փորձել են թույլ չտալ հանցավորի՝ հաճախ իրենց հոր կողմից մորը դանակահարելը կամ այլ եղանակով սպանելը, սակայն անզոր են գտնվել: **Մանկահասակի կողմից հանցավորի արարքի բնույթը գիտակցելու և ընկալելու նման բոլոր դեպքերում, անկախ տարիքային շեմից առկա է առանձին դաժանությամբ կատարված սպանության հանցակազմը:** Այսինքն, արարքի ողբերգականությունը գիտակցող երեխայի ներկայությամբ ծնողի սպանությունը դանակի մեկ հարվածով, հրազենի մեկ կրակոցով կամ այլ ցանկացած եղանակով, բոլոր դեպքերում, ենթակա է որակման որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն:

Ս.Ի. Տիշկևիչի կարծիքով սպանությունն առանձին դաժանությամբ կատարված համարելու համար պարտադիր չէ, որ հանցավորը ցանկանա տուժողին կամ նրա մերձավորներին առանձնակի տանջանքներ և տառապանք պատճառելը: Բավարար է միայն այն փաստի գիտակցումը, որ նա իր գործողություններով առանձնակի տանջանքներ և տառապանքներ է պատճառում¹⁹:

¹⁹ Sեն Тишкевич С.И. Квалификация преступлений против жизни. Минск, 1991, էջ 47.

Արդարացի համարելով նման դիրքորոշումը, Ա.Ն. Պոպովը միաժամանակ նկատել է, որ «կարևոր չէ, որ տեղի ունեցածը կրի երկարատև բնույթ», որպիսզի արարքը որակվի որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն: Օրինակ՝ հանցավորի կողմից նախկին կնոջը նրա անչափահաս երեխայի և մոր ներկայությամբ դանակի մեկ հարված հասցնելը դատական բարձրագույն ատյանի կողմից որակվել է որպես առանձին դաժանությամբ կատարված սպանության փորձ²⁰: Նման դեպքերում, հանցավորը գիտակցել է ինչպես տուժողին, այնպես էլ նրա մերձավորներին, այդ թվում անչափահաս երեխային առանձին տառապանք պատճառելը և գիտակցաբար թույլ է տվել այն:

Ինչ վերաբերում է վերոհիշյալ արարքները մերձավոր չհանդիսացող, անծանոթ մանկահասակի ներկայությամբ կատարելուն, ապա այդ հանգամանքը կարելի է դիտարկել ոչ թե որպես արարքը որակյալ դարձնող հատկանիշ, այլ՝ պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք, որը իր ամրագրումն է ստացել 2021 թվականի ՀՀ քրեական օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում: Դրանով, կարծում ենք, մեկ անգամ ևս շեշտվում է օրենսդրի հոգատար մոտեցումը այնպիսի խոցելի խմբի քրեաիրավական պաշտպանությանն, ինչպիսիք են՝ հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններով և տարբեր դրսևորումների նկատմամբ բարձր զգայնություն ունեցող մանկահասակները: Նշված դրույթի կիրառման համար անհրաժեշտ է պարզել մանկահասակի ներկայությունը հանցագործության կատարմանը, նրա ականատես լինելը, դեպքի հանգամանքների ընկալման ունակությունը և հանցագործի տեղյակ լինելը՝ կատարված հանցագործությանը մանկահասակի ներկա գտնվելու փաստի մասին:

Հանցագործության կատարման հանգամանքներով, այդ թվում իրավիճակով և գործողությունների բնույթով պայմանավորված սպանությունը պետք է համարել առանձին

դաժանությամբ կատարված նաև այն դեպքերում, երբ վնասվածք կամ վնասվածքներ պատճառելուց հետո, հանցավորը տեսնելով տուժողի արյունաքամ լինելը ոչ միայն նրան որևէ օգնություն ցույց չի տալիս, այլև սահմանափակում և արգալում է նրա տեղաշարժը և օգնություն հայցելու հնարավորությունը, դրանով իսկ ցանկանալով կամ գիտակցաբար թույլ տալով տուժողի մահվան վրա հասնելը առանձին տանջալի եղանակով:

Օրինակ՝ ամուսիններ Յու-ն և Կ-ն ապրել են անհաշտ, որի արդյունքում Յու-ն դիմել է դատարան կնոջից ամուսնալուծվելու հայցով: Դատական նիստի ընթացքում կողմերը եկել են հաշտության և վերադարձել են տուն, որտեղ կրկին վիճաբանել են, որի ընթացքում ամուսինը հանդիմանել է կնոջը իր վրա լրատվամիջոցին բողոք ներկայացնելու և առանց իր գիտության արքորտ կատարելու մեջ: Եվ այն բանից հետո, երբ կինն ասել է, որ հետապնդելու է ամուսնուն և հանգիստ չի տալու նրան ողջ կյանքի ընթացքում, որտեղ էլ նա գտնվելիս լինի, ամուսինը խեղդամահ է արել կնոջը, ծածկել անձրևանոցով, հանգրեղ բնակարանի լույսը, գնացել ոստիկանություն և հայտնել կատարվածի մասին:

Ելնելով վերոգրյալից, դատական բարձրագույն ատյանը Յու-ի արարքում բացատել է առանձին դաժանությունը՝ նշելով, որ առանձին դաժանությունը որպես օրենքով պատասխանատվությունը ծանրացնող հատկանիշ, կապվում է ոչ միայն սպանության կատարման եղանակի, այլև՝ հանցավորի դիտավորությամբ ընդգրկված հանցանքն առանձին դաժանությամբ կատարելը վկայող այլ հանգամանքների հետ²¹:

Գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ հանցավորը որպես տուժողի մերձավորի է ընդունել այլ կողմնակի անձի և տուժողին սպանելով նպատակ է ունեցել տուժողի մերձավորին առանձին տանջանք և տառապանք պատճառելու: «Կարծեցյալ մերձավորի» նման դեպքերում, տուժողի սպանությունը նույնպես ենթակա է որակման որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն:

²⁰ Стѹ Попов А.Н. Убийства, совершаемые с особой жестокостью, а также общеопасным способом. СПб 2001, էջ 75. Бюллетень Верховного суда РСФСР. 1982, N10.

²¹ Стѹ Сборник постановлений пленума и определений коллегии Верховного Суда СССР по уголовным делам. 1971-1979 М. 1981 էջ 383-386.

ՆՈՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հայ-նուսական համալսարանի քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնի ասպիրանտ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՏԵՂԸ ՔՐԵԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Քրեական դատավարության ողջ պատմության ընթացքում խմբակային հանցագործությունների բացահայտման ամենաարդյունավետ ուղիներից մեկը ընդունված է համարել հանցակիցներից մեկի ներգրավումը իրավապահ մարմինների հետ համագործակցությանը:

Պետության և հասարակության օրենքով պաշտպանվող շահերի դեմ ոտնձգություն կատարած իրավախախտի ճշմարտացի ցուցմունքները ոչ միայն օգնում են վերականգնել կատարվածի ամբողջական պատկերը և բացահայտել յուրաքանչյուրի դերը հանցագործության իրականացման գործում, հաստատել մեղքը, այլև փրկել մարդկանց կյանքեր՝ կանխարգելելով նախապատրաստվող հնարավոր հակիրավական գործողությունները: Այս առումով միջազգային պրակտիկայում ընդունվել և լայնորեն կիրառում են ստացել իրավապահ մարմինների հետ համագործակցության համաձայնություն ձեռք բերած հանցավոր խմբի անդամներին խրախուսող նորմերը:

Պրակտիկան ցույց է տալիս, որ անվտանգության իրական սպառնալիքի առկայության պարագայում, նյութական իրավունքի ընդհանուր նորմերով նախատեսված պատժի մեղմացման երաշխիքները բավարար չեն ամբաստանյալին հետքննության մարմինների հետ ակտիվ համագործակցության դրդելու համար, ուստի նշվածով պայմանավորված արտասահմանյան երկրների, արդեն նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ մշակվել է քրեական դատավարության նոր ընթացակարգ, որն ուղղված է առավել բարձր հասարակական վտանգավորություն ունեցող հանցագործությունների բացահայտման և քննության գործընթացի դյուրացմանը:

Ներկայումս, հանցագործությունների հայտ-

նաբերման, կանխարգելման և բացահայտմանն ուղղված քրեադատավարական ընթացակարգերի բարելավման խնդիրների ուսումնասիրության կարևորությունը առաջին հերթին հիմնավորվում է ահաբեկչական սպառնալիքների աճով և դեռևս նախապատրաստական փուլում դրանց հետևանքների կանխման անհրաժեշտությամբ:

Քրեադատավարական քաղաքականության ներկայիս փուլում դատավարական ձևի տարբերակման և դրա չափանիշների վերաբերյալ մոտեցումները փոխվել են: Արտասահմանյան շատ երկրներ որդեգրել են օպտիմալացման ճանապարհը՝ հետևողականորեն քրեական դատավարություն ներմուծելով տարբերակված վարույթները, որոնք հնարավորություն են տալիս կրճատել մինչդատական վարույթը՝ խնայելով բավականին մեծ ռեսուրսներ: Դատավարական ձևի պարզեցումը ինչպես հանցագործություններին առավել արագ և օպերատիվ արձագանքելու, այնպես էլ առավելագույն տնտեսման պայմաններում քրեական գործը արագ և արդյունավետ քննելու, լուծելու նպատակ է հետապնդում: Արդարադատության օպերատիվ իրականացումը մեծապես մոտեցնում է համագործակցության կատարման պահը, դրա համար նշանակվող պատժին:

Համագործակցության համաձայնագրի ինստիտուտը տարբեր մոդելների դրսևորումներով սահմանվել և լայնորեն կիրառվել է արտասահմանյան մի շարք երկրների քրեադատավարական համակարգերում, որոնց շարքին կարելի է դասել «Գործարք արդարադատության հետ», ինչպես նաև «Մեղքի ընդունման գործարք» /plea bargaining/ ինստիտուտները:

Տարբերակված վարույթի տարարտեսակ է համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիրը, որը գիտական գրա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 130 2022

կանության մեջ հաճախ դիտարկվում է որպես հանցավորության դեմ պայքարի կոմպրոմիսսին կոնցեպցիայի բաղկացուցիչ մաս:¹

Ընդհանուր առմամբ, այս ինստիտուտը հիմնված է կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կամավոր ստանձնած պարտավորության վրա, այն է՝ նպաստել հանցագործության բացահայտմանը, հանցակիցների մերկացմանը, հանցագործության արդյունքում ձեռք բերված գույքի որոնմանը, ակնկալելով դրա դիմաց արարքի համար քրեական օրենսգրքով սահմանված պատժի զգալի կրճատում:²

Համաձայնագրում պարտադիր պետք է նշվեն այն գործողությունները, որոնք կասկածյալը կամ մեղադրյալը պարտավորվում է կատարել, ինչպես նաև մեղմացնող հանգամանքները և քրեական օրենսդրության համապատասխան նորմերը, որոնք կարող են կիրառվել վերջիններիս նկատմամբ՝ համաձայնագրում սահմանված պարտականությունները կատարելու դեպքում:

Համաձայնագրի կնքման դեպքում մեղադրյալի մոտ ծագում են պարտավորություններ, բայց հստակ չէ թե ինչ պարտականություններ է ստանձնում մեղադրանքի կողմը: Նախ և առաջ մեղադրողը պարտավոր է մեղադրյալի կողմից իր պարտավորությունների կատարման դեպքում դատարանում հանդես գալ՝ պարտավորությունների կատարման վերաբերյալ համապատասխան միջնորդությամբ: Դատախազի այս պարտականությունը սահմանվում է ոչ թե մեղադրյալի հետ կնքվող համաձայնագրով, այլ՝ քրեական դատավարության օրենսգրքով:

Համաձայնագրով չեն համաձայնեցվում նաև մեղադրյալի քրեական պատասխանատվության պայմանները, այսինքն՝ այն պատճառով, որ համաձայնագրի կնքման և մեղադրյալի կողմից իր ստանձնած պարտավորությունների կատարման դեպքում քրեական պատասխանատվության առանձնահատկություններն օրենքով արդեն իսկ նախատեսված են, ուստի համաձայնագրում դրանց ամրագրումը չի կա-

րող համարվել դատախազի կողմից ստանձնվող պարտականություն:

Մեղադրյալի և դատախազի միջև կնքվող համաձայնագիրը ի տարբերություն արտասահմանյան երկրներում գործող այս ինստիտուտի, որպես այդպիսին, գործարք չի հանդիսանում, քանի որ դրանով մեղադրանքի կողմը որևէ պարտավորություն չի ստանձնում և չի կարող ստանձնել: Նրա կողմից կատարվող գործողությունները հստակ սահմանվում են օրենքով և նույնն են բոլոր համաձայնագրերի համար: Նման պայմաններում համաձայնագիրը կարծես հանդես է գալիս ոչ թե որպես գործարք կողմերի միջև, այլ մեղադրյալի կամ կասկածյալի կողմից միակողմանի պարտավորությունների ստանձնում, որը ձևակերպվում է գրավոր, և որով ստանձնած պարտավորությունները մեղադրյալի կողմից կատարելու դեպքում վրա են հասնում օրենքով սահմանված որոշակի բարենպաստ հետևաքններ:³

Չնայած այս ինստիտուտին ուղղված բազմաթիվ քննադատություններին, պարզեցված քրեակադատավարական ընթացակարգերը ընդունվեցին մի շարք երկրների, այդ թվում Հայաստանի Հանրապետության կողմից և ներդրվեցին քրեական դատավարության իրավունքում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում առկա չէ համագործակցության համաձայնագրի ինստիտուտի հասկացության սահմանումը, առաջարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում՝ օգտագործվող հիմնական հասկացություններ հոդվածի ներքո սահմանել նշված եզրույթի ձևակերպումը հետևյալ բովանդակությամբ՝ «... համաձայնագիր է կնքված մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև, որում սահմանվում են այն գործողությունները, որոնք կասկածյալը կամ մեղադրյալը պարտավորվում են կատարել համագործակցության նպատակին հասնելու համար, ինչպես նաև կասկածյալի կամ մեղադրյալի պատասխանատվության պայմանները՝ ելնելով քրեական

¹ Аликперов Х. Д., Преступность и компромисс, Баку, 1992; Он же. Освобождение от уголовной ответственности, М.: Институт повышения квалификации руководящих кадров Генеральной прокуратуры Российской Федерации, 1999.

² Аликперов Х. Д.; Зейналов М. А., Компромисс в борьбе с преступностью. М., 1999, с. 46.

³ Քրեական դատավարության պարզեցման հիմնախնդիրները գիտագործնական ձեռնարկ, ք. Երևան 2011, Ա. Ղամբարյան, 57-59:

գործի հարուցումից կամ մեղադրանքի ներկայացումից հետո վերջիններիս կողմից կատարված գործողություններից»:

Համագործակցության համաձայնագիրը իրավական երևույթ է, որն ունի քրեաիրավական բովանդակություն և քրեադատավարական ձև: Քրեական իրավունքի տեսությունում մինչդաստական համագործակցության վերաբերյալ համաձայնագրի իրավական բնույթը դեռևս միանշանակ որոշված չէ: Բազմաթիվ են կարծիքները այն մասին, որ իր իրավական բնույթով համաձայնագիրը, ավելի հստակ դրա կնքումը, կարելի է դիտարկել որպես պատիժը մեղմացնող առանձին հանգամանք:⁴ Օրինակ, հեղինակներից մեկը՝ Ս. Ս. Կյուշնիկովը կարծում է, որ համաձայնագրի կնքման փաստը վկայում է մեղադրյալի կամ կասկածյալի դրական հետհանցավոր վարքագծի մասին, ով կամավոր կերպով ցանկություն է հայտնում քննությանն օժանդակելու, հանցակիցների բացահայտման հարցում, որը հիմք է հանդիսանում նշված համաձայնագիրը որպես մեղմացնող հանգամանք գնահատելու համար:⁵

Մինչդաստական համագործակցության համաձայնագրի վերաբերյալ նորմերը ՌԴ քրեական իրավունքում դիտարկվում են որպես քրեական պատիժը մեղմացնող հանգամանք և իրենց ամրագրումն են ստացել ՌԴ քրեական օրենսգրքի «Պատիժ նշանակումը մեղմացնող հանգամանքների առկայության պարագայում» հոդվածում:⁶

ՀՀ քրեական իրավունքում համագործակցության վերաբերյալ մինչդաստական համաձայնագիրը ինչպես մի շարք երկրների օրենսդրությունում չի դիտարկվում ոչ որպես պատիժը կամ պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք, և ոչ էլ որպես գործուն զոջալու տարատեսակ: 05.05.2021թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի ուսումնասիրությունը թույլ է

տալիս ենթադրել, որ ՀՀ քրեական իրավունքում համագործակցության համաձայնագիրը դիտարկվում է որպես առանձին ինքնուրույն ինստիտուտ և ամրագրվել է «Պատիժ նշանակելը» գլխում՝ «Պատիժ նշանակելը համագործակցության կամ համաձայնեցման վարույթի դեպքում», հոդվածի ներքո:⁷ Սույն հոդվածով նախատեսվում է նման վարույթի կիրառման դեպքում քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավել մեղմ պատժատեսակ, կամ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատժատեսակի նշանակում, կամ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվում: Նշված առավել մեղմ պատիժը կարող է նշանակվել միայն մեղադրյալի կողմից համագործակցության համաձայնագրով ստանձնած իր պարտավորությունների կատարման պարագայում, ուստի նշվածով պայմանավորված՝ առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերում «համագործակցության վարույթ կիրառելու դեպքում» ձևակերպումը փոխարինել «մեղադրյալի կողմից համագործակցության համաձայնագրով ստանձնած պարտավորությունները կատարելու» ձևակերպմամբ:

Անթույլատրելի է համարվում պարզեցնել կամ որևէ կերպ նեղացնել նշված կատեգորիայի վարույթներով մինչդաստական ապացուցման սահմանները:⁸ Մասնավորապես, «Համագործակցության համաձայնագիր կազմելու կարգը» սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 468-րդ հոդվածում որպես համաձայնագրի բաղկացուցիչ մաս նախատեսված չեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածով սահմանված՝ քրեական վարույթի ընթացքում ապացուցման ենթակա փաստական հանգամանքները, որոնց թվում են՝ ենթադրյալ հանցագործության քրե-

⁴ Тисен О.Н., Теоретические и практические проблемы Института досудебного соглашения о сотрудничестве в Российском уголовном судопроизводстве, Диссертация на соискание ученой степени доктора юридических наук, Оренбург 2017, с. 68.

⁵ Ключников С.С. Институт досудебного соглашения о сотрудничестве и его уголовно-правовое значение [Текст]: автореф. дис. канд. юрид. Наук: 12.00.08. - Краснодар, 2013. - 27 с.

⁶ «Уголовно-процессуальный кодекс Российской Федерации» от 18.12.2001 N 174-ФЗ (ред. от 30.12.2021).

⁷ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն.

⁸ Абшилава Г.В. Об особом порядке судебного разбирательства по уголовному делу в отношении обвиняемого, с которым заключено досудебное соглашение о сотрудничестве // Пробелы в российском законодательстве. 2010. № 3. С. 203-206.

կան օրենքով նախատեսված հատկանիշները և մեղադրյալի մեղավորությունը ենթադրյալ հանցանքը կատարելու մեջ:

Այս առաջարկը նպատակ ունի կանխելու իրավապահ մարմինների կողմից հայեցողության կիրառման հնարավոր չարաշահումները, ինչպես նաև ինքնամեղադրանքի և կասկածյալի կամ մեղադրյալի ենթադրյալ հանցագործության հետ առնչություն չունենալու այլ դեպքերը՝ ապահովելով քրեական օրենքով սահմանված, օրենսդրությամբ սահմանված՝ ըստ մեղքի պատասխանատվության և անձնական պատասխանատվության, ինչպես նաև քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված, օրինականության և գործի արդարացի քննության սկզբունքները:

Հաշվի առնելով վերոնշյալը, առաջարկվում է խմբագրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 468-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետը և լրացնել այն հետևյալ բովանդակությամբ. «... ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 102-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով ապացուցման ենթակա այլ հանգամանքները»:

Այսպիսով, համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագրի ինստիտուտը թեև շատ երկրների քրեական դատավարությունում արդեն գործածվող ինստիտուտ է, սակայն այն չունի կիրարկման երկրաժամկետ փորձ, իսկ Հայաստանի Հանրապետությունում այն առհասարակ նոր ձևավորվող և կայացող ինստիտուտ է: Համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագրի ՀՀ-ում կայացումը՝ որպես առանձին ինստիտուտ բարդ համակարգ է, որը չի կարող դիտարկվել ոչ որպես քրեական պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք, ոչ էլ որպես «գործարքի» տեսակ: Արդյունքներն ընդհանրացնելով, հարկ է փաստել, որ համագործակցության վարույթը կարող է զարգացման լուրջ հեռանկարներ ունենալ Հայաստանի Հանրապետությունում, ուստի այս ինստիտուտի ներդրմամբ օրենսդրի կողմից առաջադրված նպատակների իրականացման համար անհրաժեշտ է իրականացնել բազմակողմանի, համակարգված և առավել խորքային վերլուծություն:



ԳԱՅԱՆԵ ՄԱՐՈՒՔՅԱԼ

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քաղաքացիական
Իրավունքի ամբիոնի դոցենտ, ոստիկանության կապիտան

ՖՐԱՆՉԱՅՉԻՆԳԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Գիտության մեջ բացարձակապես ճիշտ է նշվում, որ «աշխարհում չկա ֆրանչայզինգի մեկ սահմանում, քանի որ տարբեր երկրներում այն ձեռք է բերել յուրահատուկ հատկություններ և ձևեր յուրաքանչյուր առանձին երկրի համար»: Այնուամենայնիվ, տարբեր իրավական համակարգերում ֆրանչայզինգի հարաբերությունների էությունը նույնն է:

Ըստ Մ.Մենդելսոնի, ֆրանչայզինգը ոչ թե արդյունաբերության ճյուղ է, այլ ապրանքների և ծառայությունների վաճառքի մեթոդ, որի օգտագործումը գործնականում անսահմանափակ է: Չերեպանովան, կարծելով, որ հետազոտողների մեծամասնությունը ուշադրություն է դարձնում ոչ թե ֆրանչայզինգի նշանների ամբողջ փաթեթին, այլ դրա առանձին ասպեկտներին, փորձեց ձևակերպել ֆրանչայզինգի ամենատարողունակ հայեցակարգը: Այն, ինչպես ողջամտորեն կարծում է Է.Ա. Չերեպանովը, ձեռնարկատիրական գործունեության ձև է, որը հիմնված է մի շարք պայմանագրերով ամրագրված հարաբերությունների համակարգի վրա, որը բաղկացած է մեկ կողմի փոխհատուցումից (կազմակերպություն, որը, որպես կանոն, ունի բարձր հեղինակություն ապրանքների և ծառայությունների շուկայում) մյուս կողմին (կազմակերպությանը կամ անհատ ձեռնեղբայրին)՝ արտադրված ապրանքների, կատարված աշխատանքի կամ մատուցվող ծառայությունների անհատականացման միջոցներին (ապրանքային նշան կամ ծառայության նշան, կորպորատիվ ինքնություն), բիզնես տեխնոլոգիաներ և այլ առևտրային տեղեկատվություն, որի օգտագործումը մյուս կողմի կողմից կնպաստի շուկայում ապրանքների և ծառայությունների աճին և հուսալի համախմբմանը: «Մինևույն ժամանակ, փոխանցող կողմը պարտավորվում է աջակցել բիզնեսի կայացմանը, տրամադրել տեխնիկական և խորհրդատվական աջակցություն»:

Բ.Ի. Պուտինսկին ֆրանչայզինգը սահմանում է որպես խոշոր արտադրողների (վաճառողների) և փոքր ձեռնարկությունների միջև պայմանագրային հարաբերությունների համակարգ, որի ընթացքում ապրանքների առաջնման պարտավորությունները ուղեկցվում են լիցենզիայի հիման վրա մայր ընկերության անվան կամ ապրանքային նշանի օգտագործմամբ, ինչպես նաև համապատասխանությամբ դրա արտադրության տեխնոլոգիաներին և շուկայավարման ռազմավարությանը: Լիսենկոն ասում է, որ ֆրանչայզինգը այն տնտեսական հարաբերություններն են, որոնց արդյունքում մի կողմը հնարավորություն է ունենում օգտագործել մյուս կողմի գործարար համբավը՝ սեփական բիզնես գործունեությունը կազմակերպելու համար: Ի.Ն. Գերչիկովան տալիս է ֆրանչայզինգի (ձեռնարկատիրական) հետևյալ շատ յուրօրինակ սահմանումը. Դրանք գործարար հարաբերություններ են, որոնց ուժով կողմերից մեկը՝ ֆրանչայզերը տրամադրում է մյուս կողմին՝ արտոնագրատիրոջը իրականացնելու (արտոնություն) իրավունք:

Ըստ Ի.Վ. Ռիկովայի, «ֆրանչայզինգը ոչ թե պատրաստի բիզնեսի վաճառք է, այլ դրա վարման համար տեխնոլոգիայի փոխանցումը, որոշակի կանոնների համաձայն գործարար գործողությունների իրականացումը... Քանի որ ենթադրվում է, որ առևտրային փորձը կոնկրետ հեղինակային իրավունքի սեփականատիրոջ փորձն է (դրա օգտագործումը որոշակի օգուտ կբերի, օգտագործողը պետք է վճարի դրա համար), ապա այն պետք է անհասանելի լինի երրորդ կողմերի համար, այսինքն՝ խոսքը առևտրային գաղտնիքի մասին է (նոու-հաու):¹

Ֆիլադելֆիայի համալսարանի ռեկտոր, իրավունքի դոկտոր Ս.Սպինեյլին իր «Ֆրանչայզինգ. ճանապարհ դեպի բարեկեցություն» գրքում հետևյալ կերպ է ներկայացնում ֆրանչայզինգի

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 130 2022

¹ Տե՛ս А. Еремин, Франчайзинг и договор коммерческой концессии. Теория и практика применения, 2017, 5-8 էջերը:

վերաբերյալ իր մոտեցումը. Ֆրանչայզինգը բիզնեսի կազմակերպման և իրականացման այնպիսի ձև է, որին համապատասխան գործարարներից (ֆրանչայզերը) մեկը մշակում է բիզնես-գործընթացի մոդել և վաճառում է այդ մոդելի միջոցով բիզնեսի իրականացման իրավունքը այլ գործարարի (ֆրանչայզիին):²

Ամփոփելով վերոնշյալ մոտեցումները՝ կարող ենք ֆրանչայզինգը բնորոշել որպես գործարարական գործունեության սուբյեկտների միջև ձևավորված հարաբերություն, որտեղ օգտագործողը վճարի դիմաց և որոշակի ժամկետով իր գործարարական գործունեությունում օգտագործում է իրավատիրոջ կողմից մշակված կոնկրետ ապրանքի վաճառքի (արտադրության), ծառայության մատուցման, աշխատանքի կատարման բիզնես վարելու մոդելը:

Նշվածի արդյունքում էլ կարելի է վեր հանել ֆրանչայզինգին բնորոշ հատկանիշները:

Այսպես՝ ֆրանչայզինգը ձևավորվում է բացառապես գործարարական գործունեության ոլորտում: Հետևաբար այդ հարաբերության սուբյեկտները գործարարությամբ զբաղվող անձինք և կազմակերպություններ են: Այն ունի շատ որոշակի նպատակ, այն է՝ ընդլայնել վաճառվող ապրանքների, մատուցվող ծառայությունների և կատարվող աշխատանքների սպառման շուկան: Այդ նպատակին հասնելու միջոց է հանդիսանում մշակված, փորձարկված և եկամտաբերություն ապահովող բիզնես վարելու մոդելը: Վերջինս մշակվում է իրավատիրոջ կողմից և օգտագործողի ժամանակավոր օգտագործմանն է հանձնվում որոշակի վճարի դիմաց³:

Ֆրանչայզինգն իրենից ներկայացնում է բիզնեսի իրականացման ձև, երբ որևէ կազմակերպություն թույլ է տալիս այլ կազմակերպությունների օգտագործել իր ֆիրմային անվանումը և անհրաժեշտ մյուս բացառիկ իրավունքները՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար: Մայր կազմակերպությունը շահագրգռված է այս ձևի մեջ, քանի որ նա ներդրումներ չի կատարում նոր առևտրային հենակետեր բացելու համար, փոխարենն իր

բացառիկ իրավունքների տրամադրման միջոցով ընդլայնում է առևտրային գործակալների ցանցը, և վերջիններիս գործունեությունը վերահսկելու միջոցով նպաստում է իր ապրանքների (ծառայությունների) ակտիվ շրջանառությանը: Դուստր ֆիրմաներն էլ շահագրգռված են այս եղանակի կիրառման մեջ, քանի որ նրանք դեռևս չունեն լուրջ առևտրային փորձ, չունեն ճանաչում, ուստի բիզնես վարելն արդեն հանրահայտ ֆիրմային անվանման և մյուս բացառիկ իրավունքների, այդ թվում և հարուստ առևտրային փորձի ներքո նրանց կարող է նոր հեռանկարներ բացել շուկայում հաստատվելու և ցանկալի շահույթ ապահովելու հարցում⁴:

Անդրադառնալով ֆրանչայզինգի պայմանագրի իրականական կարգավորմանը՝ հարկ է նկատել, որ որոշ երկրներում, օրինակ՝ Իտալիայում, Իսպանիայում, Բրազիլիայում, Ավստրալիայում գործում է ֆրանչայզինգի վերաբերյալ հատուկ օրենսդրություն: Ֆրանչայզինգի պայմանագիրը ենթակա է նաև հատուկ իրական կարգավորման ԱՊՀ անդամ որոշ երկրների օրենսդրություններում, մասնավորապես՝ Կազախստանի Հանրապետությունում և Բելառուսում: Այլ երկրներում, օրինակ՝ Ռուսաստանում կամ Ֆրանսիայում, ֆրանչայզինգի կանոններն ամրագրված են այլ օրենսդրական ակտերում, մասնավորապես՝ Քաղաքացիական օրենսգրքերում, ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ օրենսդրությունում և այլն: Լ.Տ. Իբադովը մեջբերում է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության փորձագետների կարծիքը, ըստ որի ֆրանչայզինգի հարաբերությունները լիովին կարգավորվում են պայմանագրային իրավունքով և չեն պահանջում հատուկ օրենսդրություն:

Մինչխորհրդային և խորհրդային շրջանում Հայաստանում, ինչպես նաև միութենական բոլոր հանրապետություններում ֆրանչայզինգային հարաբերությունները երբևէ իրավական կարգավորման չեն ենթարկվել: Այս առումով նման հարաբերությունների իրավական կարգավորմանը արդեն նոր օրենսդրությամբ անդ-

² Տե՛ս Ստիվեն Սպինելլի-մլ, Մ. Րոզենբերգ Րոբերտ, Բերլի Տյու, ֆրանչայզինգ: փուլը կ բոգատսւոյ. Մ. 2007 ր, 25 էջը:
³ Տե՛ս Դրմեյան Լ. Մ., Համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության (ֆրանչայզինգի) պայմանագրի իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2012, 26 էջը:
⁴ Տե՛ս Բարսեղյան Տ. Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Երկրորդ մաս, Երևան, 2001, 508 էջը:

րադառնալը կարելի է դիտել որպես նախկին միությանական հանրապետությունների քաղաքացիական օրենսդրության առաջընթաց⁵:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ֆրանչայզինգի պայմանագիրը իր ամրագրումն է ստացել քաղաքացիական օրենսգրքում, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 53-րդ գլուխը վերնագրված է համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվություն (*ֆրանչայզինգ*) վերաբերությամբ: *Ըստ այդ գլխի* 969-րդ հոդվածի 1-ին մասի՝ համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության (այսուհետ նաև՝ ֆրանչայզինգ) պայմանագրով մեկ կողմը (իրավատերը) պարտավորվում է վարձատրությամբ, ժամկետի նշումով կամ առանց դրա, մյուս կողմին (օգտագործողին) իրավունք տրամադրել իր ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու իրավատիրոջը պատկանող բացառիկ իրավունքների համալիրը, ներառյալ՝ իրավատիրոջ ֆիրմային անվանման, օրենքով պահպանվող առևտրային տեղեկատվության, ինչպես նաև պայմանագրով նախատեսված բացառիկ իրավունքների այլ օբյեկտների՝ ապրանքային նշանի, սպասարկման նշանի և այլնի նկատմամբ իրավունքները:

Ֆրանչայզինգի պայմանագիրը նախատեսում է իրավատիրոջ բացառիկ իրավունքների, գործարար համբավի և առևտրային փորձի համալիրի որոշակի ծավալի (մասնավորապես, օգտագործման նվազագույն և (կամ) առավելագույն ծավալի սահմանման միջոցով) օգտագործում՝ նշելով կամ առանց նշելու այն իրականացնելու տարածքը ձեռնարկատիրական գործունեության որոշակի ոլորտում (վաճառել իրավատիրոջից ստացված կամ օգտագործողի կողմից արտադրված ապրանքները, իրականացնել այլ առևտրային գործունեություն, կատարել աշխատանքներ, մատուցել ծառայություններ):

Նշվածից պարզ է դառնում, որ հայրենական օրենսդրությամբ ֆրանչայզինգի պայմանագիրը հատուկ իրավական կարգավորում չի ստացել, այլ ներառված է քաղաքացիական օրենսգրքում, ինչը, կարծում ենք՝ այնքան էլ արդարացված մոտեցում չէ, քանի որ ֆրանչայզ

զինգը այլ քաղաքացիաիրավական ինստիտուտների հետ համեմատ հանդիսանում է նորանուծություն, ավելի ուշ է ներմուծվել հայրենական օրենսդրություն, բացի այդ նշված հարաբերությունը իր բնույթով տարբերվում է մյուս պայմանագրային հարաբերություններից, ինչը առաջ է բերում այս ինստիտուտի առավել մանրամասն, ինչպես նաև երկրում գործարարական հարաբերությունների առկա վիճակի հաշվառմամբ կարգավորման անհրաժեշտություն, որը մեր կարծիքով հնարավոր կլինի ֆրանչայզինգի հարաբերությունները առանձին օրենսդրական ակտով կարգավորելու դեպքում միայն:

Գրականության մեջ կարելի է հանդիպել ֆրանչայզինգի բազմաթիվ դասակարգումների: Այսպես՝ ըստ իրավունքների տրամադրման բացառիկության տարբերում են հասարակ և բացառիկ ֆրանչայզինգ, ըստ գործարարական գործունեության բնույթի՝ ապրանքային, արտադրական, ծառայությունների մատուցման և բիզնես ֆորմատի: Մեկ այլ դասակարգման դեպքում ֆրանչայզինգը լինում է երեք տեսակ՝ ապրանքային, արտադրական և գործնական:

Ի թիվս մի շարք առավելությունների ֆրանչայզինգն ունի նաև մի շարք թերություններ: Նախ և առաջ ազատությունը սահմանափակ է: Պայմանագրով նախատեսված կազմակերպատնտեսական կապերի միջոցով օգտագործողը պրակտիկորեն դառնում է ֆրանչայզինգային ցանցի օղակներից մեկը: Ճիշտ է օգտագործողը բիզնեսի սեփականատերն է, սակայն առկա է մշտական կենտրոնացված հսկողություն իրավատիրոջ կողմից:

Մյուս թերությունն այն է, որ ֆրանչայզինգի համակարգը ճկուն չէ: Այսինքն օգտագործողը չի կարողանում համարժեք պատասխան տալ շուկայում տեղի ունեցող փոփոխություններին, քանզի ուղղակիորեն կախված է իրավատիրոջից:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է արձանագրել, որ չնայած թերություններին ֆրանչայզինգը բիզնեսի իրականացման արագ, արդյունավետ և շահավետ ձև է, որի դեպքում սկսնակ գործարարը ձեռք է բերում պատրաստի բիզնես, ինչպես նաև հզոր աջակից:

⁵ Տե՛ս Դրմեյան Լ. Մ., Համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության (ֆրանչայզինգի) պայմանագրի իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2012, 18 էջը:

ՆՈՐԻԿ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընդհանուր կիրառական բառապաշարում «սահմանադրություն» բառը կիրառվել է տարբեր նշանակություններով: Օրինակ, այն երբեմն կիրառվում է ինչ-որ բանի կառուցվածքը, օրգանիզմի կազմությունը (մարդու կոնստիտուցիան) բնութագրելու նպատակներով: Այդ տերմինը իրավաբանական գրականության մեջ հստակ չի կիրառվում: Այսպես, բրիտանացի գիտնական Զ. Օլդերը գրում է, որ «ցանկացած կազակերպություն պետք է ունենա սահմանադրություն»¹:

Սակայն առավել հաճախ այս եզրույթը կիրառվում է իրավագիտության մեջ և նշանակում հատուկ իրավաբանական փաստաթուղթ՝ հիմնական օրենք (երբեմն սահմանադրությունը հատուկ անվանվում է հիմնական օրենք, օրինակ, Գերմանիայում, Ֆիլադելֆիայում), հիմնական օրենքների (Շվեդիա և այլն), իսկ երբեմն նաև այլ ակտերի համախումբ (օրինակ, Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորություն և Հյուսիսային Իռլանդիա)²: Նման նշանակությամբ սահմանադրությունը՝ մարդկային հասարակության մեջ նորմատիվ-իրավական կարգավորման և իրավական մտքի երկարատև զարգացման արդյունք է: Եվ միևնույն ժամանակ՝ Նոր ժամանակներին անցնելիս հասարակության վիճակում որոշակի բեկման ցուցանիշ:

Ինչ-որ դրույթներ, սահմանադրական նշանակություն ունեին Եգիպտոսի, Բաբելոնի, Հնդկաստանի, Չինաստանի հնագույն փաստաթղթերում³, սակայն «սահմանադրություն» եզրույթը սկիզբ է առնում հռոմեական կայսրերի իրավական ակտերից: Հրովարտակներին, հրամանագրերին, կարգադրագրերին զուգահեռ նրանք ընդունում էին ակտեր, որոնք սկսում էին «constitutio»՝ (ես) հաստատում, որոշում եմ: Նման ակտերը որևէ ընդհանրություն չունեն ժամանակակից սահմանադրությունների հետ. դրանք կարգավորում էին հանրային և մասնավոր իրավունքի տարբեր և առանձին հարցեր:

Գլխավոր իմաստով, որոշակի կազմակերպվածության հաստատման, որոշակի կարգի հիմքերի ներածման համար «սահմանադրություն» բառը սկսեց կիրառվել միջնադարյան եվրոպական լատիներենով: Միևնույն ժամանակ գլոսատորները⁴, իսկ հետագայում հետգլոսատորները առանձնահատուկ իրավական ակտերի նկատմամբ սկսեցին կիրառել «հիմնական օրենք» բառակապակցությունը: Սահմանադրություններ անվանվում էին նաև խաչակիրների «մուսուլմանական անհավատներից» զավթված տարածքներում ռազմական-ֆեոդալական բանակատեղերի որոշ ակտեր, վանական միաբանությունների, քաղաքային հանրապետությունների կանոնադրությունները: XVII

¹ Alde JU. Constitutional and Administrative Law. M.Y., 2007, P 3:
² Конституции государств Европы: в 3 т. М., 2001; Конституции государств Америки: в 3 т. М., 2006; Конституции государств Азии: в 3 т. М., 2010; Конституции зарубежных государств: Великобритания, Франция, Германия, Италия, Европейский союз, Соединенные Штаты Америки, Япония: учеб. пособие/ сост. В. В. Маклаков. М., 2006.
³ Որոշ հետազոտողներ կարծում են, որ «սահմանադրական հատվածների» բազմությունը հասել է մեզ նաև հունական քաղաքներից. Burns W. Ancients and moderns. The Emergence os Modern Constitutionalism // Birns W. Democracy and Constitution: Essays Washington, 2006. P. 4.
⁴ Գլոսատորներ՝ սկզբում վանքում գիտնական վանականներ, հետագայում՝ XI-XIII դդ. իրավաբանների դպրոց, որը ծագել է Բաբելոնյան համալսարանում (Բտալիա): Նշումները, որոնք գլոսատորները կատարում էին ուսունասիրվող հռոմեական աղբյուրների տողատակերում և լուսանցքներն անվանվում էին գլոսներ: Հետգլոսատորները, ովքեր համալսարաններում փոխարինեցին գլոսատորներին, արդեն իրականացնում էին հռոմեական իրավական ժառանգության քննադատական-դոգմատիկ վերաշահում և փորձում այն հարմարեցնել եվրոպական ժողովուրդների կյանքի նոր պայմաններին: (տե՛ս Лазарев В.В. Липень С.В. История методология юридической науки. М., 2016, с.96-97).

դարում սահմանադրություններ ընդունվեցին ամերիկյան գաղութների բնակիչների կողմից, սակայն սահմանադրությունները, իրենց ժամանակակից ընկալումներով, Միջնադարում և Նոր ժամանակների սկզբում դեռ բացակայում էին:

Սահմանադրության ընդունման պահանջները, դրա հասկացության որպես նոր պետական կառույցի հիմնադրական ակտի մշակումը, Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ և Ֆրանսիայում XVII-XVIII դարերում սահմանադրական նշանակության փաստաթղթերի ընդունումը՝ կապված էր⁵ ֆեոդալական կառույցի և ֆեոդալական իրավունքի, «արտոնությունների իրավունքի» դեմ ժողովրդի պայքարի հետ:

Որպես երկրի բրիտանական գաղութային կախվածությունից ազատման արդյունք պետությունների առաջին սահմանադրությունը (Անկախության հռչակագիրը ընդունվել է 1776թ.) ընդունվել է ԱՄՆ 1787թ.⁶ (նախքան այդ գործում էին 1777թ. ԱՄՆ Համադաշնության Հոդվածները): Հետագայում ընդունվեցին Լեհաստանի և Ֆրանսիայի 1971թ. Սահմանադրությունները (փաստացի չէին գործում): XIX դ. առաջին կեսին սահմանադրական իրավաստեղծումը ընդգրկեց գրեթե ամբողջ Եվրոպան: Սահմանադրություններ կամ սահմանադրական օրենքներ (որպես սահմանադրության հավելյալ հատված) ընդունվեցին Եվրոպայի հարավային սահմաններից (Իսպանիա, Իտալիա) մինչև հյուսիսայինը (Նորվեգիա, Շվեդիա), արևմուտքից (Ֆրանսիա) մինչև արևելք (Լեհաստան): Նույն ժամանակահատվածում սկսեցին սահմանադրություններ ընդունվել Լատինական Ամերիկայի երկրներում (դրանցից առավել վաղը՝ 1811թ. Վենեսուելայի Սահմանադրությունը):

XIXդ. երկրորդ կեսին սահմանադրությունների ստեղծման գործընթացը տարածվեց Ասիայում (ճապոնիայի 1889թ. Սահմանադրությունը), XXդ. առաջին կեսին՝ այլ երկրներում. Իրանում (1906թ.), Չինաստանում (1912թ.): Սահմանադրական նշանակության ակտեր ընդունվեցին Մեծ Բրիտանիայում 1867թ. և հետագայում Կանադայի համար: Ինչ վերաբերվում է Աֆրիկային, ապա միակ սահմանադրությունը այդ ժամանակաշրջանում գործում էր Լիբերիայում, հիմնված 1847թ. սևամորթերի՝ ԱՄՆ գաղթյալների կողմից: Այս սահմանադրությունը պատճենված էր ԱՄՆ Սահմանադրությունից:

Առաջին Համաշխարհային պատերազմից հետո սահմանադրություններ ընդունվեցին Արևելյան Եվրոպայի երկրներում, 1918թ՝ հռչակվում է առաջին սոցիալիստական սահմանադրությունը՝ Ռուսաստանի Խորհրդային Դաշնության Սոցիալիստական Հանրապետության (ՌԽԴՍՀ), 1924թ՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության (ԽՍՀՄ) Սահմանադրությունը: Ընդունվեցին նաև ԽՍՀՄ կազմում ինքնավար և միութենական հանրապետությունների սահմանադրությունները, ԽՍՀՄ հետ հարևան Արևելքի երկրների սահմանադրությունները (Բուլսարա, Մոնղոլիա, Տուվ, Խիվ): Այս շրջանում Արևմտյան Եվրոպայի մետրոպոլ-պետությունները սկսեցին իրենց գաղութներում (Հնդկաստանում, Հյուսիսային Աֆրիկայի առանձին պետություններում) ներածել առաջին շնորհված սահմանադրությունները: Նման «գաղութային սահմանադրությունները» հաճախ անվանվում էին գաղութներում ղեկավարող կառավարիչների անուններով:

Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո արտասահմանյան սոցիալիստական երկր-

⁵ Այստեղ և ստորև նշված են սահմանադրության ընդունման, այլ ոչ դրանց ուժ ստանալու տարեթվերը: Մեծ Բրիտանիայում, որտեղ սահմանադրությունը չի հանդիսանում միասնական փաստաթուղթ, այլ բաղկացած է բազմաթիվ օրենքներից և այլ ակտերից, առաջին սահմանադրական փաստաթուղթ սովորաբար համարում են 1215թ. Ազատության մեծ խարտիան, որը գլխավորապես ամրագրում է թագավորական իշխանության նկատմամբ բարոնների իրավունքները:

⁶ Նախքան 1787թ. ԱՄՆ պետությունների առաջին սահմանադրության ընդունումը սահմանադրություններ ընդունվել են առանձին հյուսիսամերիկյան գաղութներում՝ նահանգներում: Դրանք ունեին փոքր ծավալ, իսկ դրանց բովանդակությունը չէր համապատասխանում ժամանակակից սահմանադրության հասկացությանը: Դրանցից առաջինները պարունակում էին արդարության վերաբերյալ բրիտանական մետրոպոլիս ուղղված կոչեր, հետագաները՝ մերժում էին բրիտանական գաղութի նույնիսկ «ուղղիչ» իշխանության պահպանության հնարավորությունը, պաշտպանում մարդու բնական իրավունքների գաղափարները և պահանջում անկախություն: Քանի որ բրիտանական Սահմանադրությունը, որը սովորաբար անվանվում է չգրված, բաղկացած է տարբեր ակտերից (կարգավիճակներից, հետագայում՝ օրենքներից, դատական նախադեպերից, ավանդույթներից (կոնվենցիոնալ համաձայնագրերից)), երբեք համարում են, որ առաջին սահմանադրությունը ծագել է հատկապես Անգլիայում:

ներում՝ Եվրոպայում (Ալբանիա, Բուլղարիա, Ռումինիա և այլն), Ասիայում (Չինաստան, ԿԺԴՀ և այլն), Լատինական Ամերիկայում (Կուբա) «ազգային դեմոկրատիայի երկրների» ծագումը հանգեցրեց նոր սոցիալիստական սահմանադրությունների ընդունմանը⁷: XXդ. 50-70-ական թվականներին գաղութային համակարգի փլուզման և հետագայում Ասիայում, Աֆրիկայում, Լատինական Ամերիկայում հարյուրից ավելին նոր պետությունների ձևավորման արդյունքում ընդունվեցին մոտավոր 200 նոր պետությունների սահմանադրություններ (հաշվառվում են նրանք, որոնք բազմակի փոփոխվել են): Սահմանադրական զարգացման գործընթացը ստացավ նոր խթաններ XXդ. 90-ական թվականներին տոտալիտար սոցիալիզմի համակարգի փլուզման արդյունքում (ԽՍՀՄ փլուզում, այլ երկրների կողմից զարգացման այլ ուղղու ընտրություն), Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի պետություններից մեծամասնությունում գրանցվեց տոտալիտար ռեժիմների անկում: Այդ պետություններում ևս ընդունվեցին նոր հիմնական օրենքներ:

XXդ. 70-ական թվականներին մուսուլմանական ֆունդամենտալիզմի երկրներում՝ սկսած Քուվեթից (1962թ) սկսեցին ընդունել սահմանադրություն (նիզամներ, այժմ դրանք առկա են նման բոլոր երկրներում)⁸: Իրենց սահմանադրություններն են գործում բազմաթիվ երկրների դաշնային սուբյեկտներում (Բրազիլիա, Գերանիա, Ռուսաստան, ԱՄՆ և այլն), երբեմն՝

ինքնավար ձևավորումներում (օրինակ, Ղրիմի Ինքնավար Հանրապետության 1988թ. Սահմանադրությունը): Հիմնական օրենքներ գոյություն ունեն նաև Չինաստանի հատուկ վարչական շրջաններում՝ Սյանգանում (նախկին Հոնկոնգ) 1997թ. և Ամոնում (Մայաո նախկին պորտուգալական գաղութ) 1999թ: Ներկայումս տիրապետում ենք 1000-ից ավելի սահմանադրությունների և սահմանադրական ակտերի, դաշնության սուբյեկտների և ինքնավար ձևավորումների 500 սահմանադրությունների (հիմնական օրենքների, կանոնադրությունների) ընդունման և գործման փորձին (ներառելով փոփոխած հիմնական օրենքները)⁹:

Գործող սահմանադրությունները բնութագրվում են ձևերի և բովանդակությունների հսկայական բազմազանությամբ: Որոշ երկրների (Իսրայել, Շվեդիա և այլն) սահմանադրությունների բովանդակությունում ներառվում են մի քանի հիմնական օրենքներ: Օրենքները, որոնք չեն անվանվում հիմնականներ, սակայն որոշ երկրներում (Մեծ Բրիտանիա, Կանադա, Նոր Զելանդիա և այլն)¹⁰ դասվում են սահմանադրականների շարքին, հաճախ խիստ բազմաթիվ են (որոշ ամերիկյան հեղինակներ համարում են, որ Բրիտանական սահմանադրությունը կազմում են 300 ավելին օրենքներ)¹¹: Որոշ սահմանադրությունների տեքստերի նկատմամբ կիրառվել են տարածական լրացումներ (Հնդկաստանում դրանցից որոշները համեմատական են ԱՄՆ Սահմանադրության ծավալների հետ) և

⁷ Ինչպես խորհրդային սահմանադրությունները, դա տոտալիտար բնույթի սահմանադրություն էր (պրոլետարիատի դիկտատուրա, միակ կուսակցության՝ կոմունիստականի ղեկավարական դերը, տեղի ինքնավարության, մարդու բնական իրավունքների, մասնավոր իրավունքի, ազատ մրցակցության մերժում և այլն), սակայն տոտալիտար սոցիալիստական պետությունը (հետագա զարգացման ընթացքում դրա տոտալիզմի որոշ կողմեր չեզոքացվեցին, օրինակ, իրականացվեց պրոլետարիատի դիկտատուրայի հայեցակարգից հրաժարում) սկզբունքորեն տարբերվում է ֆաշիզմից (արիական ռասայի գերակայում և «թերի ազգությունների» ոչնչացում, համաշխարհային իշխանության գալթում, «ֆյուրերի» անսահմանափակ իշխանություն, կոնցենտրացիոն ճանբարներ), այլ տոտալիտար ռեժիմներից (օրինակ, ռազմական խորհուրդների կառավարումից):

⁸ Հիմնական նիզամներ՝ մետրոպոլի կողմից շնորհված ակտեր (սովորաբար աշ-շուրի հետ խորհրդակցությունից հետո, կայացած մետրոպոլի առընթեր և նշանակված վերջինիս կողմից մուսուլմանական հանրույթի հեղինակավոր անձանց կազմով): Հիմնական նիզամները ունեն սահմանադրության ձև և բովանդակություն, սակայն իրական սահմանադրություն համարվում է Ղուրանը, որի վերաբերյալ շարադրված է որոշ նիզամներում (օրինակ, 1992թ. Սաուդյան Արաբիայի Հիմնական Նիզամի հոդ. 1): Իսրայելում նաև համարվում է, որ սկզբունքային սահմանադրական դրույթերը առկան են հիմնադրական կրոնական տեքստերում (օրինակ, Մովսեսի Հնգամատյանը), այդ իսկ պատճառով երբեմն համարում են, որ Իսրայելում չկա հատուկ փաստաթղթի որակով սահմանադրություն, այլ կիրառում են հինական օրենքները (դրանք ընդունված են 10 ավելին):

⁹ Տե՛ս Конституция в XXI веке. Сравнительно-правовое исследование. Отв.ред.проф. Чиркин В.Е.М., 2014,с. 15.

¹⁰ Մեծ Բրիտանիայում և անգլոսաքսոնական իրավունքի որոշ այլ երկրներում պաշտոնապես չեն տարբերակվում հիմնական (սահմանադրական) և այլ օրենքներ: Բոլոր օրենքները ունեն միանման ուժ:

¹¹ Տե՛ս Great Britain. Constitutions of the Countries of the World. M.Y., 1984.

հավելվածներ (Մեծ Բրիտանիայում սահմանադրական բնույթ ունեցող օրենքների հավելվածները, օրինակ, 2005թ. Սահմանադրության բարեփոխության վերաբերյալ օրենքի հավելվածը, երբեմն մի քանի, նույնիսկ տասնյակ անգամ ըստ ծավալի գերազանցում է հիմնական տեքստին)¹²: Մեծ Բրտանիայի, Նոր Զելանդիայի և մյուսների սահմանադրությունների կազմության մեջ ներառվում են դատական նախադեպերը (ըստ սահմանադրական նշանակության հարցերի բարձրագույն դատարանների որոշումներ), ինչպես նաև սահմանադրական ավանդույթները: Մեծ Բրիտանիայում, երբեմն, որպես սահմանադրության կազմություն ներառվում են հայտնի բրիտանական իրավաբանների սկզբունքային եզրակացությունները, քանի որ դատարանները ըստ սահմանադրական հարցերի առանձին դեպքերում նման դրույթներին են հղում իրենց որոշումները:

Ֆրանսիական գրականության մեջ կիրառվում է «սահմանադրական բլոկ» հասկացությունը, քանի որ 1958թ. սահմանադրությունը գլխավորապես ամրագրում է հանրապետության բարձրագույն մարմինների հարաբերությունների կարգը, իսկ բազմաթիվ այլ հացեր կարգավորվում էին 1789թ. Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրով, 1946թ. գործող և ներկայումս չեղյալականացված Սահմանադրության նախաբանով, 2004թ. Շրջակա միջավայրի խարտիայով և որոշ այլ ակտերով:

Մուսուլմանական ֆունդամենտալիզմի երկրներում (Քաթար, Միացյալ Արաբական էմիրություններ, Օման, Սաուդյան Արաբիա և այլն) Ղուրանին (Մուհամադ մարգարեի գրառված պատվիրաններին) զուգահեռ կարևոր սահմանադրական նշանակություն ունի Սուննան (մարգարեի կյանքի նկարագրությունը): Որոշ երկրների (օրինակ, 1992թ. Սաուդյան Արաբիայի) թագավորական հիմնական նիզաներում Ղուրանը և Սուննան հայտարարվել են սահմանադրություն: Այս սուրբ գրքերի հիման վրա վերահսկվում են սահմանադրական նշանակության բազմաթիվ դրույթներ, ձևավորվում է

իրավակիրառ պրակտիկան: Վերջին տասնամյակում այս փաստաթղթերին միացվում է, ինչպես ասվել է, թագավորական հիմնական նիզանները: Այսպիսով, գիտական եզրակացությունների և ընդհանրացումների համար առկա է հսկայական նյութ, որը համեմատական վերլուծության դեպքում կարող է նաև կիրառվել գործող սահմանադրությունների կատարելագործման համար:

Այս իրավաբանական նորմատիվ նյութի ընդհանրացված անվանման համար (նույնիսկ եթե այն բաղկացած է տարատեսակ տարրերից) երկրների մեծամասնությունում կիրառվում է «սահմանադրություն» անվանումը: Լատինական Ամերիկայի առանձին իսպանալեզու երկրներում, Կարիբյան տարածաշրջանի անգլիալեզու պետություններում «սահմանադրություն» բառին ավելացվում է «քաղաքական» ածականը (Վենեսուելա, Կոլումբիա, Մեքսիկա և այլն): Դա ամենից առաջ պայմանավորված է նրա հետ, որ որոշ լեզուներում «սահմանադրություն» բառը նշանակում է նաև կանոնադրություն (օրինակ, արհմիությունների կանոնադրություն), և այս երևույթների սահամազատման համար, ներառվում է նշված ածականը:

Մասնագիտական գրականության մեջ ներկայացված են սահմանադրության տարբեր հասկացություններ: Արտասահմանյան հրատարակչություններում առաջարկվող սահմանումները, որպես կանոն, կատարում են շեշտադրություն սահմանադրության «պետության և դրա բաղադրիչների» կարգավորման վրա»¹³ դիտարկում այն որպես կանոնների համախումբ, որը վերաբերվում է պետությանը¹⁴, գլխավորը տեսնելով նրանում, որ «սահմանադրությունը սահմանում է իշխանության օրինականությունը»¹⁵: Բրիտանացի գիտնական Ջ. Օլդերը, համակարգելով անգլիական գրականության մեջ այս և այլ բնութագրիչներ, հաստատեց, որ սահմանադրության միասնական իրավաբանական սահանում գոյություն չունի, իսկ այն տարրերը, որոնց հեղիակները կոչում են բնորոշ գծեր (իրավական և ոչ իրավական

¹² Տե՛ս Constitutional Reform Act 2005. L, 2005. Chap.4.

¹³ Տե՛ս Guissani E. Constitutional and Administrative Law. L., 2008. P. 4-5.

¹⁴ Տե՛ս Homon P., Troper M. Droit Constitutionnel. 30-e ed.P., 2007. P. 24.

¹⁵ Տե՛ս Barnett H. Constitutional and Administrative Law. 7th ed. L., 2009. P. 5.

նորմաների կոմբինացիաներ, որոնք հաստատում են քաղաքականության մասնակիցների վարքագծային կարգավորիչ և կառավարիչ հիմքերը, «սահմանադրություն» կամ «հիմնական օրենք» անվանումով ինստիտուտը, ընդունված և փոփոխվող հաստատված գործընթացի ուղիով, կառավարության աշխատանքը սահմանող կանոնների համախումբը), չեն համապատասխանում բրիտանական Սահմանադրությանը¹⁶։ Տվյալ գրքի հաջորդ հատվածներում հեղինակները փորձել են տալ սահմանում, որը, ըստ նրանց տեսանկյունի, կիրառական է նաև Բրիտանիայի Սահմանադրության նկատմամբ։

Ինչպես նշում է պրոֆեսոր Գ.Սաֆարյանը «Սահմանադրություն հասկացությունը լատիներենում (constitutio)» նշանակում է հիմնել, սահմանել։ Սակայն ամեն մի «հիմնում» կամ «սահմանում», «սահմանադրությամբ» կամ «սահմանադրություն» չէ։ Վերջինս հիմնականում բնորոշվում է որպես պետության հիմնական օրենք (օրենքների ամբողջություն), որն ունի բարձրագույն իրավաբանական ուժ։ Տվյալ օրենքի հիմնական բնութագրիչները պայմանավորված են այն հանգամանքով, որ դրանով սահմանվում են.

- պետական կարգի հիմունքները,
- մարդու և քաղաքացու իրավունքների ու հիմնարար ազատությունների ապահովման ու պաշտպանության գաղտնիքները,
- պետական իշխանության համակարգը, դրա գործառույթները, կազմակերպման սկզբունքներն ու կարգը,
- քաղաքական իշխանության իրականացման և անհատի քաղաքական, տնտեսական, սոցիալական ազատությունների դրսևորման իրավական սահմանները»¹⁷։

Այսպիսով, կարելի է ամփոփել, որ արդի սահմանադրությունը դիտարկում է ոչ միայն պետության հիմնական օրենք, այլև հասարակական դաշինք և իրավաքաղաքական հիմնարար փաստաթուղթ։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Alde JU. Constitutional and Administrative Law. M.Y., 2007, P 3:
2. Конституции государств Европы: в 3 т, М., 2001; Конституции государств Америки: в 3 т.М., 2006; Конституции государств Азии: в 3 т. М., 2010; Конституции зарубежных государств: Великобритания, Франция, Германия, Италия, Европейский союз, Соединенные Штаты Америки, Япония: учеб. пособие/ сост. В.В. Маклаков. М., 2006.
3. Burns W. Ancients and moderns. The Emergence os Modern Constitutionalism // Birns W. Democracy and Constitution: Essays Washington, 2006. P. 4
4. Лазарев В.В. Липень С.В. История методология юридической науки. М., 2016, с.96-97).
5. Конституция в XXI веке. Сравнительно-правовое исследование. Отв. ред. проф. Чиркин В.Е.М., 2014,с. 15.
6. Creat Britain. Constitutions of the Countries of the Word. M.Y., 1984.
7. Constitutional Reform Act 2005. L, 2005. Chap.4.
8. Guissani E. Constitutional abd Administrative Law. L., 2008. P. 4-5.
9. Homon P., Troper M. Drot Constitutionnel. 30-e ed.P., 2007. P. 24.
10. Barnett H. Constitutional abd Administrative Law. 7th ed. L., 2009. P. 5.
11. Alder J. Constitutional abd Administrative Law. 6th ed. N.Y., 2007. P. 7.
12. Հարությունյան Գ. Սահմանադրական մշակույթ. Պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները: Վերահրատրակչություն՝ լրամշակումներով: Երևան, 2016, էջ 23-24:
13. Конституция и закон: стабильность и динамизм. М. 1998,
14. Конституционное (государственное) право зарубежных стран: актуальные проблемы. М., 1990,

¹⁶ Տե՛ս Alder J. Constitutional abd Administrative Law. 6th ed. N.Y., 2007. P. 7.

¹⁷ Հարությունյան Գ. Սահմանադրական մշակույթ. Պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները: Վերահրատրակչություն՝ լրամշակումներով: Երևան, 2016, էջ 23-24:

ՆՈՐԱՅՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԴՈԿՏՐԻՆԱԿԱՆ ԳՅՈՒՄԱԿՈՐՈՒՄԸ

Օրենսդրության զարգացումը 18-19-րդ դարերում հզոր ազդակ հաղորդեց արդարադատության գիտական դոկտրինի ձևավորմանը: Արդարադատության թեմային առաջին անդրադարձողներից էր Շ. Մոնտեսքյուն: Իր «Օրենքների ոգու մասին» գրքում նա նկարագրել է Հին աշխարհում (Հունաստան և Հռոմ), միջնադարյան և ժամանակակից պետությունների (Ֆրանսիա, Իտալիա, Անգլիա, Գերմանիա, Թուրքիա և Չինաստան) իրավական գործընթացները: Համեմատելով տարբեր երկրներում և տարբեր փուլերում դատական գործընթացների զարգացման առանձնահատկությունները, նա մատնանշեց դատարանների խստությունը մեղմելու անհրաժեշտությունը և, միևնույն ժամանակ, պատժամիջոցների անխուսափելիությունը. «Փորձը ցույց է տվել, որ այն երկրներում, որտեղ պատիժները դաժան չեն, դրանք հավասարապես ուժեղ տպավորություն են թողնում քաղաքացու մտքում, քան մյուս երկրների ամենախիստ պատիժները... Մենք չպետք է կառավարենք մարդկանց ծայրահեղ միջոցների օգնությամբ. պետք է տնտեսապես օգտագործենք այն միջոցները, որոնք մեզ տրամադրված են բնության կողմից՝ նրանց ուղղորդելու համար:

Ուսումնասիրեք բոլոր անփութության պատճառները և կտեսնեք, որ այն բխում է հանցագործությունների անպատժելիությունից, այլ ոչ թե պատժամիջոցների թուլությունից: Գոյություն ունի այլասերվածության երկու տեսակ՝ մեկը, երբ մարդիկ չեն պահպանում օրենքները, մյուսը, երբ նա ապականված է օրենքներով. վերջին հիվանդությունը անբուժելի է, քանի որ դրա պատճառը թաքնված է հենց բուժման մեջ»¹:

Արդարության ճշմարիտ սկզբունքների խախտումների վառ պատկերներ է նկարագրել անգլիացի փիլիսոփա և քաղաքական գործիչ Է. Բերկը²: Մեղադրելով 18-րդ դարի վերջի անգլիական դատարաններին և իրավաբաններին՝ նա գրել է. «Իրավաբանները, ինչպես և աստվածաբանները, կառուցել են ևս մեկ բանականություն, բացի Բնական Բանականությունից, և արդյունքում ի հայտ է եկել ինչ-որ հատուկ արդարադատություն, բացի Բնական Արդարադատությունից»:

Առաջին անգամ արդարադատության նկատմամբ գիտական մոտեցումը հաստատվեց գերմանացի գիտնական, իրավաբանական պատմական դպրոցի հիմնադիր Ֆ. Սավինիի կողմից: Առաջին քայլը իրավական նոր ուսումնասիրությունների և դասագրքերի հրատարակումն էր, որոնք կարող էին փոխարինել «անհոգի, մեխանիկական և անտանելի» հրատարակություններին: Եվ միայն դրանից հետո հնարավոր եղավ, այս հիմքի վրա, անցնել նոր օրենքների ստեղծմանը, իսկ հետագայում՝ կոդավորված ակտերի ստեղծմանը: Ֆ. Սավինիի բողոքը ընդունվեց ոչ միայն Գերմանիայում, այլև շատ այլ երկրներում՝ Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Հոլանդիայում, Իտալիայում և Ռուսաստանում, որոնք սկսել էին դատական կարևոր բարեփոխումներ³: Նրանք շատ առումներով համապատասխանում էին ոչ միայն այն ժամանակվա գիտական տեսակետներին, այլև արդարադատության վերաբերյալ հասարակ մարդկանց պատկերացումներին:

19-րդ և 20-րդ դարի առաջին կեսերին գերակշռում էր արդարադատության պատժիչ դոկտրինը, որում հիմնական շեշտը դրվում էր

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 130 2022

¹ Տե՛ս Մոնտեսքյե Ս. Օ духе законов. М., 1999. С. 80-81

² Տե՛ս Берк Э. В защиту естественного общества, или обозрение бед и несчастий, приходящихся на долю человечества в любого рода искусственно созданном обществе // Берк Э. Правление, политика и общество. М., 2001. С. 120

³ Տե՛ս Savigny F.C. The Vocation of Our Age for Legislation and Jurisprudence. Birmingham, 1986. Էջ 150

անօրինական գործողությունների կամ անգործության համար պատժի անխուսափելիության վրա: XX դարի երկրորդ կեսից ամենաազդեցիկն էին ինտեգրալ և բաշխիչ արդարադատության դոկտրինները: Ինտեգրալ արդարադատությունը ձգտում է յուրաքանչյուրին տալ այն, ինչին նա արժանի է, կամ տալ այն, ինչի իրավունքը նա ունի: Բաշխիչ արդարադատությունը ձգտում է պատիժներն ու պարգևները հավասարաչափ բաշխել՝ հաշվի առնելով առկա փաստերն ու հանգամանքները:

Արդարադատության այլ դոկտրինները հիմնավորված են իրավագիտության մեջ: Իսլամական աշխարհում դեռևս մշակվում էր աստվածային արդարության դոկտրինը, որը պահանջում էր շարիաթի նորմերին խստորեն հետևել և հաստատել Աստծո կամքը յուրաքանչյուր դատական որոշման մեջ: Հինդուիստական և բուդդայական օրենքներում արդարադատությունն ընկալվում է որպես դատարանի առջև բոլորի կարմայի համարժեք հատուցում:

20-րդ դարի երկրորդ կեսերին նոր դոկտորիններ են ի հայտ գալիս: Օրինակ, նշանավոր ռուս իրավաբան տեսաբան Վ.Վ. Լազարևը մշակեց մի դոկտրին, ըստ որի արդարադատությունը մեկնաբանվում է որպես պետության կողմից մատուցվող ծառայությունների տեսակներից մեկը⁴: Հիմնավորման մեջ, մասնավորապես, նշվում էր, որ դատարանները պետք է «լուծեն կոնկրետ գործեր՝ հաշվի առնելով վիճող կողմերի շահերը, կշռադատելով նրանց շահերը, նշելով տվյալ շրջանակում գտնվող նորմերը և այլն», որը պահանջում է շեշտադրումների անցում նյութական իրավունքից ընթացակարգային իրավունքի:

Գոյություն ունեցող դոկտորինների բազմազանությամբ, այս դոկտրիններում կարելի է առանձնացնել արդարադատության հետևյալ հիմնական բնութագրերը.

- արդարադատության իրականացումը միայն դատարանի կողմից՝ սահմանված իրավասությանը համապատասխան, տվյալ ժամկետում և օրենքով սահմանված կանոններին համապատասխան,

- անկախ և անաչառ դատավորների կողմից դատական գործերի քննարկումը,
- ճշմարտության հաստատում,
- արդարություն,
- անհատի իրավունքների և ազատությունների պաշտպանություն,
- օրենքի առջև բոլորի հավասարությունը,
- հակամարտության կարգավորում,
- դատական գործընթացների հրապարակայնություն,
- դատական պաշտպանության իրավունք,
- մրցունակություն,
- արդարության անխուսափելիությունը,
- ողորմություն,
- դատարանների որոշումների հիմնավորումը սահմանադրության, օրենքների և դատական նախադեպերի նորմերով: Այս բնութագրիչներից շատերն արտացոլված են սահմանադրություններում:

Շատ սահմանադրություններ չեն նշում կամ չեն կարգավորում արդարադատության խնդիրները՝ սահմանափակվելով դատական համակարգի կազմակերպման, դատավորների նշանակման կամ ընտրության կարգի, դատական գործընթացների և անհատական դատավարական իրավունքների վերաբերյալ կանոնների սահմանմամբ: Սահմանադրական կարգավորման այս մոդելը գործում է Ավստրալիայում, Ավստրիայում, Ալբանիայում, Արգենտինայում, Աֆղանստանում, Բահրեյնում, Բելառուսում, Բելգիայում, Բրազիլիայում, Ինդոնեզիայում, Իրաքում, Իսլանդիայում, Չինաստանում և մի շարք այլ պետություններում⁵:

Դատական իշխանության հեղինակությունը կապված է նաև նրա ակտերի անհապաղ կատարման և դրանք որպես իրավունքի աղբյուր ճանաչելու հետ:

Օրինակ՝ սահմանադրական արդարադատության ակտերն իրավունքի աղբյուրներ ճանաչելու խնդիրը որոշվում է այդ ակտերին ներհատուկ կերպով բնորոշ իրենց՝ սահմանադրական և իրավական բնույթի իրավական հատկություններով: Ի վերջո, բանն այն է, որ սահմանադրական արդարադատության մարմին-

⁴ Տե՛ս Լազարև В.В., Избранные труды. Т. 1. М., 2010. С. 646

⁵ Տե՛ս Хрестоматия по истории отечественного государства и права. М., 2003. С. 299

ների որոշումները, «պարուրելով» սահմանադրությունը, դրա հետ միասին կազմում են իրավունքի սահմանադրական աղբյուրների հատուկ տեսակ, որը գոյություն ունի օրենքների, ենթաօրենսդրական ակտերի, դատական պրակտիկայի և իրավունքի այլ տեսակների հետ:

Սահմանադրական արդարադատության օրինաստեղծ ներուժի մասին թեզի հիմնական հակափաստարկը Գ.Քելսենի արտահայտած դիրքորոշումն է, ըստ որի՝ իշխանությունների տարանջատման համակարգում դատարանը նպատակ չունի ստեղծելու իրավունքի գերակայություն: Այս մոտեցումը դժվար թե համապատասխանի այսօրվա իրավական իրողություններին, ինչը հաստատվում է գործադիր իշխանությունների, այդ թվում, այսպես կոչված, պատվիրակված օրենսդրության կողմից կանոնների ստեղծման գործառույթի ճանաչումով: Համաշխարհային սահմանադրական պրակտիկայի համատեքստում պետք է գնահատել նաև Սահմանադրական դատարանի ազդեցության բնույթը օրինաստեղծ գործընթացի վրա: Իհարկե, Սահմանադրական դատարանի դերը օրինաստեղծման գործում բավականին կոնկրետ է, ինչը բացատրվում է նրա իրավասության բնույթով, ինչը հուշում է, որ այս պետական իշխանության նպատակն առաջին հերթին սահմանադրական նորմերի կիրառումն է, դրանց մեկնաբանությունը, այդ թվում՝ ստուգված համակարգային հարաբերություններում և ոլորտային օրենսդրության այլ նորմերում:

Սրա հիման վրա որոշ հեղինակներ եզրակացնում են, որ Սահմանադրական դատարանը չի ստեղծում նոր նորմեր, այլ հանդես է գալիս որպես յուրօրինակ «իրավական համակարգի իրավական խստության պահապան, ինստիտուտ, որը որոշ չափով զսպում և կարգապահության է ենթարկում օրենսդիր և գործադիր իշխանություններին և իրենց օրինաստեղծ գործունեությունը», կատարում է դատական մարմնի համար ավանդական արբիտրի գոր-

ծառույթը, «ընդլայնում կամ պարզաբանում է Սահմանադրությամբ ձևակերպված նորմատիվ կառույցի բովանդակությունը՝ ելնելով դրա տառից և իմաստից՝ առավել ճշգրիտ ըմբռնում և միասնական կիրառություն ապահովելու նպատակով մեկնաբանում սահմանադրական դրույթը»⁶:

Արդյունքում, Սահմանադրական դատարանի որոշումները դիտարկվում են միայն որպես սահմանադրական իրավունքի գիտության աղբյուր, որը չունի իրավական նորմատիվության հատկություններ⁷: Միևնույն ժամանակ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի գործունեությունը նշանակալի դեր է խաղում ոչ միայն սահմանադրաիրավական գիտության զարգացման, այլև սահմանադրական օրենսդրության ձևավորման և զարգացման գործում:

Ոլորտային օրենսդրության նորմերի սահմանադրականությունը գնահատելիս անհրաժեշտ է համապատասխան հարցերը լուծել ոչ միայն գոյության, այլև անելիքների տեսանկյունից՝ առաջնորդվելով առաջին հերթին սահմանադրական սկզբունքներով և արժեքներով՝ որպես ոչ միայն ֆորմալ իրավական, այլև քաղաքական, բարոյական էթիկական հրամայականների կրողներ: Այս առումով Սահմանադրական դատարանի որոշումները սահմանադրական իրավունքի անվերապահ աղբյուր են, դրանք ունեն սահմանադրական բնույթ իրենց առանձնահատկություններով (անկախ սահմանադրական վերահսկողության առարկայից) և այս կարգավիճակում միշտ գտնվում են միասնության մեջ և, ինչը շատ կարևոր է, Սահմանադրության հետ կազմում են միասնություն՝ սահմանադրական աղբյուրների իրավունքները:

Մյուս կողմից, Սահմանադրական դատարանի որոշումները կարող են միաժամանակ (հաշվի առնելով կոնկրետ գործով քննության առարկան) սոցիալական, տնտեսական, իրավապահ և այլ ոլորտներում առավել կոնկրետ հարաբերությունների ոլորտային օրենսդրական կարգավորման աղբյուրներ հանդիսանալ:

⁶ Sfin Verещагин, А. Н. Судебное правотворчество в России. Сравнительно-правовые аспекты / А. Н. Верещагин. - М.: Международные отношения, 2004, с. 85

⁷ Sfin Богданова, Н.А. Конституционный Суд РФ в системе конституционного права / Н. А. Богданова // ВКС РФ. - 1997. - № 3. - С. 64

Այսպիսով, սահմանադրական արդարադատության ակտերը, այսպես ասած, «կապ» են դառնում փաստացի սահմանադրաիրավական նորմերին և ոլորտային օրենսդրության նորմերի միջև, ստեղծում նորմատիվային միասնություն՝ հիմնված գործի քննության ընթացքում բացահայտված օբյեկտիվ հարաբերությունների վրա, սահմանադրական և ոլորտային իրավահարաբերությունների միահյուսում: Նման միասնության հիմքը Սահմանադրական դատարանի կողմից բացահայտված սահմանադրական արժեքների հավասարակշռությունն է, որն իր հերթին նպաստում է ոչ միայն ոլորտային օրենսդրության, այլև սոցիալական իրականության համապատասխան ոլորտի սահմանադրականացմանը:

Իր կոնկրետ դրսևորմամբ դա ապահովվում է հասարակության և պետության իրավական զարգացման վրա սահմանադրական արդարադատության ազդեցության տարբեր ձևեր: Նրանցից յուրաքանչյուրը յուրովի արտացոլում է նորմատիվ-դոկտրինային սկզբունքները սահմանադրական նորմերի, սկզբունքների և արժեքների ներթափանցման գործընթացում ոլորտային օրենսդրության տառին և ոգուն: Ըստ այդմ, կարելի է խոսել նորմատիվ կամ դոկտրինալ սկզբունքների այս կամ այն կերպ գերակշռող նշանակության մասին, ինչը, սակայն, ի վերջո չի բացառում դրանց դրսևորումը միասնության մեջ:

Սա, առաջին հերթին, ոլորտային օրենսդրության որոշակի կատեգորիաների և ինստիտուտների նորմատիվային բովանդակության սահմանադրական և մեկնաբանական հիմնավորումն է, սահմանադրական նոր կատեգորիաների և հասկացությունների ներդրումը ռուսական սահմանադրականության տեսության և պրակտիկայի մեջ: Ակնհայտ է, որ այստեղ շատ հստակ դրսևորվում է նորմատիվության և դավանաբանական սահմանադրական սկզբունքների ինտեգրումը: Երրորդ, նորմատիվ և դոկտրինալ սկզբունքներն առկա են օրենսդրական կարգավորման կոնկրետ ոլորտներում սահմանադրական բովանդակության բացահայտման և համապատասխանաբար, ոլորտային իրավահարաբերություններում սահ-

մանադրական սկզբունքների «ներկայության» ընդլայնման գործընթացում:

Չորրորդ՝ ոլորտային օրենսդրության վրա սահմանադրական արդարադատության նորմատիվային և իրավանաբանական ազդեցության շրջանակներում ապահովվում է ոլորտային կարգավորման համապատասխան ոլորտում առաջացող իրավահարաբերությունների սուբյեկտների իրավական (հատուկ) կարգավիճակի սահմանադրականացումը: Քաղաքացիները և իրավաբանական անձինք, ձեռք բերելով բաժնետոմսեր և կատարելով իրենց գույքի տնօրինման ակտը, ձեռք են բերում նաև որոշակի գույքային իրավունքներ բաժնետիրական ընկերության նկատմամբ՝ մասնակցում շահույթի բաշխմանը, ստանում գույքի մի մասը, ընկերության լուծարում և այլն: Հինգերորդ՝ սահմանադրական արդարադատության իրականացման իրավասությունների շրջանակներում ազգային իրավական համակարգ են ներմուծվում միջազգային իրավունքի նորմերը և սկզբունքները, ինչի արդյունքում ավելանում է նաև նորմատիվային և սահմանադրական - ազգային իրավական կարգավորման դոկտրինալ ներուժը⁸:

Իրավական դիրքորոշումները նորմատիվ և դոկտրինալ սկզբունքների կենտրոնացված արտացոլումն են որոշումներում: Ի վերջո, իրավական դիրքորոշումներն են, որ մի կողմից Սահմանադրական դատարանի որոշումներին տալիս են իրավունքի աղբյուրների իրավական (նորմատիվային և իրավական) որակներ, իսկ մյուս կողմից՝ կանխորոշում են այս տեսակի սահմանադրական և իրավանաբանական բնույթը և իրավական աղբյուրները, որոնք երբեմն մեզ համար իրավական կյանքի այս նոր երևույթի առանձնահատկությունները ոչ բավարար հաշվի առնելով, դառնում են դատական ակտերի այս տեսակի իրավունքի աղբյուրներին օրինականության վերաբերյալ կասկածների պատճառ: Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումն արտացոլում է ընդունված որոշման էությունը, նորմատիվ-դոկտրինալ էությունը:

Սակայն իրավունքի աղբյուրը ոչ թե բուն իրավական դիրքորոշումն է, այլ Սահմանադ-

⁸ Стів Капустин А. Я. Международное право и вызовы XXI века // Журнал российского права. 2014. № 7. С. 16

րական դատարանի որոշումը, որում այն ձևակերպված է: Այս հողվածի հեղինակի համար այս մոտեցումը հետևանք էր ավելի վաղ աշխատություններում ներկայացված սեփական դիրքի ճշգրտման, զարգացման: Հարցերը, թե ո՞րն է Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, ինչպե՞ս կարելի է «քաղել» դրա նորմատիվ-դոկտրինալ համարժեքը ՍԴ որոշումից, ունեն ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն: Սահմանադրական դատարանի ցանկացած որոշման իրական իմաստի և դրա իրավական դիրքի բացահայտումն անհնար է առանց հաշվի առնելու այն փաստը, որ որոշումը՝ որպես իրավունքի նորմատիվ դավանաբանական աղբյուր, սահմանադրական արդարադատության միասնական, անբաժանելի ակտ է, որի ներքին կառուցվածքն ու բովանդակությունը ենթարկվում են հայեցակարգային-տեսական և սահմանադրական-իրավական փաստարկների և փաստարկների տրամաբանությանը, որոնք նշանակալի են կոնկրետ գործի շրջանակներում վիճարկվող իրավական նորմերի գնահատման համար:

Համապատասխանաբար, կարելի է առանձնացնել Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների հիմնական բնութագրերը՝ որպես Դատարանի որոշումների նորմատիվ և դավանաբանական սկզբունքների խիստ յուրօրինակ կրողներ: Այսպիսով, իրավական դիրքերում դրսևորվում է դրանց հայեցակարգային բնույթը, ինչի կապակցությամբ ոչ միայն պատասխան է տրվում կոնկրետ իրավական նորմի («այո»- «ոչ» սկզբունքի համաձայն) սահմանադրականության մասին, այլև դոկտրինալ⁹: Դրա մակարդակի, սահմանադրական և իրավական որոշումների վերաբերյալ առաջարկվող խնդիրներ են, որոնք քննարկվում են Սահմանադրական դատարանի կողմից: Մինևս ժամանակ, պետք է ուշադրություն դարձնել իրավական դիրքերի այնպիսի

հատկությանը, ինչպիսին է դրանց օրինակաչության պարտադիր լինելը:

Իրոք, Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների ընդհանուր գանգվածում հնարավոր է կառուցել որոշակի հիերարխիկ համակարգ, որտեղ առաջնահերթությունը, ինչպես նշվեց, պատկանում է Սահմանադրության մեկնաբանման իրավական դիրքորոշումներին: Իրավական ուժի առումով դրանք իրականում Սահմանադրության հետ նույն մակարդակի վրա են: Իրավական դիրքորոշումների իրավական պարտավորեցումը տարածվում է նաև Սահմանադրական դատարանի վրա: Սակայն դա չի նշանակում, որ իրավական դիրքորոշումները չեն կարող հստակեցվել¹⁰:

Պրակտիկան ցույց է տալիս, որ մի շարք օրենսդրական դրույթների սահմանադրական իմաստը բացահայտելիս իրավական դիրքերը խորանում և հարստանում են: Իրավաբանական դիրքորոշումների վերջնական և ընդհանրացնող բնույթը նույնպես ներկայացնում է դրանց կարևոր առանձնահատկությունը: Դրանք ընկած են Սահմանադրական դատարանի որոշումների հիմքում, թեև իրենց ծավալով որոշումների (որոշումների, վճիռների) բովանդակությունը նկատելիորեն ավելի լայն է, հարուստ և չի սահմանափակվում միայն դրանցում ձևակերպված իրավական դիրքորոշումներով: Իրավական դիրքորոշումները որոշում են Սահմանադրական դատարանի որոշումների ներքին իմաստը, կազմում են դատարանի ընդունված որոշման իրավական ուղղությունը սահմանադրական վերանայման կարգով: Սրա հետ է կապված նաև իրավական դիրքորոշումների գնահատողական, արժեքային բնույթը, որտեղ արտահայտված է Սահմանադրական դատարանի վերաբերմունքը կոնկրետ իրավական նորմի նկատմամբ, որը հարցման առարկա է հանդիսանում:

⁹ Sեն Толстых В. Л. Формирование системы международного правосудия и ее основные характеристики // Российский юридический журнал. 2011. № 1. С. 62

¹⁰ Sեն Хабриева Т. Я. Конституционные модели и основные этапы конституционного развития // Журнал зарубежного законодательства и сравнительного правоведения. 2005. № 1. С. 3

ՕԲՅԵԿՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԸՆԿՎԼՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈԽՅԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՈՒՋ

Սուբյեկտի մասին փիլիսոփայական ուսմունքն արդիական էր մտածողության արևմտաեվրոպական հարացույցի շրջանակներում: Չնայած, որ հին հունական միտքը նույնպես մշտապես դիմում էր սուբյեկտի թեմատիկային, սուբյեկտի ժամանակակից փիլիսոփայական հայեցակարգը չի հանդիսանում հին հունական փիլիսոփայության գաղափարների օրգանական զարգացում¹: Սուբյեկտի ժամանակակից հասկացությունը հանդիսանում է արևմտաեվրոպական գիտական մտքի արդյունքը: Սուբյեկտի հասկացության ձևավորման գործում առաջատար դեր է խաղացել արևմտաեվրոպական կրոնական փիլիսոփայությունը: Սուբյեկտի ժամանակակից հասկացության ստեղծման ժամանակ որպես ելակետ ծառայել է կամքի ազատության հիմնախնդիրը: Արևմտաեվրոպական փիլիսոփայության շրջանակներում ձևավորված սուբյեկտի հայեցակարգը թույլ տվեց պատկերացնել մարդուն իբրև ազատ կամքի ու շահի կրողի, իսկ վերջին հաշվով՝ նաև իբրև մեղսագրման սուբյեկտի: Սուբյեկտի հանդեպ այդպիսի մոտեցումը իրավագիտությանը հնարավորություն ընձեռեց ձևավորել սուբյեկտիվ իրավունքի մասին ուսմունքն ու իրավաբանական պատասխանատվության մասին հայեցակարգը:

XIX դարի իրավական մտքի և իրավագիտության մեջ գոյություն ունեցած սուբյեկտիվ իրավունքի մասին ուսմունքները կարելի է համակարգել հինգ խմբերով՝ կամային տեսություն, շահի տեսություն, կոմբինացիոն տեսություն, հոգեբանական տեսություն, նորմատիվիստական տեսություն²: Իրավագիտության մեջ առկա՝ սուբյեկտիվ իրավունքի բոլոր տեսությունների բաժանումը բնական-իրավական և պոզիտիվիստական տեսությունների, մեթոդաբանորեն անհիմն է:

Սուբյեկտիվ իրավունքի բոլոր տեսությունները, որոնք գոյություն են ունեցել XIX դարի իրավագիտության մեջ (բացի նորմատիվիստականից) չեն ըմբռնում օբյեկտիվ իրավունքի՝ սուբյեկտիվի նկատմամբ առաջնահերթության գաղափարը: Ընդհակառակը, դիտվում է միտքն այն մասին, որ օբյեկտիվ իրավունքը կյանք է տալիս սուբյեկտիվ իրավունքին, պետության հարկադրական իշխանությունը հենց միանում է անհատի կամքին: Սուբյեկտիվ իրավունքի ծառայողական դերը օբյեկտիվի հանդեպ լիովին հաստատվում է միայն իրավունքի նորմատիվիստական հայեցակարգով: XIX դարի իրավական միտքը ճանաչում էր միասնական հասկացություն օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքի համար:

XIX դարի իրավագիտությանը բնորոշ է, որ էապես սուբյեկտիվ իրավունքը լցվում է կամքով և (կամ) շահով: Բացառություն է կազմում միայն նորմատիվիստական տեսությունը, որը սուբյեկտիվ իրավունքում տեսնում էր օբյեկտիվ իրավական նորմի կարգադրությունների մարմնավորման գործիքը: Կամային տեսության, շահի տեսության, կոմբինացիոն և հոգեբանական տեսություններին բնորոշ է սուբյեկտիվ իրավունքի դուրսբերումը ոչ թե օբյեկտիվ նորմից, այլ բուն սուբյեկտից, նրա կամքից ու շահից:

Իրավունքի մասին Ա. Ի. Պետրաժիցկու ուսմունքը հարկավոր է դիտարկել իբրև սուբյեկտիվ իրավունքի առանձին հոգեբանական տեսություն: Սակայն ի տարբերություն բոլոր այլ տեսություններից՝ իրավունքի հոգեբանական հայեցակարգը սուբյեկտիվ իրավունքը հասկանում է արդեն ոչ թե իբրև իրավական նյութի մաս, այլ իբրև դրա միակ մարմնավորում: Ուստի Լ. Ի. Պետրաժիցկու ուսմունքի ա-

¹ Տեն Ներսեսյանց Վ.Ս. Իրավագիտություն: Երևան, 2002:

² Տեն Ներսեսյանց Վ.Ս. Իրավունքի և պետության տեսություն: Երևան, 2001:

ռանձնահատկությունն է սուբյեկտիվ և օբյեկտիվ իրավունքի հստակ սահմանված հարաբերակցության բացակայությունը³:

«Սուբյեկտիվ իրավունք» կատեգորիայի զարգացման խորհրդային փուլին բնորոշ էին հետևյալ մոտեցումները՝ 1) սուբյեկտիվ իրավունքը հնարավոր վարքագծի չափ է՝ օբյեկտիվ իրավունքով սահմանված շրջանակներում, 2) սուբյեկտիվ իրավունքը երկրորդական է օբյեկտիվի հանդեպ և կատարում է ծառայողական գործողություն: Սուբյեկտիվ իրավունքի նախկինում գոյություն ունեցած տեսությունների ողջ բազմազանությունից ճանաչում է ստացել նորմատիվիստական տեսությունը: Միասնական հասկացությունն օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքի համար մերժվում էր խորհրդային իրավագիտության կողմից՝ իբրև մեթոդաբանական առումով չհիմնավորված: Սուբյեկտիվ իրավունքի էական բնութագրերը այժմ հետևյալն են՝ ընդհանուր առմամբ դա հասարակական կամք է և հասարակական շահ, մասնավորապես բարիք, որը ձեռք է բերվում անհատի կողմից սուբյեկտիվ իրավունքի օգտագործման ժամանակ: Այդպիսի մոտեցման ժամանակ կամքն ու շահը չեն կարող կատարել սուբյեկտիվ իրավունքի էության դերը, ինչպես դա պնդում էին սուբյեկտիվ իրավունքի որոշ տեսությունները:

Խորհրդային իրավագետների կողմից առաջադրված «սուբյեկտիվ իրավունք՝ օբյեկտիվ իրավունքի կողմից սահմանված սահմաններում հնարավոր վարքագծի չափ» և «սուբյեկտիվ իրավունքն ածանցյալ է օբյեկտիվ իրավունքից» թեզերը պահպանեցին իրենց գերիշխող դիրքը ժամանակակից իրավագիտության մեջ⁴: Ժամանակակից իրավագիտության կողմից առանձնացվող սուբյեկտիվ իրավունքի հատկանիշները (պատկանելությունը կամ չպատկանելությունը սուբյեկտին, դրանից կախվածություն կամ կախված չլինելը) նպատակահարմար չէ դիտարկել իբրև միմյանց հավասարազոր, քանի որ դրանցից մեկը (պատկանելիությունը) բխում է մյուսից (կախվածություն), իսկ ավելի ճիշտ՝ մեկն ուղեկցում է մյուսը:

Այսպիսով, սուբյեկտիվ իրավունքի բնու-

թագիրն իբրև սուբյեկտից կախվածի՝ իրավաչափ է միայն սուբյեկտի կողմից իրեն օբյեկտիվ նորմայով առաջարկվող վարքագծի տարբերակներից ընտրության հնարավորության իմաստով: Սուբյեկտիվ իրավունքի հատկանիշները, որոնք առանձնացվում են ժամանակակից իրավագիտության կողմից՝ խորհրդային իրավագիտության դիրքերից, չեն բացահայտում սուբյեկտիվ իրավունքի իսկական էությունը, այլ մատնանշում են միայն վերջինի գործիքային դերն օբյեկտիվ նորմի նկատմամբ, ինչը, իր հերթին, հանդիսանում է այսօր գերիշխող իրավունքի հանդեպ նորմատիվիստական մոտեցման հետևանքը: Տվյալ պայմաններում սուբյեկտիվ իրավունքը՝ ազատության, դիսպոզիտիվության հատկանիշներով օժտելն արդարացված չէ: Սուբյեկտիվ իրավունքի նախահեղափոխական մեկնաբանությունների և դրա այսօրվա ընկալման միջև տարբերությունն էական ու հայեցակարգային է: Ընդ որում, խոսքը գնում է ոչ թե նախահեղափոխական պատկերացումների հաջորդական զարգացման և խորհրդային իրավագիտության մեջ դրանց վերափոխման մասին, այլ, ավելի շուտ հաջորդականության խաթարման մասին:

Սուբյեկտիվ իրավունքի էությունը վերանայվել է պետության և հասարակության միջև հարաբերակցության փոփոխության ազդեցության ներքո: Պետական իշխանության ուժեղացումը պայմանավորել է սուբյեկտիվ իրավունքի օգտագործումն իբրև իրավական վարքագծի նորմավորման գծով գործիք: Տվյալ հանգամանքը հաշվի առնել անհրաժեշտ է սուբյեկտիվ իրավունքի սահմանման ձևակերպման ժամանակ:

«Սուբյեկտիվ իրավունք» և «սուբյեկտիվ իրավունքներ» հասկացությունները գտնվում են տարբեր իմաստային հարթություններում: Այն է «սուբյեկտիվ իրավունք» եզրույթն ավելի նպատակահարմար է սահմանել «օբյեկտիվ իրավունք - սուբյեկտիվ իրավունք» համակարգի շրջանակներում: «Սուբյեկտիվ իրավունքներ» հասկացությունը ենթադրում է իրավահարաբերության սուբյեկտի մոտ առկա հստակ իրավասությունների լուսաբանումը, այն է՝ տե-

³ Տե՛ս Петражицкий Л.И. Теория права и государства в связи с теорией нравственности. СПб, 2000:

⁴ Տե՛ս Теория государства и права. М., 1985:

ղափոխել ողջ դիսկուրսը «իրավահարաբերություն», «իրավական կարգավորման մեխանիզմ» ոլորտ: Դրանից հետո, երբ «սուբյեկտիվ իրավունքը» փոխարինվում է «սուբյեկտիվ իրավունքներ» կատեգորիայով, արդեն դժվար է վիճարկել, վիճելի եզրույթը սուբյեկտիվ իրավունքի՝ օբյեկտիվ իրավունքի հանդեպ երկրորդական լինելու մասին:

Անհրաժեշտ է հստակ տարբերակել սուբյեկտիվ իրավունքի՝ իբրև համատեսական կատեգորիայի կառուցվածքը և սուբյեկտիվ իրավունքի՝ իրավունքի որևէ կատեգորիայի հանդեպ կիրառվող կառուցվածքը: Սուբյեկտիվ իրավունքի համատեսական եռանդամ կառուցվածքը չպետք է փոխարինվի իրավահարաբերության սուբյեկտի իրավագործությունների հանրագումարով:

Պաշտպանության իրավունքն անհրաժեշտ է դիտարկել որպես սուբյեկտիվ իրավունքի լիարժեք կառուցվածքային տարր: Տվյալ իրավասությունը, ներառված լինելով սուբյեկտիվ իրավունքի համատեսական կատեգորիայի մեջ, խորհրդանշում է պաշտպանվածության որակը, պետության մշտական պատրաստականությունն օգտագործելու դրա հարկադրանքի ուժը՝ խախտված իրավունքի վերականգնման համար: Հավակնության իրավունքը կայանում է հենց պետական հարկադրանքի ապարատը գործի դնելու հնարավորության մեջ: Համատեսական մոդելը չի ենթադրում պաշտպանության իրավունքի հանգեցումը որոշակի իրավասությունների հավաքածուին՝ թվարկելով դրանց թղթակցող իրավաբանական պարտականությունները:

